

Հ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ս. Ա. ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

Մ Ա Ն Ե Ս Ա Տ Ի Կ Ա Յ Գ Զ Է

Ի Ս

Կ Յ Բ Ո Ւ Բ Ե Ն Ը

Մ Ա Ս 1



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հ.Ս.      ՉԻՔՈՒԽՉՅԱՆ Ս.Ա.

Մ  
Ա  
Թ  
Ն  
Ս  
Ա  
Տ  
Ի  
Կ  
Կ  
Ա  
Յ  
Բ  
ՈՒ  
Բ  
Ե  
Ն  
Ը  
Կ  
Յ

**ԻՄ**

**ԱՅԲՈՒԲԵՆԸ**

ՈՒՍՈՒՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

I ՄԱՍ

ԵՐԵՎԱՆ  
ՀԵՆՐԻԿՍԻԱՆ ՀՐԱՏԱՐԱՆԿՈՒԹՅՈՒՆ  
2007

ՀՏԴ 373.167.1:51(075):372.8:51

ԳՄԴ 29.1g72+74.262

Հ 422

**Ձեռնարկը երաշխավորված է փպագրության  
«Հ Կրթության և գիտության նախարարության,  
Կրթության ազգային ինստիտուտի կողմից**

Հարությունյան Հ.Ս. Չիբուխյան Ս.Ա.  
Հ 422 «ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԻՄ ԱՅԲՈՒԲԵՆԸ»: Ուսումնամեթոդ. ձեռնարկ.- Եր.:  
Հեղինակային հրատարակություն, 2007.- 151 էջ:

«Մաթեմատիկայի իմ այբուբենը» ուսումնամեթոդական ձեռնարկի առաջին մասը ընդգրկում է «Մեծություն», «Չև», «Տարածության մեջ կողմնորոշում» և «Ժամանակի մեջ կողմնորոշում» բաժինները, որոնց նպատակը երեքից վեց տարեկան երեխաների ակտիվ գործընթացը առավել հետաքրքիր և մատչելի դարձնելն է:

Դիմել ենք երեխաների մեջ տարրական մաթեմատիկական հասկացությունների վերաբերյալ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ մշակելու և զարգացնելու ամենաարդյունավետ ձևին՝ խաղին: Խաղերը տարբեր են՝ դիդակտիկ և զարգացնող՝ ելնելով երեխայի տարիքային առանձնահատկությունից և առաջադրվող թեմայի պահանջներից: Դրանք ընդգրկում են օրինակներ առարկաների դասակարգման վերաբերյալ՝ ըստ չափի, ձևի, օրինաչափությունների: Կան նաև հետաքրքրաշարժ հարցեր, հանելուկներ, կատակ-խնդիրներ, որոնք երեխաներին կուղղորդեն ինքնուրույն վերլուծությունների շնորհիվ «հայտնագործություններ» կատարել:

Հաշվի առնելով ուսուցման հաջորդականության և զարգացնող սկզբունքները՝ նյութերը մատուցվում են պարզից բարդ, հեշտից դժվար, կոնկրետից վերացական հերթականությամբ:

Գրքում զետեղված առաջադրանքները մատուցվում են ուղեցույց-մեկնաբանություններով:  
Քանի որ ձեռնարկը նախատեսված է ծնողների, նախադպրոցական հիմնարկների դաստիարակների, կրտսեր դպրոցի ուսուցիչների համար, ուստի հաշվի ենք առել հոգեբանական հարմարվողականությունը բոլորի համար՝ ապահովելով վստահության մթնոլորտ:

ԳՄԴ 29.1g72+74.262

ISBN 978-99930-4-984-5

© Հ.Ս.Հարությունյան, Ս.Ա.Չիբուխյան, 2007

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շատ հաճախ մենք համոզված ենք, որ եթե երեխան գիտի հաշվել մինչև 10-ը, ավելի շուտ՝ մինչև 100-ը, ապա I դասարանում նա մաթեմատիկայից դժվարություն չի ունենա: Բայց լինում է այնպես, որ գնալով դպրոց, աստիճանաբար իջնում է նրա առաջադիմությունը: Անկասկած շատ ծնողներ հասկանում են, որ դպրոցամուտը հետաքրքիր և դժվար փորձություն է երեխայի համար և իրենց հնարավորության չափով կցանկանային նախապատրաստել նրան դպրոցին, սակայն խնդիր է առաջանում՝ ինչպես անել այն: Փորձից հայտնի է, որ ծնողների ոչ որակավորված օգնությունը երբեմն երեխային ապակողմնորոշում է և ավելի շատ վնաս է բերում, քան օգնում է: Ուսումնական ձեռնարկի նպատակն է օգնել ծնողներին ու դաստիարակներին ճիշտ կողմնորոշվել և աջակցել նրանց, օգնել իրենց փոքրիկներին տրամաբանված մտածել, վերլուծել, բացահայտել, կատարել պարզ մաթեմատիկական ընդհանրացումներ, ձևավորել ճանաչողական հետաքրքրություն, նոր բան իմանալու ցանկություն և սովորություն:

Կարևոր է սովորեցնել նաև հաղորդակցվել հասակակիցների և մեծահասակների հետ, ընդգրկվել միասնական խաղերի և ընդհանուր գործունեության մեջ:

Այստեղ գետեղված գեղեցիկ և զվարճալի նկարները, տրամաբանական խնդիրները երեխաների մեջ հետաքրքրություն և սեր կարթնացնեն դեպի մաթեմատիկան: Մեկ թեմայով միավորված նկարաշարը հնարավորություն կտա երեխային իր համար աննկատ, առանց վախի ու տարակուսանքի մտնել մաթեմատիկայի աշխարհը:

Ձեռնարկը կազմված է մանկապարտեզում նախադպրոցական երեխաների հետ աշխատանքի փորձի հիման վրա: Գրքի էջերով ձեզ կուղեկցի հետաքրքրասեր Սևակն ջիկը, որը ներկայացնում է գրքի էջերի շարադրանքը:

Ձեռնարկի յուրաքանչյուր բաժնում ընդգրկված են տարբեր բնույթի և բարդության առաջադրանքներ, որոնք ուսուցանվում են պարզից բարդ սկզբունքով: Դրանք հագեցված են ժամանակակից մաթեմատիկայի հետաքրքրաշարժ տարրերով և նպաստում են առարկաների մեծության, հատկանիշների, երկրաչափական ձևերի ծանոթացմանը, ժամանակի զգացողության և տարածական հասկացությունների ճշտմանը: Հիմնական ուշադրությունը հատկացված է ուսումնական գործունեության խթանման միջոցների՝ դիդակտիկ խաղերի, գրավիչ հանձնարարությունների, հուզական, բարոյական, զգացմունքային իրավիճակների ստեղծման վրա: Առաջադրանքները տրված են երեխաների ուժերին համապատասխան՝ ոչ չափազանց դժվար են, ոչ էլ՝ հեշտ: Ձեր երեխայի հետ աշխատելիս դուք կնկատեք՝ ինչն է նրա համար դժվար, ինչը՝ հեշտ և հեմվելով այդ դիտարկումների վրա՝ կփոխեք առաջադրանքը: Առաջարկված նյութերը ամրապնդվել են առօրյայում իրենց շրջապատող առարկաների վերաբերյալ վարժությունների և խաղերի օգնությամբ, որոնց հիմնական ուղղվածությունը ինքնուրույնության ձևավորումն է, տարբեր առարկաներն ինքնուրույն ընկալելու, համեմատելու հիմնական հատկանիշները առանձնացնելու (գույն, ձև, մեծություն) ձևավորումը:

Մի՛ մոռացեք, որ ձեր «պարապմունքները» յուրօրինակ խաղեր են, որոնք պետք է անցկացվեն հետաքրքրությամբ և գրավիչ, զգացմունքային ու ջերմ մթնոլորտում: Պարապմունքները կարելի է անցկացնել ինչպես անհատական, այնպես էլ խմբով: Երկուսի դեպքում էլ երեխան պետք է իմանա.

• Ի՞նչ է անում և ինչո՞ւ:

● Հասկանա՝ ի՞նչ են ակնկալում իրենից:

● Երեխան վստահ լինի, որ մեծահասակը աջակցելու և օգնելու է:

Վարժությունները կատարելիս, չմիջամտելով լսեք երեխայի բոլոր հնարավոր դեպքերում տրված է փակագծերի մեջ: Վարժություններն ամրապնդելիս ուշադրություն տարբերակներ և խաղանյութի ընտրություն կատարել:

Խրախուսեք երեխաների նոր ձեռքբերումները: Հետևեք, որ երեխան չձանձրանա: Եթե երեխան տրամադրված չէ պարապել, մի՛ ստիպեք, հետաձգեք այն ավելի հարմար պահի: Ավելի շատ համբերություն, հումոր և հասկանալու ձգտում. այդ դեպքում բոլոր դժվարությունները կհաղթահարվեն: Կարևորը երեխայի ցանկությունը հաշվի առնելն է և վստահության մթնոլորտ ստեղծելը:

Մինչև առաջադրանքներին անցնելը զրուցեք երեխայի հետ նկարի շուրջը, քննարկեք հանձնարարության կատարման եղանակները և պատմեք: Մի՛ շտապեցրեք նրան, նորից բացատրեք և օգնեք մտածողությունը խթանող հարցերով, որի արդյունքում երեխաները կսկսեն միմյանց հարցեր տալ, կշռադատել նյութը: Միշտ հիշեք, որ բոլոր երեխաները չեն զարգանում նույն տեմպերով: Յուրաքանչյուր երեխա անկրկնելի է և ունի զարգացման իր ուրույն ուղին: Ուշադիր եղեք զրոսանքի ժամանակ, ընտելացրեք ձեզ ամեն ինչին երեխայի աչքերով դիտելուն: Եվ շատ շուտով դուք կզգաք՝ որքան հետաքրքիր է դարձել ձեր հաղորդակցումը նրա հետ, և ինչպես են աճել նրա մաթեմատիկական պատկերացումները:


Մենք հույս ունենք, որ այս ձեռնարկը ինչպես մեծահասակներին, այնպես էլ երեխաներին կպարզի օգտակար և հետաքրքիր շատ պահեր: Չեռնարկի ստեղծմանը իրենց յուրահատուկ մասնակցությունն են ունեցել Արաբկիր համայնքի «Մանկության մոլորակ» թիվ 9 մսուր-մանկապարտեզի երեխաները:


### Պայմանական նշանները՝

 - խորհուրդներ

 - տե՛ս նկարը


 - վարժություն

 - խաղանյութի ստեղծում

 - խաղ


---

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Մ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ՝ վերոհիշյալ չեռնարկին աջակցելու համար



Իմ լավ, փոքրիկ, ուշի՛ն բալիկ,  
Երբ սիրելի մայրիկիդ հետ  
Դուրս ես գալիս գրոսանքի,  
Հայտնվում ես մեծ աշխարհում  
ինչուների  
Ու բազմազան ու բազմաթիվ  
Հարցեր տալիս աշխարհից այդ:  
Մայրիկից դու պատասխան ես  
սպասում սպառիչ,  
Եվ ուզում ես, որ անպայման  
Լավ հասկանաս և ճանաչես  
Շուրջդ եղած ամեն մի իր.  
«Հաստ ու բարակ», «երկար ու կարճ»,  
«Վերև-ներքև», «հեռու-մոտիկ»...  
Թե ինչո՞ւ է օրը մթնում կամ  
լուսանում,  
Ինչո՞ւ ձմեռ, գարուն, ամառ,  
հետո՞ աշուն,  
Ինչն է մեկ հատ և ինչը՝ շատ,  
Հարցեր անթի՛վ, բազմատեսակ:  
Պատասխանը ինչուների կզտնես դու  
Հենց ա՛յս գրքում:

# പട്ടാണി രാമൻ



## ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Ձեր խամբերին ծանոթացնել առարկաների հատկանիշներին՝ համեմատելով ինչպես տարրեր չափի, այնպես էլ միևնույն չափեր ունեցող երկու առարկաներ՝ ըստ երկարության, բարձրության, լայնության, հաստության և մեծության:

Օր.՝ երկար, կարճ, հավասար, միևնույն	երկարություն
բարձր, ցածր, հավասար, միևնույն	բարձրություն
հաստ, բարակ, հավասար, միևնույն	հաստություն
մեծ, փոքր, հավասար, միևնույն	մեծություն

Օգտագործել այնպիսի առարկաներ, որոնց երեխաները մշտապես հանդիպում են՝ ժապավեններ, պարաններ, թղթե գոլակներ, աշտարակներ, խաղալիքներ և այլն

● Սովորեցնել խմբավորել առարկաներն ըստ երկարության, բարձրության, լայնության և այլն: Օր.՝ ըստ երկարության խմբավորելով՝ երեխաները առարկաների մի խմբում տեղավորում են մույն երկարության բոլոր առարկաները՝ ամտեսելով նրանց մյուս հատկանիշները:

● Սովորեցնել մեծության որևէ հատկանիշի համաձայն առարկաները դասավորել աճող և նվազող կարգով: Սովորեցնել հասկանալ հատկանիշի հարաբերականությունը (չարքի յուրաքանչյուր տարրը ավելի մեծ է, քան բոլոր մախորդները և ավելի փոքր՝ քան բոլոր հաջորդները): Օր.՝ կարմիր ժապավենն ավելի երկար է կապույտից, դեղինից, սպիտակից, բայց ավելի կարճ է երկնագույնից և կանաչից:



● Սովորեցնել աչքաչափով գտնել այնպիսի առարկաներ, որոնք մեծ կամ փոքր են մնուշից, ավելի ուշ՝ առարկաներ, որոնք հավասար են մնուշին: Շարքում գտնել ավելորդ առարկան, իսկ պակասը՝ լրացնել:

● Սովորեցնել երեխաներին գնահատել առարկաների չափը՝ ելնելով նրա 2 չափումներից: Մի մատիտը հաստ է, բայց կարճ է, մյուսը՝ բարակ, բայց՝ երկար և այլն:

● Սովորեցնել մեծությունների անմիջական գնահատումից (տեղադրման և մտադրման) անցնել չափման աշխատանքներին, որը հնարավորություն կտա հասկանալ թվի կախվածությունը ընտրված չափից: Հասկանան, որ չափումից ստացված թիվը արտահայտում է ամբողջի հարաբերակցությունը իր մասերին, որ հավասար մեծության առարկաները, միևնույն չափիչով չափելիս, ստանում են միևնույն թիվը, իսկ միևնույն չափիչով անհավասար առարկաները չափելիս ստանում են տարրեր թվեր: Որքան մեծ է առարկան, այնքան մեծ թիվ է ստացվում և՛ հակառակը:

● Առարկաների մեծության մասին երեխաների ունեցած պատկերացումները սխտեմատիկաբար ամրապնդել և կիրառել նրանց գործունեության զանազան ձևերում:





## ՄԵԾ - ՓՈՔՐ

Սովորաբար երեխաները լավ հասկանում են «երկար», «կարճ», «բարձր», «ցածր», «հաստ», «բարակ», «լայն-մեղ», «մեծ-փոքր» բառերի իմաստը, սակայն օգտափոխարինում են «մեծ» բառով, իսկ «կարճ», «մեղ», «ցածր» բառերը՝ «փոքր» բառով:

Այս բառերը ճիշտ հասկանալու համար պետք է սկզբում համեմատել միայն մեկ հատկանիշով իրարից տարբերվող երկու առարկա (չափով, երկարությամբ, լայնությամբ կամ բարձրությամբ): Օրինակ՝ երբ որոշելու եք առարկայի չափը, անհրաժեշտ է խնդրել երեխային մեծ առարկան վերցնել երկու ձեռքով՝ միաժամանակ արտասանելով «Ինչքան մեծ է» կամ ցույց տալ մեծ առարկան՝ երկու ձեռքերը աջ և ձախ տարածելով:

Առարկայի փոքրությունը որոշել՝ մեկ ափի մեջ թաքցնելով այն և միաժամանակ ասելով՝ «Իսկ սա շատ փոքր է, նույնիսկ ափիս մեջ է տեղավորվում և բոլորովին չի երևում, երբ փակում եմ ափս»:

Երեխաների համար ստեղծելով խաղային իրավիճակներ՝ իրենց շրջապատող առարկաների օգնությամբ պետք է սովորեցնել համեմատել երկու առարկաներն իրար վրա դնելու և իրար մոտեցնելու միջոցով: Համեմատել ինչպես հակադիր (մեծ-փոքր, լայն-մեղ, հաստ-բարակ, բարձր-ցածր), այնպես էլ նույն չափի առարկաներ:




Դիտիր նկարը. համեմատիր երկու տարբեր մեծության գնդակները: Երևում է, որ Սևականջն ու մկնիկը որոշել են «պահմտոցի» խաղալ:

- Ինչպիսի՞ գնդակի հետևում է Սևականջը:
- Ինչպիսի՞ գնդակի հետևում է ճստճստան մկնիկը:
- Ի՞նչ կլինի, եթե Սկնիկը հայտնվի մեծ գնդակի հետևում, նրա լայն ու կլոր ականջները և երկար պոչը կթաքնվե՞ն մեծ գնդակի հետևում թաքնվել:
- Ի՞նչ կլինի, եթե Սևականջիկը հայտնվի փոքր գնդակի հետևում:

Այս զվարճալի պատմությունից հետո փորձեք երեխայի հետ խաղալ «պահմտոցի» խաղը և թաքնվել այնտեղ (զգեստապահարան, դռան հետև, մահճակալի տակ...), ուր սիրում է ինքը: Նա ոչ միայն կծիծաղի, կզվարճանա, այլև իսկույն կնկատի ձեզ և կհասկանա, որ դուք երևում եք այն պատճառով, որ մեծ եք և չեք տեղավորվում այնտեղ, որտեղ հանգիստ և աննկատ թաքնվում է ինքը:

Առաջարկեք, որ տուփի մեջ խառը լցված կոճակները բաժանի և դասավորի ըստ նրանց չափի և գույնի: Հասնել նրան, որ երեխան ասի՝ «սրանք կարմիր են և մեծ, իսկ սրանք կապույտ են և փոքր»:

«Մեծ» և «փոքր» բառերը ամրապնդել կարող եք նաև կենդանիների համեմատման ժամանակ: Տրամադրեք նկարներ, որոնցից երեխան ճանաչի, գտնի և անվանի ընտանի կենդանիներն իրենց ձագերով, պարզի նրանց մեծ և փոքր լինելը, օրինակ՝ շուն-լակոտ, էշ-քուռակ, կատու-փիսիկ, այծ-ուլ, խոզ-խոճկոր և այլն:



## ՄԵՇ - ՓՈՒՔԻ

Տե՛ս նկարը: Ամանոր է՝ Աշխարհի բոլոր երեխաների ամենասիրած տոնը: Ահա շնեռ պապը Սոնային տարբեր կոշիկներ է նվեր բերել և դրել տոնածառի տակ, սակայն Սոնան չգիտի, թե կոշիկներից ո՞րն է իրենը: Դրա համար էլ նա մտածկոտ նստել է գորգի վրա:

- Օգնի՛ր նրան մեծ, փոքր և ավելի փոքր կոշիկների միջից գտնել իրենը:

Յո՛ւյց տուր փոքր (մեծ, ավելի մեծ) կոշիկները: Գտնելուց հետո այն վերցրեք շրջանակի մեջ:

Ինչ հերթականությամբ են ձախից աջ դասավորված կոշիկները (մեծից փոքր), իսկ աջից ձախ:

- Ի՞նչ հերթականությամբ են դասավորված տուփերը ներքևից վերև (մեծից փոքր): Իսկ վերևից ներքև: Երջանակի մեջ վերցրեք այն տուփը, որի մեջ դրված են եղել Սոնայի կոշիկները:

- Ասա՛ ի՞նչ չափի խաղալիքներ են կախված տոնածառից (մեծ, փոքր, ավելի փոքր):

☺ Ապա կարող եք խաղալ «Տեղավորի՛ր իրերը» խաղը: Խաղը կարելի է խաղալ մեծից փոքր նմանատիպ առարկաներով՝ ափսեներով, բաժակներով, թասերով, կաթսաներով: Երեխան պետք է համոզվի, որ դրանք կարելի է մեկը մյուսի մեջ դնել՝ միայն սկսելով մեծից մինչև փոքր, իսկ հակառակը լինել չի կարող:

✋ Երեխայի ցանկության դեպքում կարելի է մի թղթի վրա տարբեր մեծության եռանկյունիներից մի քանի եղևնիներ ստանալ, ստանձել և զարդարել նրանք՝ նկարելով կամ փակցնելով նրա ցանկացած կենդանիների պատկերները, որոնք զվարճանում են եղևնու տակ:



⊗ Առաջարկեք հանելուկ. «Կարմիր խնձորը մեծ է դեղինից, դեղինը մեծ է կանաչից»: Ո՞ր խնձորն է ամենափոքրը:




● Խնդրե՛ք, որ եղած երեք տարբեր չափի գնդակներից (խորանարդիկներից, որևէ մրգի տեսակից) վերցնել ոչ մեծը և ոչ էլ փոքրը: Թո՛ւյլ տվեք, որ իր ինքնուրույն տարբերակը ընտրի:

● Խնդրե՛ք երեխային քանդովի խաղալիքները (բաժակներ, թասիկներ, արկղիկներ) դասավորել շարքով և պատմել, թե ինչպես դասավորեց (մեծացո՞ղ, թե՞ փոքրացող հերթականությամբ): Յույց տվեք և անվանեք փոքրը, միջինը և մեծը: Փոքրը թաքցրեք մեծի մեջ: Հարցրե՛ք, թե ինչո՞ւ մեկը թաքնվեց մյուսի մեջ:

☞ Ստեղծեք առօրյա կյանքի այնպիսի իրավիճակներ, որտեղ երեխան պետք է ընտրի և խմբավորի առարկաները: Օրինակ՝ բոլոր մեծ դեղձերը դասավորի՛ր մեծ ափսեյում, իսկ փոքրերը՝ փոքրում: Հաջորդ անգամ առարկաները դասավորեք ըստ գույնի և ձևի:

● Միշտ խնդրեք, որ երեխան կոճկի մեծ, ապա նաև փոքր կոճակներ, իսկ հետո արձակի դրանք:


## ՄԵԾ-ՓՈՔՐ

Դիտե՛ք առաջին նկարը և սունկն ու եղևնին ավելի փոքր չափերով նկարեք սյունակների մեջ: Թող երեխան պատմի յուրաքանչյուր սնկի (եղևնու) չափի (մեծ, փոքր, ավելի փոքր, ամենափոքր) մասին: Երկրորդ նկարում ելակն ու խնձորը նկարեք ավելի մեծ չափերով (մեծ ելակ, ավելի մեծ ելակ, ամենամեծ ելակ): Գունավորե՛ք նկարված պատկերները:

Առաջարկեք երեխային ազատ ուղղանկյան առաջին շարքում նկարել ցանկացած առարկա մեծից փոքր դասավորվածությամբ, իսկ երկրորդ շարքում հակառակը՝ փոքրից մեծ դասավորվածությամբ:

Առաջարկեք նկարել և գունավորել 3 տարբեր չափի փուչիկներ այնպես, որ առաջինը լինի ամենամեծը և կարմիրը, երրորդը լինի ամենափոքրը և կապույտը, իսկ երկրորդը՝ միջին չափի և դեղինը:

Երեխան թող անվանի այնպիսի կենդանիներ, որոնք նապաստակից մեծ են (աղվես, գայլ, արջ, վագր, առյուծ) և այնպիսիք, որ նապաստակից փոքր են (սկյուռ, ոզնի, կրիա):

Երեխայի հետ խաղացեք չորս-հինգ օղակ ունեցող աշտարակով: Խառը դասավորված օղակների միջից երեխան ինքնուրույն պետք է գտնի և դրանք անհրաժեշտ հերթականությամբ (մեծից փոքր) դասավորի ձողի վրա և համոզվի նաև, որ այս դեպքում հակառակ դասավորությամբ աշտարակ կառուցել չի կարող:

Աշխատանքն ավարտելուց հետո խնդրեք, որ նա ձեռքը սահեցնի աշտարակի վրայով և եթե արգելքի չհանդիպի, ուրեմն ճիշտ է դասավորել:

Սեղանին դասավորեք միանման և տարբեր առարկաներ:

Խնդրեք, որ երեխան խաղալիքների միջից գտնի չափով հավասարները, ապա՝ տարբերները:

Հասեք նրան, որ դժվարության հանդիպելիս երեխան դիմի ձեր օգնությանը և բացատրեք, որ մեծերն անգամ դիմում են օգնության հարկ եղած դեպքում:

Տալով երեխային սպիտակ և կանաչ գույնի տարբեր մեծության 3 շրջան՝ խնդրել, որ շրջանները դասավորի այնպես, որ ստացվի ձևնմարդ: Վերջում՝ նկարի դեմքը, գլխարկը: Հարցնել՝ ինչպիսին է ձևնմարդու տրամադրությունը, ի՞նչ է մտածում, Ինչո՞վ է ուզում հիմա զբաղվել:

Տրամադրեք երեխային երեք չափի քարեր (փայտիկներ, խորանարդեր): Սեղանին դրեք ավսեններ՝ մեծ, միջին, փոքր և ըստ հրահանգի՝ պահանջե՛ք, որ երեխան քարերը դնի համապատասխան մեծության ավսեններում (մեծը՝ մեծի, միջինը՝ միջինի, փոքրը՝ փոքրի):

Խաղ խոշորացույցով: Հետազոտում ենք մեր շուրջը գտնվող առարկաները: Վերցրո՛ւ խոշորացույցը և պահի՛ր տարբեր առարկաների վրա: Ի՞նչ բացահայտեցիք: Ի՞նչ է կատարվում առարկաների հետ (մեծանում են, փոքրանում են):



Տե՛ս նկարը. երեխաները, տեսնելով առատ ձյունը, ուրախացած դուրս վազեցին բակ և ձնեմարդկանց ընտանիք ծեփեցին՝ պապիկ, տատիկ և թոռնիկ: Ծեփելիս նրանք շարունակ վիճում էին, թե որ չափի ձնագունդը որ ձնեմարդուն է համապատասխանում: Վերջապես գտան հարմար չափերը, և ձնագունդերը իրար վրա շարեցին մեծից փոքր հերթականությամբ: Գուշակի՛ր՝ ինչպիսի չափեր է ընտրել յուրաքանչյուր ձնեմարդու գլուխը, մարմինը, ոտքերը ծեփելու համար (մեծ, միջին, փոքր):

- Համեմատի՛ր տատիկ, պապիկ, թոռնիկ ձնեմարդկանց հասակները:
- Դրանցից ո՞ւմ հասակն է ամենաբարձրը, միջինը, ցածրը:
- Ո՞ւմ քթիկն է ամենաերկարը (ամենաերկարը, հաստը, բարակը):
- Համեմատի՛ր նրանց աչքերը. ինչո՞վ են տարբերվում իրարից:
- Ինչպիսի՞ դուլեր էին նրանք դրել պապիկի և թոռնիկի գլխին (մեծ, փոքր, լայն, նեղ):

- Պապիկի և թոռնիկի միջև ո՞ր ձնեմարդն է կանգնած:
- Ինչո՞վ է տարբերվում տատիկը պապիկից և թոռնիկից:
- Ինչի՞ մասին են նրանք զրուցում: Մի պատմություն հորինի՛ր:

Թող երեխան յուրացնի, որ կան մեծ, փոքր և միջին մեծության առարկաներ: Որ փոքր առարկան մի դեպքում կարող է լինել մեծ, եթե համեմատվում է իրենից փոքր առարկայի հետ և՛ հակառակը:

Խնդրեք երեխային, որ երեք տարբեր չափի շրջանակներն այնպես դասավորի, որ ստացվի «ձնեմարդ» և նշի, թե ինչ հերթականությամբ այն դասավորեց (մեծից փոքր):

● Հանձնարարե՛ք երեխային հերթականությամբ դասավորի կաթսաները ամենամեծից մինչև ամենափոքրը (ամենալայնից ամենանեղը), ըստ դասավորության անվանի կաթսաների համեմատական մեծությունը, ցույց տա, թե որտեղ է գտնվում նույնպիսի մեծություն ունեցող կաթսա:

Հարցնել.

- Ինչո՞վ են տարբերվում կաթսաները:
- Ի՞նչ կարելի է ասել առաջին կաթսայի մեծության մասին. ինչո՞ւ այն համարեցիր ամենամեծը:

- Ո՞րերորդն է ամենափոքր կաթսան, նա ո՞ր կաթսաներից է փոքր:

- Իսկ առաջինը ո՞ր կաթսաներից է մեծ...

● Հանձնարարե՛լ երեխային պարանները դասավորել շարքով՝ ըստ հերթականության՝ ամենահաստից մինչև ամենաբարակը (ամենաերկարից ամենակարճը):




Երեխային առաջարկել, որ, նախքան կոնկրետ գործողություններին անցնելը, ենթադրություններ անի, պլանավորի գործողությունները:

- Երեխայի ենթադրությունների ճշտությունը ստուգել հետևյալ հարցերի միջոցով.
- ինչպիսի՞ հատկանիշների հիման վրա կարելի է խմբավորել առարկաները:
- Ի՞նչ կարգով կարելի է կառուցել առարկաների մեծացող կամ փոքրացող շարքը:
- Ինչպե՞ս ընտրել անհրաժեշտ հերթական առարկան:

☺ Խաղացե՛ք «Ո՞վ է առաջինը» խաղը: Երեխաները մտացել են, թե ով ում հետևից է կանգնած եղել: Առաջինը պետք է ավելի փոքր լինի երկրորդից, իսկ երկրորդը՝ ավելի փոքր՝ երրորդից: Ի՞նչ հասակ ունի առաջին երեխան: Իսկ երկրորդը...

● Խնդրեք, որ երեխաները շարք կազմեն հասակների աճման ու նվազման կարգով, հասկանալի և տեղին օգտագործեն «աջից ձախ», «վերև», «ներքև», «տակ-վրա», «առաջ-հետև» բառերը:





## ՄԵԾՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՍԱՐ

՛ Բացի մեծությամբ անհավասար առարկաներ համեմատելուց՝ երեխայի հետ համեմատեք նաև մեծությամբ հավասար առարկաներ:

՝ Երեկոյան Սևականջը գնաց այգի՝ զբոսնելու,

Հետն էլ տարավ իր գնդակը սիրելի:

Այգում՝ կանաչ խոտերի մեջ, ուրախ խաղաց,

Շատ թռչկոտեց, մեկ էլ տեսավ,

Ա՛յ քեզ հրաշք, այս որտեղի՞ց, ինչպե՞ս եղավ,

Որ գնդակը մեկն էր, բայց տե՛ս, երկու դարձավ.

Եվ այն էլ ճիշտ նույն մեծությամբ:

- Ի՞նչը զարմացրեց Սևականջին:

Օգնի՛ր Սևականջին իմանալ, թե որտեղից կարող էր հայտնվել երկրորդ գնդակը:




՝ Ջրոսանքի ժամանակ խոնավ ավազով մեծ, փոքր և նույն չափի կաղապարներով ստացեք «կարկանդակներ», որոշեք նրանց մեծ, փոքր և չափով հավասար լինելը:

՛ Խոհանոցում խաղալիս գուշակել տվեք երեխային, թե ի՞նչ չափի պիցցա կստացվի խմորի մեծ գնդից, ապա՝ փոքրից, ինչպես նաև երկու հավասար գնդերից և ինչ չափի ամանների մեջ դրանք հետո կդրվեն (մեծը՝ մեծում, փոքրը՝ փոքրում):

• Օգնեք երեխային ըստ չափի առարկաները դասավորել աճման կամ նվազման կարգով (մեծից փոքր, փոքրից մեծ): Երեխային անհրաժեշտ է բերել այն համոզման, որ առարկայի չափերին վերաբերող հասկացությունները հարաբերական են՝ նայած, թե ինչ մեծության առարկայի հետ է համեմատվում: Օրինակ՝ որևէ փոքր առարկա կարող է մեծ համարվել իրենից փոքր առարկայի համեմատ և հակառակը՝ որևէ մեծ առարկա կարող է փոքր համարվել իրենից մեծ առարկայի համեմատ:

• Պահանջեք երեք բաժակներ դասավորել շարքով՝ սկսելով ամենափոքրից, վերջացնելով ամենամեծով: Սեջտեղի բաժակը ջրով լցնել և հարցնել՝ արդյոք այդ քանակի ջուրը կտեղավորվի մեծ բաժակի մեջ (իսկ փոքրո՞ւմ): Հարցնել. «Ինչո՞ւ ես դու այդպես մտածում»: Պատասխանը ապացուցել նաև փորձով:

Թող երեխան յուրացնի, որ կան մեծ, փոքր և միջին մեծության առարկաներ: Որ փոքր առարկան մի դեպքում կարող է լինել մեծ, եթե համեմատվում է իրենից փոքր առարկայի հետ և հակառակը:



## ԵՐԿԱՐ - ԿԱՐՃ

Ձեռքով, որ երկու առարկաները, օրինակ՝ երկարությամբ համեմատելիս, դնելով իրար վրա, ձախ եզրերը պետք է հավասարեցնել, և եթե առարկաներից որևէ մեկից աջ կողմում ավելորդ մաս է մնում, ուրեմն մեկը երկար է, մյուսը՝ կարճ: Իսկ եթե ձախ և աջ կողմերում եզրերը համընկնում են, նշանակում է, որ նրանք երկարությամբ հավասար են:

● Սովորեցնել ձեռքը սահեցնել համեմատվող առարկայի վրայով՝ օգտագործելով «ավելի կարճ», «ավելի երկար», «հավասար» են արտահայտությունները:

● Առաջարկեք սովորաբար կտրել երկու տարբեր երկարությամբ գուլակներ և ընդունեք դրանք որպես ճանապարհներ ու հարցրեք. «Ինչպե՞ս իմանալ, թե որ ճանապարհն է երկար (կարճ)»: Ճանապարհները դրեք իրար վրա, համոզվեք դրանում և հարկ եղած դեպքում հավասարեցրեք:

● Վերցրեք երկու ցատկապարան, տվեք երեխային և պահանջեք որոշել դրանց երկարությունն ու բացատրել կատարած գործողությունը:

● Սեղանի վրա դրված առարկաները համեմատելով՝ պահանջեք գտնել այնպիսի առարկաներ, որոնց մասին ասվի, որ նրանցից մեկը ավելի կարճ է մյուսից:

● Առաջարկեք երեք տարբեր երկարության ժապավեններ, իրար վրա դնելով (ձախ կողմերը հավասարեցնելով), համեմատել և որոշել, թե որն է երկար, որը՝ կարճ, որը՝ ավելի կարճ: Առաջարկեք, որ երեխան ժապավենները դասավորի երկարից կարճ և՛ հակառակը:

● Սեղանի երկու կողմերում դրեք գույնով և երկարությամբ տարբեր գուլակներ: Առաջարկեք երեխային աջ կողմից վերցնել դեղին գուլակը, ապա ձախ կողմում դրվածներից աչքաչափով ընտրել երկարությամբ դրան հավասար գուլակը և իրար վրա դնելով՝ համոզվել դրանում:

● Գտնել դրանից ավելի երկարը (կարճը):

☞ Քանի որ Սևականջը չի սիրում պարապ նստել ու գործ չանել,

Այս անգամ էլ փայտից կտրեց բարակ շերտեր,

Իր սենյակի պատին դրանք ամրացրեց

Եվ որոշեց այդ շերտերին բարակ ու նեղ

Իր նկարները փակցնել ու բոլորին ցուցադրել:

● Մտածի՛ր և ասա՛ քանի՞ շերտիկ է պատին ամրացրել Սևականջիկը: Հավասար երկարությամբ են արդյոք դրանք:

● Ի՞նչ կասես առաջին և երկրորդ շերտերի երկարության մասին: Ինչպե՞ս որոշեցիր (աչքաչափով, թգաչափով, փայտիկով՝ այն ընդունելով որպես չափ):

● Ի՞նչ կասես երկրորդ և երրորդ շերտերի երկարության մասին:

● Ի՞նչ է անում ճնճողուկը և ինչի՞ համար (օգնում է Սևականջին 3 գուլակները հավասարեցնել երկարությամբ):

☞ Դու ևս վերցրո՛ւ տարբեր չափերի ժապավեններ կամ թղթե շերտեր և կատարի՛ր անհրաժեշտ գործողությունը՝ դրանք երկարությամբ հավասարեցնելու համար:

● Յույց տվեք երեխային 75 սմ երկարությամբ ժապավեն և առաջարկեք ժապավենների միջից գտնել նույն երկարության (ավելի երկար, ավելի կարճ) ժապավեններ:



## ԵՐԿԱՐ - ԿԱՐԾ

☞ Տե՛ս նկարը և ինքնուրույն համեմատիր յուրաքանչյուր երկու կենդանու մարմնի մասերը և ասա՝ երկար է, լայն է, նեղ է և այլն:

☺ Այս հասկացություններն ամրապնդելու նպատակով խաղալ «Շարունակի՛ր նախադասությունը» բառախաղը:

• Եղե՛լ ես կենդանաբանական այգում: Եթե այո՛, ես կասեմ մի նախադասություն, իսկ դու շարունակի՛ր:

- Փղի ականջները մեծ են, իսկ կնճի՞թը՝ ... (երկար):

- Նապաստակի ականջները երկար են, իսկ պոչը՝ ... (կարճ):

- Նապաստակի պոչը կարճ է, իսկ աղվեսինը՝ ... (երկար):

- Կապիկի պոչը երկար է, իսկ փղի պոչը՝ ... (կարճ):

- Ջայլամի ոտքերը երկար են, իսկ վիզը՝ ... (երկար):

☼ Առարկայի չափի մասին պատկերացումներն ամրապնդել գործունեության տարբեր ձևերում: Տվե՛ք առաջադրանքներ, որտեղ երեխան կնկարի հավասար և անհավասար երկարության մրգեր և բանջարեղեն (վարունգ, գազար, բանան, կանաչ լոբի և այլն):

☞ Հանձնարարեք պլաստիլինը բաժանել երկու հավասար մասերի և պատրաստել երկու միանման ձողիկներ, ապա, իրար կողքի դնելով, աշխատել դրանք երկարությամբ հավասարեցնել: Տվե՛ք հետևյալ հարցերը. «Ինչպե՞ս անել, որ դրանք ավելի երկարեն (ձգել), ավելի հաստանան (երկու կողմից սեղմել)»:

Գործողությունը կատարելուց հետո երեխան համոզվում է, որ կարելի է հավասարեցնել երկու ձևով՝ կարճացնելով (սեղմելով) և երկարացնելով (ձգելով):





☺ Խաղացե՛ք երեխայի հետ՝ նրան տալով երեք գույգ տարբեր երկարության, տարբեր գույնի թղթե գլակներ (2-ը՝ ամենաերկարները, 2-ը՝ միջինը և 2-ը՝ ամենակարճերը):

Պատմե՛ք հետևյալը, որ խանութում, որտեղ ժապավեններ են վաճառում, ամենավերևի դարակներից ցած էին ընկել արկղեր և այնտեղից դուրս էին քափվել տարբեր երկարության ժապավեններ և խառնվել էին իրար: Առավոտյան, երբ վաճառողուհին չէր հասցրել նորից դասավորել ժապավենները, խանութ եկան աղջիկներ, որոնց անհրաժեշտ էր գնել տարբեր երկարության ժապավեններ: Աղջիկներից մեկը պահանջում է ամենաերկարը:

Ահա այստեղ պահանջեք երեխայից համեմատել իր մոտ եղած ժապավենները: Հարցրեք, թե դա ինչպես պետք է անել:

Խնդրե՛ք, որ նա գլակները դնի իրար վրա՝ ամենաերկարը, կարճը, ավելի կարճը (հիշեցրեք, որ ժապավենների ձախ եզրերը պետք է հավասարեցնել): Այսպես երեխաներն ընտրում են անհրաժեշտ երկարության ժապավենները:

Խաղացե՛ք «Ով ավելի արագ» խաղը: Սեղանին դնելով տարբեր գույնի և չափերի կծիկներ՝ կանաչը տվեք երեխային, դեղինը դուք վերցրեք: Ասացե՛ք. «Երբ կլսես «ծափ» ազդանշանը, ինձ հետ միաժամանակ սկսիր քանդել թելը»: «Ինչո՞ւ դու հաղթեցիր, չէ՞ որ ես քեզանից արագ էի քանդում կծիկը»: Փոխելով թելերը՝ հարցրե՛ք. «Ի՞նչ ես կարծում, այս անգամ ո՞վ կհաղթի, ո՞վ ավելի շուտ կկծկի թելը»: Ինչպե՞ս կարելի է ստուգել, թե որ թելն է երկար, որը՝ կարճ (իրար վրա դնելով):



## ԲԱՐՉՐ - ՅԱԾՐ

Չ երկու առարկաները, բարձրությամբ համեմատելիս, տեղադրել իրար կողք այնպես, որ համընկնեն ներքևի եզրերը, ապա՝ առարկայի վերևի եզրերը: Եթե վերևի եզրերից մեկը բարձր է, մյուսը՝ ցածր, ըստ դրա որոշել առարկաներից բարձրն ու ցածրը:

☞ Քանի՞ աշտարակ է կառուցել Սևականջը:

- Ի՞նչ կասես երկրորդ և երրորդ աշտարակների բարձրության մասին (դրանք հավասար են բարձրությամբ):

- Ո՞ր աշտարակներն են բարձրությամբ անհավասար:

- Ի՞նչ պիտի անի Սևականջը, որ դրանք հավասարվեն բարձրությամբ: Նշի՞ր հնարավոր բոլոր ձևերը (մեկական ավելացնելով, կամ պակասեցնելով):

• Ինքներդ երեխաների հետ նմանատիպ խաղեր հորինեք և խաղացեք: Փոխելով խորանարդների դիրքը՝ որոշեք նրանց՝ երկարությամբ երկար, կարճ կամ հավասար լինելը:

☺ Խաղացե՛ք «Լեզո»-ով երեխայի հետ և միասին կառուցեք երկու աշտարակ այնպես, որ կարմիր աշտարակն ավելի բարձր լինի կանաչից, իսկ հետո կարմիրները ցածր (հավասար) լինեն կանաչից (կանաչին):

• Գնահատե՛ք աշխատանքի կատարման ճշտությունը:

☼ Առաջարկե՛ք երեխային նմանատիպ տրամաբանական խնդիրներ.

ա) եթե սեղանը բարձր է աթոռից, ապա ... (աթոռը ցածր է սեղանից):

բ) եթե բազմոցը ցածր է պահարանից, ապա ... (պահարանը բարձր է բազմոցից):

գ) եթե մեղուն ավելի բարձր է թռչում քան ճանճը, ճանճը ավելի բարձր է թռչում քան գատիկը, ո՞վ է բոլորից ցածր թռչում:

☼ Մենյակներով կազմակերպեք «Էքսկուրսիա»՝ փնտրելու իրենից բարձր և ցածր առարկաներ: Նստելուց հետո երեխան թող նկարագրի այն առարկաները, որոնք իրենից բարձր են (ցածր են):

• Մենյակում գտնել երեք ծաղկաման և համեմատել բարձրությամբ:

• Սովորեցրե՛ք երեխային առարկաները խմբավորել բարձրությամբ: Խնդրեք, որ մի խմբում դասավորի միևնույն բարձրություն ունեցող առարկաներ, իսկ մյուսում՝ նույն բարձրության, բայց տարբեր հաստություն ունեցող առարկաներ՝ նշելով նրանց նմանությունն ու տարբերությունը:

• Կարող եք նաև չափել ձեր և ձեր երեխայի հասակները, որոշել բարձր ու ցածր լինելը և այլն:

Երեխային հարցրեք.



Եթե մեղուն ավելի բարձր է թռչում, քան ճանճը,

ճանճը ավելի բարձր է թռչում, քան բոռը,

Ո՞վ է բոլորից ցածր թռչում:

Ամրապնդման նպատակով հաշվել տվեք ճանապարհին հանդիպող առարկաները՝ նշելով նրանց բարձրությունը, լայնությունը, երկարությունը:





## ԲԱՐՁՐ - ՑԱԾՐ, ՀԱՎԱՍԱՐ

Մի Ասականջիկին հաջողվեց փայտե շերտերի վրա մեխերով ամրացնել իր նկարած ծառերը: Տե՛ս՝ ինչ գեղեցիկ են դրանք.

Ահա եկավ օրն սպասված,

Նկարներով իր նկարած փխտն բացեց ցուցահանդես:

Կհավանե՞ն իմ նկարած նկարները,

Ընկերներս ուրախ կասե՞ն.

«Կեցցե՛ս, փխտ՝, նկարիչ ես դու համճարեղ»:

Կհասկանա՞ն արդյոք նրանք,

Որ նկարած ծառերը այս խիստ տարբեր են.

Մեկը բարձր է, մեկը՝ ցածր

Կամ թե գուցե հավասար են բարձրությամբ:

- Ինչպես նկատեցիր, Ասականջը հիացած է իր նկարներով, իսկ դու ի՞նչ կասես՝ նայելով դրանց:

- Ինչպիսի՞ն են բարձրությամբ երկրորդ և երրորդ ծառերը, առաջին և երկրորդ ծառերը:

- Եթե մեջտեղի նկարի ծառը համեմատես ձախակողմյան ծառի հետ, ի՞նչ կասես այդ դեպքում:

• Փորձի՛ր ինքդ էլ նկարել բարակ բնով բարձր ծառ և հաստ բնով ցածր ծառ: Համեմատի՛ր և նկարագրի՛ր քո նկարած ծառերը:

✿ Առաջարկե՛ք երեխային մի բարձր տուն նկարել թղթի աջ կողմում, իսկ ձախում՝ ցածր տուն և համեմատել՝ օգտագործելով բարձր, ցածր բառերը:

✎ Մի տնից մյուսը նկարի՛ր այնպիսի ճանապարհ, որը լայն լինի բարձր տան մոտ և նեղ՝ ցածր տան մոտ:

• Բարձր տան ձախ կողմում մի ցածր եղևնի նկարի՛ր, ցածր տան աջ կողմում՝ բարձր մի ծառ:

• Բարձր ծառի առջև հաստ ոտքով սունկ նկարի՛ր, ցածր ծառի առջև՝ բարակ ոտքով:

✿ Ծաղկավաճառի մոտով անցնելիս որոշեք երեխայի հետ, թե որ ծաղիկներն ունեն բարձր ցողուն, իսկ որոնք՝ ցածր:


• Ջրոսանքի ժամանակ խնդրեք երեխային ցույց տալ ամենաբարձր, ամենացածր շենքերը, հաստ բնով բարձր ծառերը, բարակ բնով ցածր ծառերը:

• Ըստ հարկերի՝ համեմատեք բնակելի շենքը դպրոցի կամ մանկապարտեզի շենքի հետ:

- Ո՞ր շենքի պատուհաններն են լայն (նեղ), բարձր (ցածր):

✿ Խաղասենյակի դռան վրա փակցնել թափանցիկ, կաշուն ժապավեն: Յուրաքանչյուր ամսվա սկզբին չափեք երեխայի հասակը և նշան արեք: Գրեք ամիսամսաթիվը: Տարվա վերջում երեխայի հետ կհամոզվեք, թե ինչ չափով է հասակ առել ձեր երեխան:

• Կարող եք նաև չափել ձեր և ձեր երեխայի հասակները, որոշել բարձր ու ցածր լինելը և այլն:



## ԼԱՅՆ-ՆԵՂ

Չետաքրքիր է նաև քայլաչափով և թզաչափով որոշել առարկաների երկարությունը, բարձրությունը և լայնությունը: Դա անհրաժեշտ է, երբ առարկաները հնարավոր չէ իրար մոտեցնել կամ տեղադրել իրար վրա:

Հաճախակի խաղացե՛ք «Չափում ենք ոտնաչափով, քայլերով և թզաչափով» խաղը: Առաջարկե՛ք երեխային նախ աչքաչափով, ոտնաչափով (մի ոտքի կրունկը մյուս ոտքի մատների առաջ), ապա քայլաչափով և թզաչափով որոշի օրինակ՝ սեղանի երկարությունը և բարձրությունը, խաղասենյակի երկարությունն ու լայնությունը, այգում մինչև դիմացի մայթը (ծառը), նետած ավազապարկի և իր միջև եղած տարածությունը:

Այսօրինակ բազմաթիվ վարժություններից հետո երեխային համոզեք, որ չափման արդյունքում ստացվող ոտնաչափերի, քայլերի և թզաչափերի քանակը կապված է քայլի և թզաչափի լայնությունից:

Քայլը լայն է, ստացվում է փոքր թիվ, քայլը նեղ է՝ մեծ թիվ (քանի որ նեղ չափը ավելի շատ է տեղավորվում առարկայի վրա, քան մեծ չափը):

Խնդրե՛ք երեխային, որ չափելիս սկսի քայլել չափվող առարկայի ձախ եզրից դեպի աջ և յուրաքանչյուր քայլից հետո նշան արեք՝ դնելով որևէ առարկա (կոճակներ, երկրաչափական պատկերներ, մանր խաղալիքներ և այլն): Երկրորդ քայլը սկսել նշված տեղից և այսպես՝ մինչև վերջ:

Հաշվել և ասել՝ սեղանի երկարությունն է շատ, թե լայնությունը: Ինչո՞ւ:

Դիտեք նկարը. արջն ու Սևականջիկը որոշել են չափել գորգի երկարությունը. արջը՝ քայլաչափով, Սևականջիկը՝ թզաչափով:

- Ի՞նչ ես կարծում, ո՞ւմ մոտ մեծ թիվ կստացվի, իսկ ո՞ւմ մոտ՝ փոքր:

- Ի՞նչ չափեր ստացվեցին՝ արջուկի մոտ 5 քայլ, Սևականջիկի մոտ՝ շատ քայլեր:

- Ինչո՞ւ, ինչպե՞ս կպատճառաբանես:

Չերեխային տվեք այնպիսի հարցեր, որոնք մղում են մտածելու:

Հարցերի օրինակներ.

- Ինչո՞վ այսօր զբաղվեցիր:

- Ի՞նչ նոր բան իմացար:



- Ինչի՞ վրա շատ ուշադրություն դարձրեցիր:

- Ի՞նչը ամենից շատ քեզ դուր եկավ, ի՞նչն էր ամենահետաքրքիրը:

- Ի՞նչն էր դժվար, ինչպե՞ս հաղթահարեցիր այն:

- Մտածիր՝ ի՞նչ առարկաներ կուզենայիր չափել՝ ինչո՞վ և ինչպես:

• Քո տարբերակները գտիր և հիմնավորիր այն:



## ԼԱՅՆ-ՆԵՂ

ձ Հիշե՛լ, որ առարկաները, լայնությամբ համեմատելիս, անհրաժեշտ է տեղադրել իրար վրա այնպես, որ համընկնեն նախ ներքևի եզրերը, ապա՝ ձախ եզրերը:

☞ Դիտե՛ք նկարը:

Բակում այսօր հանդիպեցին Սևականջն ու նապաստակը,

Որոշեցին փայտը կտրել, իրենց համար մի մեծ սեղան

Ու մեկ հատ էլ փոքր սեղան փայտից շինել:

Երբ կտրեցին, սղոցեցին. տե՛ս, զարմացած հարցրեցին.

- Ո՞ւմ սղոցած տախտակն է լայն,

Իսկ ո՞ւմը՝ նեղ:

Որի՞ց փոքրիկ մի սեղան էլ դուրս կբերվի:

● Մտածի՛ր և ասա՝ ո՞ւմ սեղանը մեծ ու լայն ստացվեց, իսկ ումը՝ նեղ ու փոքր: Ասա՝ ինչո՞ւ ես այդպես մտածում: Փորձիր գուշակել՝ որ սեղանի համար ինչ լայնության սփռոց կընտրես:

● Է՞լ ինչ կպատրաստեիր այդ երկու փայտերից, եթե դրանք քեզ մոտ լինեին (մահճակալ, բազմոց, բազկաթոռ, աթոռ՝ տիկնիկի համար):

☞ Օգնե՛ք երեխային թղթից կտրել նույն երկարության, սակայն լայն ու նեղ ուղղանկյուններ և դնելով իրար վրա՝ համոզվել՝ որն է լայն, որը՝ նեղ:

☼ Մենյակների և միջանցքների գորգերը լայնությամբ համեմատել միմյանց հետ: Ասել, որ ուղեգորգերը նեղ են ու երկար, իսկ գորգերը՝ լայն ու կարճ:

● Երեխային առաջարկեք իրար վրա դնելով չափել 4 ժապավեն և ասել արդյունքը (օրնակ՝ վարդագույն ժապավենը ամենալայնն է, մանուշակագույնը մի փոքր նեղ է կարմիրից, կարմիրը ամենանեղն է):

● Յուրաքանչյուր առաջադրանքի կատարման վերջում պարզաբանել, թե ինչ հերթականությամբ է կատարված :

☼ Համեմատե՛ք ներքնակն ու վերնակը՝ ասելով՝ ներքնակը նեղ է վերնակից: Կամ էլ՝ մահճակալն ու բազմոցը (մահճակալը լայն է բազմոցից և այլն):

● Տվե՛ք երեխային հաստությամբ տարբեր մատիտներ (վրձիմներ): Պահանջե՛ք դասավորել ըստ հաստության՝ աճման և նվազման հերթականությամբ:

Խնդրե՛ք երեխային շրջապատում գտնել այնպիսի առարկաներ, որոնց մասին կարելի է ասել, որ դրանցից մեկը ավելի լայն է, ավելի նեղ, ավելի հաստ, ավելի բարակ մյուսից:



## ԼԱՅՆ-ՆԵՂ

☞ Տե՛ս նկարը: Սևականջիկն ու Սպիտականականջիկը որոշեցին գնալ գետակ և նավակներ բաց թողնել հոսող ջրի վրա:

- Ինչպիսի՞ն են նրանց նավակները:
- Ինչո՞վ են տարբերվում միմյանցից:
- Ինչպիսի՞ գետակներ են ընտրել իրենց նավակները բաց թողնելու համար:
- Ո՞ր կողմն է լայն, նեղ: Ինչպե՞ս կարելի է չափել (թզաչափով):
- Լայն և նեղ գետակների միջև ափ է ընկած: Համեմատի՞ր աջ և ձախ ափերը և ասա՛ որ կողմն է լայն (նեղ):

• Այս նկարի մեջ էլ ինչը կարելի է համեմատել:



☺ Խաղացե՛ք «Նապաստակի տնակը» խաղը: Սեղանին դնելով 2 դռնակներով տնակ՝ մեկը նեղ, մյուսը՝ լայն (կոնֆետի տուփի վրա երկու այդպիսի դռնակ բացե՛ք՝ պատմե՛ք, որ նապաստակը տանից դուրս եկավ բացատ՝ զբոսնելու: Գայլը մոտակայքում էր. նրան տեսավ և հետապնդեց: Նապաստակը վազեց տնակի մոտ, որ քաբնվի (ցույց տալ խաղալիքների օգնությամբ):

- Ո՞ր դռնակից հեշտությամբ ներս կմտնի՝ նե՞ղ, թե՛ լայն:
- Ինչ կպատահեր, եթե միայն նեղ դուռ լիներ:

☼ Նապաստակը իր ծննդյան օրը որոշեց հրավիրել Սևականջին և նամակ ուղարկեց նրան՝ նշելով իր տան հասցեն. «Միրելի՛ Սևականջ, քո տնից մինչև իմ տուն երկու ճանապարհ կա՝ լայն ու նեղ: Լայն ճանապարհի վերջում իմ տնակն է, իսկ նեղ ճանապարհը տանում է գայլի տուն: Տես՝ չսխալվես»:

Կտրել լայն ու նեղ 2 ճանապարհներ և մոտեցնել տնակին:





## ԼԱՅՆ-ՆԵՂ

☞ Դիտե՛ք նկարը, և երեխան թող պատմի, թե փխտոն ի՞նչ չափի սրբիչներ և ժապավեններ է փռել պարանիւն (լայն, նեղ):

- Լվացքը փռելիս ի՞նչ չափի ամրակներ է օգտագործել:

- Է՞լ ինչ ես տեսնում նկարում:

- Գուշակի՛ր, թե փխտոն ի՞նչ է մտածում: Հորինի՛ր այս նկարի շուրջ մի պատմություն և պատմի՛ր:

☼ Սեղանին դրեք տարբեր լայնության և բարձրության 4-5 բաժակ (ծաղկաման) և խնդրեք երեխային՝ բաժակները դասավորի ըստ նրանց լայնության (բարձրության)՝ նախ մեծացող հերթականությամբ (փոքրից-մեծ), ապա՝ փոքրացող (մեծից-փոքր) և հարցնել.

- ինչո՞վ են բաժակները տարբերվում միմյանցից.

- ի՞նչ կարելի է ասել առաջին բաժակի բարձրության (լայնության) մասին, ինչո՞ւ այն համարեցիր ամենաբարձրը.

- ի՞նչ կարելի է ասել երրորդ բաժակի բարձրության (լայնության) մասին.

- ո՞ր բաժակն է ամենաբարձրը (լայնը), որի՞ց է ավելի ցածր:


☼ Սեղանին դնելով չորս տարբեր գույնի և չափի զուլակներ՝ ասել. «զուլակները սեղանի վրա հերթականությամբ չեն դասավորված: Ի՞նչ կասես զուլակների լայնության մասին»:

- Ինչպե՞ս ստուգել, թե ո՞ր զուլակն է ավելի լայն (ավելի նեղ): Ե՛կ դասավորենք ամենալայնից ամենանեղը: Դրա համար պետք է ընտրել ամենալայն զուլակը և մյուսները դնել նրա վրա՝ լայնից նեղ հաջորդականությամբ: Խնդրել, որ ըստ դասավորվածության անվանի զուլակի համեմատական լայնությունը (ամենալայն, լայն, նեղ, ավելի նեղ, ամենանեղ): Կարելի է նաև դասավորել հակառակ՝ նեղից լայն հերթականությամբ:

☼ Հանձնարարել «Լեգոյի» կառուցողական խաղի միջից գտնել «լայն», «նեղ», «երկար», «կարճ» մասեր: Առաջադրանքների ժամանակ հետևեք, որ երեխան չձանձրանա և ամենակարևորը՝ մի՛ մոռացեք գնահատել, գովաբանել նրան՝ ընդլայնելով ձգտումը մաթեմատիկայի նկատմամբ:

☼ Ջրոսանքն այգում կարելի է դարձնել ուսուցողական: Վերցրե՛ք ձեզ հետ լայն ու նեղ դույլեր և այգում թաց ավազից ստացեք հաստ ու բարակ, բարձր ու ցածր աշտարակներ:

Երեխայի ուշադրությունը բևեռեք ծառերի բների և ճյուղերի հաստությանն ու բարակությանը: Փողոցով անցնելիս ուշադրությունը բևեռեք դրանց լայնությանն ու նեղությանը: Համեմատե՛ք զբոսայգու ծառուղին փողոցի հետ:



## ԼԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՍԱՐ

Իսկ հիմա նայիր այս նկարին և տես՝ ի՞նչ եղավ հետո:

Հաջորդ օրը փիտոն վարպետ  
Բակուն գտավ մի տախտակի՝

Լայն, հավասար կտորներ:

- Ա՛խ,- հառաչեց փիսիկը մեր,

- Երազանքս կատարվեց:

- Հիմա հաստատ կպատրաստեմ

Լայն դռներով մի պահարան:

Ասաց, իսկույն գործի անցավ,

Բայց դժվար էր նրա համար կողմնորոշվել:

Օգնի՛ր նրան ճիշտ որոշել և համոզվել՝

Ո՞ր տախտակի կտորները հավասար են լայնությամբ:

● Ինչպե՞ս կարող է դրանում համոզվել Սևականջը (իրար վրա դնելով և ձախ կողմնորոշվելով):

⊗ Տվե՛ք երեխային չարված մատիտ (չափ) և անցնելով սենյակներով՝ որոշեք, թե որ առարկաները պետք է չափել՝ մատիտը որպես չափ ընդունելով (բազմոց-բազկաթոռ, մազբոց-մահճակալ, սեղան-աթոռ, աթոռ-բազկաթոռ և այլն):

● Հարցրեք՝ արդյոք այդ առարկաների մեջ կա՞ն այնպիսիները, որոնք երկարությամբ կամ լայնությամբ հավասար են մատիտին: Չափելիս մատիտը տեղադրեք ձախից աջ:


● Դու գիտես, թե ինչ պետք է անել, երբ անհրաժեշտ է ըստ չափի ընտրել կամ պատրաստել մի որևէ առարկա: Այո՛, այս դեպքում առարկաները չափում են:

Հիմա կտվորեցնեմ քեզ չափել: Եկ օգնենք Սևականջին և նրա հետ միասին դռներ պատրաստենք պահարանի համար: Ի՞նչպես իմանանք՝ կհամապատասխանի՞ արդյոք այս տախտակը: Ի՞նչը պետք է չափել (լայնությունը և երկարությունը): Ինչո՞վ կարելի է դա անել (պարանով, ժապավենով, մատիտով, փայտիկով): Հետո չափման արդյունքները համեմատի՛ր և որոշի՛ր, կհամապատասխանի՞ արդյոք մեր ընտրած տախտակը:

Ը Հիմա ուշադիր նայի՛ր, թե ինչպես պետք է չափել տախտակի երկարությունը: Չափել պետք է սկսել տախտակի ձախ եզրից և մատիտը (չափը) տեղադրել ուղիղ: Հետո պետք է որոշել, թե քանի անգամ այն տեղադրվեց տախտակի երկարությամբ: Ամեն անգամ չափը պետք է նշել կավիճով (մատիտով), ապա նորից չափել նշված տեղից: Այս գործողությունը կրկնել այնքան, մինչև տախտակը վերջանա: Հիմա կարող ենք ասել՝ տախտակի երկարությունը հավասար է օրինակ՝ 5 չափի: Նման ձևով կարելի է չափել նաև լայնությունը և ասել՝ օրինակ՝ այն հավասար է երեք չափի:

● Էլ ի՞նչ կարող էր Սևականջը պատրաստել այդ երկու փայտերից:

● Օգնեք երեխային ստվարաթղթից կտրել երկու՝ նույն լայնության և հավասար երկարության ուղղանկյուններ: Ներկե՛ք և դնելով իրար վրա՝ համոզվեք, որ դրանք հավասար են և՛ իրենց լայնությամբ, և՛ իրենց երկարությամբ:



## ՀԱՍՏ - ԲԱՐԱԿ

☞ Տե՛ս այսօր էլ փխտն նստեց բարձր կոճղին ու նայելով մկնիկին՝ ասաց.  
- Ո՞նց ես փորձվել նստել կոճղիս.

Իջի՛ր իսկույն, թե չէ հիմա քեզ կճգմեն:

- Ի՞նչ ես այդպես դու զայրանում,- ասաց մուկը.

Մի կոճղը քեզ, իսկ մյուսը՝ ինձ.

Հապա նայիր, քոնը ինչքա՛ն հաստ է ու լայն,

Իսկ իմ կոճղը՝ նեղ ու բարակ պոչիս նման,

Որը երբեք պետք չի գա քեզ:

Սևականջը լսեց, լսեց, հետո հանգիստ պատասխանեց.

- Դե՛ լավ, ճտտան, կոճղը քոնն է,

Բայց չփորձես իմ հաստ կոճղին երբեք նստել:

● Ինչպիսի՞ կոճղի վրա է տեղավորվել մկնիկը, իսկ ինչպիսի կոճղի վրա՝ փխտն:

Մի քիչ էլ լուռ որ նստեցին,

Խիստ ձանձրացան, հորանջեցին

Ու փորձեցին զվարճալի խաղ հորինել,

Հո՛ւպ, հակառակ կոճղին ցատկել...

Էհ, մկնիկը մեր ճտճտտան

Իսկույն ցատկեց ու լայն կոճղին մի պար պարեց:

Իսկ փխտիկը՝ հաստիկ ու մեծ, որ չցատկե՛ց,

Ընկավ ու, դո՛մփ, գլուխն առավ կոճղի եզրին:

● Հասկացա՞ր, թե ինչու փխտիկն ընկավ: Ի՞նչն էր դրա պատճառը: Պատմի՛ր:

☼ Առաջարկե՛ք երեխային կարգ ու կանոն մտցնել մատիտների տուփերում՝ դրանք դասավորելով հաստից բարակ (երկարից կարճ) հաջորդականությամբ: Առաջարկեք հետևյալ հարց-առաջադրանքները.

- Ո՞ր մատիտն է ամենահաստը (ամենաբարակը) կարմիր.

- Ո՞ր մատիտն է ամենաբարակը (ամենակարճը)

- Կապույտ մատիտը ո՞ր մատիտներից է բարակ (կարճ)

- Կապույտ մատիտը ո՞ր մատիտների մեջտեղում է գտնվում (դեղին և նարնջագույն)

☼ Խնդրե՛ք մատիտները դասավորեն երկարից կարճ (հաստից բարակ), ապա հակառակ՝ կարճից երկար (բարակից հաստ) հաջորդականությամբ: Հարցերի միջոցով պարզեք մատիտների նոր դասավորվածությունը (բարակ, հաստ, ավելի հաստ, ամենահաստ):

● Հաճախակի առաջարկեք նկարել հավասար և անհավասար երկարության, լայնության, բարձրության առարկաներ՝ աճող և նվազող հաջորդականությամբ (երկար և կարճ մազերով աղջիկներ, մեքենաներ, նավակներ, ձկներ, գազար, վարունգ և այլն):

● Հիշե՛ք, որ առաջադրանքների կատարումը միշտ ուրախություն պիտի պատճառի երեխային:



## ՀԱՍՏՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՍԱՐ

☞ Դիտիր նկարը և տես, թե փոքրիկ ու ծաղկազարդ բակում ինչպես է պահմտոցի խաղում փիսիկը:

- Որտե՞ղ է նա թաքնվել:

- Ինչպիսի՞ն են կոճղերը հաստությամբ և բարձրությամբ:

Հորինի՛ր նկարի շուրջ մի պատմություն և պատմի՛ր:

☼ Խնդրեք տուփից ընտրել և վերցնել այնպիսի առարկաներ, որ հաստությամբ (բարակությամբ) նույնն են:

● Մթերային խանութում գնումներ կատարելիս երեխաների ուշադրությունը բևեռել մթերքի այնպիսի տեսակների վրա, որոնք տարբեր են իրենց հաստությամբ և բարակությամբ (երշիկ-նրբերշիկ, երշիկի տարբեր տեսակներ): Օրինակ՝ որսորդական կոչվող երշիկն իր բարակությամբ հավասար է նրբերշիկին: Սրանով երեխան սովորում է առարկան դիտել տարբեր կողմերից:

● Համեմատե՛ք կտրատված պանրի կտորների հաստությունը: Կարող եք նաև բացատրել, որ սեղանին դնելիս պանիրը, հացը, երշիկը, վարունգը կտրատելիս պետք է աչքաչափով հավասար շերտերի բաժանել, որ գեղեցիկ և հաճելի լինի աչքի համար:

● Գնված երշիկները համեմատելիս կարելի է ուշադրություն դարձնել, որ մի երշիկը հաստ է ու կարճ, մյուսը՝ բարակ, բայց երկար:

● Գրապահարանը կարգի բերելիս ուշադրությունը հրավիրեք հաստ ու բարակ գրքերին:

● Հարցրե՛ք, թե ինչ կարելի է ասել հաստ (բարակ) գրքերի էջերի մասին (հաստի էջերը շատ են, բարակինը՝ քիչ):

● Այգում զբոսնելիս (խաղալիս) կարելի է մի քանի երեխաների օգնությամբ գրկել ծառի հաստ բունը, իսկ մեկ երեխայի օգնությամբ՝ բարակ բունը:

☺ Որպես ամփոփում՝ խաղացեք «Շարունակի՛ր» խաղը:

● Ճաշի գդալը ավելի մեծ է, քան .... (թեյինը):

● Բեռնատար մեքենան ավելի երկար է, քան ... (մարդատարը):

● Արծվի թևերը ավելի լայն են, քան .... (ճնճուկինը):

● Փղի ականջները լայն են, իսկ նապաստակինը՝ .... (նեղ):

● Ծառը ավելի բարձր է, քան .... (թուփը):

● Եթե կարմիր ժապավենը նեղ է կապույտից, ապա կապույտը ... (լայն է կարմիրից):

● Եթե սկյուռի պոչը կարճ է, ապա աղվեսինը .... (երկար է):

Հաճախակի առաջարկե՛ք, որ երեխան գտնի այնպիսի առարկաներ, որոնց մասին կարելի է ասել, որ նրանցից մեկը ավելի հաստ է (ավելի լայն է, ավելի բարակ է, ավելի բարձր է) մյուսից:





954

## ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ

ժ Երկրաչափական պատկերների մասին առաջին տեղեկությունները երեխաները ստանում են խաղի ժամանակ կուտակված զգայական փորձի հիման վրա: Երեխաներին սովորեցնում ենք.

- Տարբերել և անվանել շրջան, եռանկյուն, քառակուսի, ուղղանկյուն, ձվաձիբ: Պատկերները համեմատել զույգերով (քառակուսին շրջանի, շրջանը եռանկյան, ուղղանկյունը՝ ձվաձիբի և այլն):

- Հետևել մատով շրջագծելու հնարների և ձեռքի շարժմանը հայացքով հետևելուն, որը նպաստում է երկրաչափական պատկերների ավելի խորը ընկալմանը:

- Համեմատել միևնույն տեսակի, բայց տարբեր գույնի և չափի պատկերները, որոշել կողմերի և անկյունների քանակը, գագաթը: Օր.՝ քառակուսին ունի 4 կողմ և կողմերն իրար հավասար են, ունի անկյուններ և գագաթ, եռանկյունին ունի 3 կողմ, անկյուններ և գագաթ, ուղղանկյունին ունի գագաթ, անկյուններ և 4 կողմ, որի հանդիպակաց կողմերն են հավասար: Համեմատումն անցկացնել որոշակի հաջորդականությամբ. «Ի՞նչն է սա, ի՞նչ գույնի է», «Ի՞նչ չափի է», «Ի՞նչով են տարբեր» (նման): Հարցերի որոշակի հաջորդականությունը երեխային սովորեցնում է պատկերները դիտել և հետազոտել հաջորդականությամբ և ձեռք բերել զգայական մեծ փորձ:

- Խմբավորել պատկերներն ըստ նրանց էական հատկանիշների:

- Պատկերները դասավորել չափերի աճման և նվազման կարգով, որոշակի կարգով կազմել նախշեր:











- Համադրել պատկերներն ու նման ձև ունեցող առարկաները: Գտնել նշված պատկերի նման առարկաներ շրջապատում:

- Պատկերների հետ առարկաների ձևերի անմիջական համեմատությունից անցնել առարկաների ձևերի բառային բնորոշմանը՝ տալով նրանց տեսողական, լսողական քելադրություններ:

- Պատկերների միջև տարբերության նշանակությունը բացահայտելու համար դիմել իրար վրա դնելու համեմատման ձևին:

- Մեկ երկրաչափական պատկերից ստանալ ուրիշները:

- Տարբեր երկարություն ունեցող փայտիկներով դասավորել միևնույն ձևի, բայց կողմերի տարբեր հարաբերությամբ երկրաչափական պատկերներ:



Երկրաչափական պատկերների մասին տեղեկությունները երեխան պետք է ստանա խաղի ժամանակ:

☺ Սևականջը ևս, ինչպես բոլոր երեխաները, շատ է սիրում խաղալ: Այժմ նա առաջարկում է խաղալ «Ո՞վ իր մոտի պատկերը արագ կգտրի» խաղը:

Խաղալու համար պետք է ընտրես կա՛մ գունդ, կա՛մ խորանարդ և ընկերոջդ հետ գլորե՛ք դրանք միաժամանակ դեպի «դարպասը»: Սևականջը համոզված է, որ մի քանի անգամ գլորելու դեպքում ինքդ կպարզես, որ հաղթում է նա, ում մոտ գունդն է և կաշխատես գլորվում է, որովհետև կողմեր չունի, իսկ խորանարդն ունի կողմեր և գագաթներ, որոնք էլ խանգարում են նրան գլորվել:

Խաղն ավարտվելուց հետո Սևականջը դրանք (խորանարդ, գունդ) նկարեց թղթի վրա և խորանարդն անվանեց քառակուսի, իսկ գնդի պատկերը՝ շրջան:

բ) • Դրանում համոզվելու համար նկարի՛ր 3 շրջան, աչքեր, քիթ ու բերան և գլորի՛ր շրջանը ա՛յ այսպես



Ահա այդ պատճառով էլ, երբ ասում ես շրջան, իսկույն պատկերացնում ես շարժում: ա) • Խնդրեք երեխային նկարում ցույց տալ շրջանը, երեխայի հետ մատով օդում միաժամանակ նկարեք այն: Ասե՛ք, որ բոլոր շրջանները, ինչպես գունդը, գլորվում են:

☞ Ապա ցույց տվեք առաջին նկարը, երեխայի հետ օդում միաժամանակ նկարեք և հիշեցրե՛ք, որ այն չի գլորվում խորանարդի նման, քանի որ կողմերն ու անկյունները խանգարում են դրան:

☼ Առաջարկե՛ք երեխային կատարել պարզ առարկայական գործողություններ:

Օրինակ՝ • քառակուսին վերցրո՛ւ աջ ձեռքդ, շրջանը՝ ձախ: Անվանի՛ր և ասա՛ դրանց տարբերությունը (շրջանը գլորվում է, քառակուսին՝ ո՛չ և այլն):

• Բազմաթիվ պատկերների միջից ընտրի՛ր և անվանի՛ր մեծ և փոքր շրջաններն ու քառակուսիները:








• Նա պետք է գիտակցի, որ գագաթը կետ է (հետևեք, որ երեխան մատը դնի կողմերը միացնող կետի վրա): Քառակուսու կողմերը հատվածներ են: Անկյունը երկու կողմերը միացնող հատվածն է: Երեխան անկյունը ցույց տալիս մատը պիտի սահեցնի մի կողմից մյուսը տանելով:

• Որպեսզի ավելի համոզիչ լինեն շրջանի և քառակուսու հատկանիշները, պետք է համեմատենք իրար հետ՝ շրջանը դնելով քառակուսու վրա, որից պարզ կերևան քառակուսու կողմերը, անկյունները և գագաթները:

• Խնդրե՛ք կտրել նկարված շրջանն ու □-ին, և շրջանը դնել քառակուսու վրա՝ ցույց տալով անկյուններն ու գագաթները (շրջանի տրամագիծը պետք է հավասար լինի քառակուսու կողմերին):

Երեխային բերեք նաև այն համոզման, որ քառակուսին ունի չորս կողմ, չորս անկյուն, չորս գագաթ և կողմերն էլ իրար հավասար են (դրանում համոզվելու համար երեխային տալ քառակուսու կողմին հավասար փայտիկ, որով չափումներ կատարելով կհամոզվի կողմերի հավասարության մեջ):

• Նույն ձևով առաջարկեք համեմատել շրջանը և եռանկյունը, Δ-ը և □-ին, Օ, □ և Δ-ը միաժամանակ: Երեխան կհասկանա, որ □ և Δ-ը ունեն անկյուններ, կողմեր, գագաթներ, իսկ շրջանը՝ ոչ:



## ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Նկարում շրջանն առաջարկում է երեք փոքր շրջանները ներկել այն գույներով, որոնք տեսել ես լուսակրի վրա (կարմիր, դեղին, կանաչ):

- Քառակուսին էլ առաջարկում է երեք փոքր քառակուսիների մեջ գտնել և նշել անկյունները, կողմերն ու գագաթները առաջին քառակուսու օրինակով:

- Սևականջիկը խնդրում է նաև, որ նկարում տրված կետերը միացնես և ստանաս քեզ արդեն ծանոթ երկրաչափական պատկերները:

- Ի՞նչ պատկերներ ստացար, անվանի՛ր:

☺ Խաղացե՛ք «Ստվեր» խաղը:

Սևականջիկը խնդրում է, որ երկրաչափական պատկերները դասավորես թղթի տարբեր մասերում՝ կենտրոնում, վերևում և ներքևում, աջ և ձախ կողմերում և պատմես կատարածի մասին (շրջանը դրեցի թղթի վերևի աջ անկյունում և այլն):


Կանգնեցե՛ք երեխայի հետ դեմ դիմաց և որոշե՛ք, թե ով է լինելու մյուսի «ստվերը»: Ասե՛ք որևէ երկրաչափական պատկեր և օդում դանդաղ նկարեք պատկերը: Նա, ով խաղում է ստվերի դերը, ևս օդում ուրվագծում է այդ պատկերը նույն դանդաղությամբ՝ աշխատելով մատները պահել իրար մոտ՝ առանց դրանք իրար կպցնելու, և անվանում է նրա հատկանիշները: (Քառակուսին ունի 4 կողմ, 4 անկյուն, 4 գագաթ, կողմերը հավասար են):

- Ահա ևս մի խաղ, որ Սևականջն անվանում է «Հայելի» և առաջարկում խաղալ մեծի հետ: Փակ աչքերով կանգնեք դեմ դիմաց: Աջ և ձախ ցուցամատները միաժամանակ միացրեք իրար: Հետո ձեզնից մեկը փակ աչքերով օդում թող նկարի մի պատկեր, իսկ մյուսը գուշակի, թե միասին ինչ նկարեցին:

🌸 Ուղղանկյան ծանոթացումը ևս կատարեք ծանոթ երկրաչափական պատկերների համեմատության միջոցով, օրինակ՝ □-ին և Δ-ը իրար վրա դնելով՝ համոզե՛ք երեխային, որ Δ-ը □-ուց երկար է: Հետո խնդրե՛ք, որ մատը սահեցնի պատկերի եզրագծով, ապա օդում ձեր օգնությամբ շրջագծի (նկարի) պատկերները:

Փոքր տարիքի երեխայի համարդա վերացական կրվա: Դրա համար սկզբից ցույց տվեք պատկերները, ապա նոր օդում նկարեք: Թող երեխան ազատ արտահայտի իր կարծիքը:

- Իսկ ձվածիքին ծանոթացումը կատարեք □-ի և Δ-ն համեմատության ժամանակ: Երեխայի ուշադրությունը հրավիրեք այն բանին, որ ձվածիքը, ինչպես և շրջանը, չունի անկյուններ, բայց նա աջ և ձախ կողմերից ձգված է Δ-ն նման:



Ամանորյա գիշերը Սևականջիկը հագավ գիշերանոցը և գլխին դրեց թասակը, որը նվիրել էր Սպիտականջիկը: Եվ երբ, ըստ սովորության, ուղիղ ժամը իննին պառկեց քնելու սենյակի՝ իր համար նախատեսված անկյունում, լայն հորանջեց, փակեց աչքերն ու քուն մտավ:

Երագում նա հայտնվեց մի զարմանահրաշ աշխարհում: Ասում են զարմանահրաշ, քանի որ այդտեղ ամեն-ամեն ինչ երկրաչափական պատկերների ձև ուներ:

Սկզբում Սևականջիկը հայտնվեց մի ամրոցի տանիքի վրա, որտեղ երկրաչափական պատկերները թաքնվել էին, և նա դժվարացավ միանգամից գուշակել, թե որտեղ են թաքնվել շրջանները, ձվածիրները, եռանկյունիները և այլն:

• Եվ հիասթափեցնենք երկրաչափական պատկերներին և ուրախացնենք Սևականջիկին՝ փնտրելով այդ պատկերները ամրոցի պարսպի վրա:

• Գտի՛ր այն պատկերը, որն ունի երեք անկյուն, երեք կողմ, երեք գագաթ:

• Գտի՛ր այն պատկերը, որը ո՛չ սկիզբ ունի, ո՛չ վերջ: Համեմատի՛ր բոլոր պատկերները՝ նշելով դրանց տարբերությունները:

Օգնեք ձեր երեխային երկրաչափական պատկերները բաժանել երկու խմբի՝ գլորվող և չգլորվող: Խնդրեք նրան նկարագրել յուրաքանչյուր խմբի պատկերի բնորոշ հատկանիշները: Պարզել՝ ինչի շնորհիվ են գլորվում: Այնուհետև կարող եք այդ պատկերներն օգտագործել սյուժետային պատկերներ, զարդանկարներ ստեղծելու համար:

Նստեք սեղանի մի ծայրին, երեխան՝ մյուս ծայրին, (գորգին) դրեք դարպասներ: Վերցրեք գնդակը և ասացե՛ք «արա՛ ինձ պես»: Հետո գլորեք գնդակը դարպասների միջով դեպի երեխան: Նա պետք է գնդակը նույնությամբ հետ գլորի և պատմի, որ գնդակը կլոր է, չունի անկյուններ, դրա համար էլ հեշտությամբ գլորվում է:

Հարցնել՝ կարելի՞ է խորանարդիկը գլորել դարպասների միջով, էլ ինչ երկրաչափական պատկեր գիտի, որ չի գլորվում:




Առաջարկել երեխային սեղանի վրայից փակ աչքերով վերցնել երկրաչափական որևէ պատկեր, շոշափել այն, ապա թվարկել նրա հատկանիշները (օրինակ՝ քառակուսին ունի չորս հավասար կողմեր, չորս անկյուն, չորս գագաթ), որից հետո մատով օղում շրջագծել այն և թղթի տարբեր մասերում (կետրոնում, վերևում և ներքևում, աջ և ձախ կողմերում) դասավորել և պատմել կատարածի մասին: Եթե ճիշտ է պատասխանել, խրախուսել, հակառակ դեպքում լռել և հանելուկ ասել այդ պատկերի մասին: Կարող եք թվարկել շրջապատում այդ պատկերներին նման առարկաներ, որը կօգնի գուշակել պատկերը: Այնուհետև երեխային տալ հաշվիչ փայտիկներ և առաջարկել կազմել գուշակած պատկերը:

Ամրոցում շրջելիս Սևականջը հանդիպեց այդտեղի զարմանալի բնակիչներին, որոնցից շատերը, նրան տեսնելով, զարմացան, ոմանք զայրացան, մի քանիսը տխրեցին, մյուսները՝ ծիծաղեցին, իսկ ոմանք էլ հանգիստ ժպտացին:

• Նայի՛ր նկարին և ասա՛, թե այս զարմանալի բնակիչներից ո՞ւմ ես դու ճանաչում:

• Օղում մատով շրջագծիր նրանցից յուրաքանչյուրին: Հետո խաղա նրանց հետ՝ կտրելով ստվարաթղթից:





Հիմա էլ Սևականջիկի հետ հյուր ենք եկել հնարամիտ կարկինին և ուրախ մատի-տին:

Գիտի՛ր նկարները և ասա՝ ի՞նչ երկրաչափական պատկերներ են նկարել նրանք բոլոր վրա:

● Գիտի՛ր նկարը. ինչպիսի՞ հերթականությամբ են դասավորված (շարված) շրջանները (առաջին և երկրորդները):

● Դասավորի՛ր մտքով երկրաչափական պատկերները հակառակ կարգով:

● Քեզ մոտ եղած տարբեր մեծության քառակուսիներն ու եռանկյունիները ինքնուրույն դասավորի՛ր նրանց չափերի նվազման կարգով (մեծից փոքր), ինչպես դասավորված են նկարում շրջանները:

● Հիմա գունավորի՛ր յուրաքանչյուրը մի գույնով և պատմի՛ր կատարած գործողության մասին: Օրինակ ասա՝ մեծ շրջանը դեղին է, միջինը՝ կանաչ, իսկ փոքրը՝ կապույտ:

● Այժմ այդ պատկերները դի՛ր մեծից փոքր հերթականությամբ իրար վրա և պատմի՛ր մեծության ու գույնի մասին:

● Գտի՛ր մեծ քառակուսին: Ինչպե՞ս իմացար, որ դեղին քառակուսին ամենամեծն է (դասավորեցի իրար վրա և տեսա, որ կանաչն ու կապույտը լրիվ տեղավորվեցին դեղինի վրա, ուրեմն այն ամենամեծն է):

● Դասավորված պատկերներից ո՞ր քառակուսին է ամենավերևում (կապույտ), ո՞ր քառակուսին է ներքևում (դեղին): Դասավորի՛ր փոքրից մեծ: Հակառակ դասավորված շարքը պարզի՛ր հարցերի միջոցով:

● Նմանօրինակ վարժություններ կատարեք նաև շրջաններով և եռանկյունիներով:

● Տրված պատկերներից առանձնացրո՛ւ մեծ, միջին և փոքր պատկերները:

● Համեմատի՛ր խմբերը և ասա, որ դրանք տարբեր են գույնով, ձևով և մեծությամբ:

● Խառնի՛ր պատկերները և փորձի՛ր հետաքրքիր զարդանախշեր կազմել՝ համադրելով դրանց ձևերն ու գույները:

Գիտի՛ր նկարը:

Գունավորի՛ր ձախ և աջ կողմում նկարված պատկերները: Դեղին գույնով ներկի՛ր գծից ձախ գտնվող շրջանները, կապույտով՝ քառակուսին, կանաչով՝ եռանկյունը, նարնջագույնով՝ ուղղանկյունը, կարմիրով՝ ձվածիրը: Իսկ աջ գտնվող պատկերներից քառակուսին ներկիր կարմիրով, եռանկյունը՝ դեղինով, ուղղանկյունը՝ կարմիրով, ձվածիրը՝ շագանակագույնով:

● Գծով միացրո՛ւ աջ և ձախ կողմերի նման պատկերները: Ի՞նչ գույնի շրջաններ, եռանկյունիներ, քառակուսիներ կան:

Սա կօգնի երեխային պարզելու, որ երկրաչափական պատկերների ձևը գույնից չի փոխվում:




● Եկ փորձենք լուծել մի հետաքրքիր խնդիր ևս: Երկրաչափական տարբեր պատկերներից առանձնացրո՛ւ երկու տարբեր գույնի, բայց նույն չափի մի քանի շրջաններ:

● Շրջանները բաժանի՛ր երկու խմբի: Ո՞ր հատկանիշով կարելի է դա անել (գույնով):

● Շրջաններին ավելացրու երկու գույնի քառակուսիներ: Նորից բաժանի՛ր խմբերի (պարզի՛ր, թե բաժանման քանի տարբերակ կարելի է ընտրել՝ գույն և ձև):

Կատարի՛ր անհրաժեշտ ձևակերպումը: Կարող ես ասել՝ սրանք շրջաններ են, սրանք՝ քառակուսիներ: Ուրեմն՝ բաժանել ես ձևով ու գույնով:

☺ Խաղացե՛ք. «Ի՞նչ է ձեռքումը», «Գտի՛ր նույն ձևի, բայց տարբեր գույնի պատկեր» խաղերը:



Չ Հաճախակի խաղացեք «ես օրինաչափություն են փնտրում» խաղը: Վերցրեք երկու կամ ավելի տեսակի առարկաներ (երկրաչափական պատկերներ) և դասավորեք դրանք որևէ պարզ օրինաչափությամբ: Օրինակ՝ մեկ փոքր կոճակ, մեկ մեծ կոճակ, կրկին մեկ փոքր կոճակ, մեկ մեծ կոճակ և այլն (մեկ կարմիր, մեկ կապույտ կոճակ..., երկու մեծ կոճակ, մեկ փոքր կոճակ..., երկու եռանկյուն և մեկ քառակուսի...): Հարցրեք յուրաքանչյուր գործողությունից հետո, թե հաջորդը ինչ ձև կդնի: Սա կրկնեք այնքան, մինչև ձեր երեխան կհասկանա, թե ինչպես է կրկնվում օրինաչափությունը: Եթե բառացի բացատրությունը բավարար չէ, ապա անհրաժեշտ է ցույց տալ երեխային, թե ինչպես պետք է դա անել:

☺ Խաղացե՛ք «Ինչ պատկեր է պակաս»:

- Թվարկի՛ր առաջին նկարի առաջին տողի պատկերները:
- Երկրորդ տողի պատկերները:
- Երրորդ տողի պատկերները:
- Ո՞րն է պակաս, ինչո՞ւ ես այդպես կարծում:
- Ի՞նչ օրինաչափություն զգացիր:

Նույն ձևով էլ վերլուծել երկրորդ և երրորդ նկարները: Դա կօգնի մեկ անգամ ևս վերհիշել պատկերները, ինքնուրույն եզրահանգումներ անել և գտնել օրինաչափությունը:

Պետք է օգնել Սևականջին յուրաքանչյուր նկարում գտնել նշված օրինաչափությունները, որոշել շարքերում պակաս երկրաչափական պատկերները և լրացնել յուրաքանչյուր շարքի ազատ վանդակները:










Ջրոսանքի ժամանակ շրջակայքում փնտրեք օրինաչափություններ: Օրինակ՝ քանի պատուհան կա պատշգամբների միջև: Դրանց քանակը միշտ նո՞ւյնն է. եթե այո, ապա դուք գտել եք օրինաչափություն՝ երկու պատուհան, մեկ պատշգամբ, երկու պատուհան, մեկ պատշգամբ...

Չ Յո՛ւյց տվեք ձեր երեխային 4-5 նկար: Խնդրեք նրան նկարագրել նկարը, հետո խնդրեք նկարում գտնել օրինաչափություններ: Դրանք կարող են լինել հետևյալ տեղերում. հագուստի վրա, դարակներին, սեղանին, պատերին, հատակին:

• Օրինաչափություններ գտեք շրջակայքում՝ խանութում, շենքերի վրա, փողոցում, մեքենաների վրա: Խրախուսեք ձեր երեխային, խնդրեք նրան՝ ստեղծի, նկարի և ներկի իր սեփական օրինաչափությունը: Դուք էլ կարող եք շարունակել այն:

☺ Խաղացե՛ք «Ստեղծի՛ր նախշեր», «Շարունակի՛ր շարքը» (օրինաչափությունների փնտրում և կազմում) խաղերը: Կարող եք օգտվել պարզ գլուխկոտրուկներից, հաշվիչ փայտիկներից և երկրաչափական պատկերներից, որոնց օգնությամբ երեխաները ինքնուրույն, որոշակի օրինաչափությամբ կազմում են զարդանախշեր և պատմում կատարածի մասին (ինչպիսի պատկերից ստացան զարդանախշը և ինչպիսի դասավորվածություն ունի):

• Առաջարկե՛ք թղթե ափսեների վրա շրջանների (քառակուսիների, եռանկյունիների) միջոցով կառուցել նախշեր, կազմեք նրանցով օրինաչափություններ:



Դիտե՛ք նկարները, նկարագրեք ափսեների նախշերը, նրանց գրաված դիրքը տարածության մեջ (աջում, ձախում, վերևում, ներքևում, մեջտեղում) և առաջարկե՛ք, ըստ մնուշի, քառակուսիների, շրջանների և եռանկյունիների միջոցով թղթե ափսեների վրա նախ վերարտադրի նկարի նախշը, ապա կառուցի իր օրինաչափությունները և պատմի:

Նմանօրինակ առաջադրանքներ կատարել ուլունքներով: Օրինակ՝ թղթի ձախ կողմում կազմել ուլունքաշար շրջաններով, քառակուսիներով, եռանկյունիներով, աջ կողմում՝ օրինաչափություններ, օրինակ՝

- Շրջան, քառակուսի, շրջան, քառակուսի ...
- Քառակուսի, քառակուսի, քառակուսի, շրջան...
- Եռանկյուն, շրջան, շրջան, եռանկյուն, շրջան, շրջան...
- Երեխան առաջադրանքը կատարելուց հետո կարող է ստուգել մնուշ-օրինակի հետ:

Ավելի ուշ թելադրելով ստեղծեք օրինաչափություններ, նախշեր:

Երեխայի հետ խաղացեք «Կազմիր նախշ» խաղը: Տվեք երկրաչափական պատկերներ, դրանցով երեխան թող կազմի նախշեր: Սկզբում եթե երեխան դժվարանում է, օգնեք կազմելուն: Երկրաչափական պատկերների քանակը հինգից-վեցից չպետք է անցնի, հետո աստիճանաբար մեծացրեք պատկերների քանակը: Երկրաչափական պատկերներից երեխան կարող է ոչ միայն նախշեր, այլև սյուժետային պատկերներ կառուցել (զինվոր, տիկնիկ, տրակտոր, տնակ և այլն): Նկարների թեմաները կարող եք դուք առաջարկել, իսկ հետո նաև ինքը՝ երեխան:

Օրինաչափություններ կարելի է կազմել նաև տարբեր մանր առարկաներով: Օրինակ՝

- նկարագրել մատների զարգացմանը նպաստող վարժություններ.
- մատներով տրորել պլաստիլինը կամ կավը.
- մատներով սեղանի վրա պտտեցնել մանր ուլունքներ, գնդիկներ.
- երկու մատներով հարվածել սեղանին, գլորել թևի, ոտքերի վրայով.
- բոլոր մատներով հարվածել սեղանին.
- կապել և քանդել հաստ ու բարակ պարաններ, կոշիկի կապեր.
- տարբեր մեծության կոճակներ, ուլունքներ շարել թելի վրա.
- կոճկել և քանդել կոճակները, շրթա.
- միայն մեկ ձեռքի մատներով նկարել տարբեր երկրաչափական պատկերներ,

թվանշաններ.

- սեղմել և բաց թողնել ռետինե խաղալիքներ, գնդակներ, սպումգներ:

Դիտե՛ք նկարները, նկարագրեք ափսեների նախշերը, նրանց գրաված դիրքը տարածության մեջ (աջում, ձախում, վերևում, ներքևում, մեջտեղում) և առաջարկե՛ք, ըստ նմուշի, քառակուսիների, շրջանների և եռանկյունիների միջոցով թղթե ափսեների վրա նախ վերարտադրի նկարի նախշը, ապա կառուցի իր օրինաչափությունները և պատմի:

Նմանօրինակ առաջադրանքներ կատարել ուլունքներով: Օրինակ՝ թղթի ձախ կողմում կազմել ուլունքաշար շրջաններով, քառակուսիներով, եռանկյունիներով, աջ կողմում՝ օրինաչափություններ, օրինակ՝

- Շրջան, քառակուսի, շրջան, քառակուսի ....
- Քառակուսի, քառակուսի, քառակուսի, շրջան...
- Եռանկյուն, շրջան, շրջան, եռանկյուն, շրջան, շրջան...
- Երեխան առաջադրանքը կատարելուց հետո կարող է ստուգել նմուշ-օրինակի հետ:

Ավելի ուշ թելադրելով ստեղծեք օրինաչափություններ, նախշեր:

Երեխայի հետ խաղացեք «Կազմիր նախշ» խաղը: Տվեք երկրաչափական պատկերներ, դրանցով երեխան թող կազմի նախշեր: Սկզբում եթե երեխան դժվարանում է, օգնեք կազմելուն: Երկրաչափական պատկերների քանակը հինգից-վեցից չպետք է անցնի, հետո աստիճանաբար մեծացրեք պատկերների քանակը: Երկրաչափական պատկերներից երեխան կարող է ոչ միայն նախշեր, այլև սյուժետային պատկերներ կառուցել (զինվոր, տիկնիկ, տրակտոր, տնակ և այլն): Նկարների թեմաները կարող եք դուք առաջարկել, իսկ հետո նաև ինքը՝ երեխան:


Օրինաչափություններ կարելի է կազմել նաև տարբեր մանր առարկաներով: Օրինակ՝

- նկարագրել մատների զարգացմանը նպաստող վարժություններ.
- մատներով տրորել պլաստիլինը կամ կավը.
- մատներով սեղանի վրա պտտեցնել մանր ուլունքներ, գնդիկներ.
- երկու մատներով հարվածել սեղանին, գլորել թևի, ոտքերի վրայով.
- բոլոր մատներով հարվածել սեղանին.
- կապել և քանդել հաստ ու բարակ պարաններ, կոշիկի կապեր.
- տարբեր մեծության կոճակներ, ուլունքներ շարել թելի վրա.
- կոճկել և քանդել կոճակները, շրթա.
- միայն մեկ ձեռքի մատներով նկարել տարբեր երկրաչափական պատկերներ,




թվանշաններ.

- սեղմել և բաց թողնել ռետինե խաղալիքներ, գնդակներ, սպումգներ:

Փոխի՛ր գույնը




Փոխի՛ր ձևը




Սլաքով բաժանիր ենթախմբերի


գույնով



ձևով



մեծությամբ





Գիտարկե՛ք նկարները:

● Խնդրեք երեխային ազատ քառակուսիների մեջ ցանկացած գույնով նկարել պահանջված երկրաչափական պատկերները, ապա տալ երկրաչափական պատկերների նշված առաջադրանքները, որոնք հնարավորություն կտան երեխային դիտարկել, նկարագրել և տարբերակել այդ պատկերների հատկանիշները:

● Գիտարկեք հաջորդ նկարը և հարցրեք.

- Քանի՞ եռանկյունի և քանի շրջան է նկարված (երկու շրջան, երեք եռանկյունի), ապա թելադրեք, որ առաջին ազատ ուղղանկյան մեջ նկարի երկու շրջան և շրջան ու եռանկյունի, երկրորդ ուղղանկյան մեջ նկարի երեք եռանկյունի և շրջան:

● Առաջարկել նշված կապույտ գույնի եռանկյան դիմաց՝ աջ կողմում, նկարել եռանկյունի և ներկել մեկ այլ գույնով: Նույն գործողությունը կատարել քառակուսու, շրջանի և ուղղանկյան հետ: Երեխային բերել այն համոզման, որ նույն երկրաչափական պատկերը տարբեր գույների կարող է լինել:

● Դիտի՛ր առաջին նկարը և գունավորի՛ր շրջանները և քառակուսին կապույտով, մեծ շրջանը և քառակուսին՝ կարմիրով:

● Քանի՞ խմբի բաժանեցիր երկրաչափական պատկերներն ըստ գույնի (երկու):

● Դիտի՛ր երկրորդ նկարը և խմբավորի՛ր ըստ ձևի և պատմի՛ր (մեծ ու փոքր շրջաններ, մեծ ու փոքր քառակուսիներ):

Երրորդ նկարը խմբավորել ըստ մեծության (մեծ ու փոքր շրջաններ և մեծ ու փոքր քառակուսիներ):

Խմբավորման աշխատանքներ կատարեք նաև առարկաների օգնությամբ:

Օրինակ՝ խմբավորի՛ր կոճակներն ըստ գույնի. մի տուփի մեջ կապույտ կոճակները, մյուսի մեջ՝ կարմիրները.

● մեծությամբ - մի խմբում երկար ֆլումաստերներ են, մյուսում՝ կարճ, մի խմբում բարձր աշտարակներ են, մյուսում՝ ցածր...

● ձևով - սեղանի աջ կողմում քառակուսիներ են, ձախում՝ եռանկյունիները: Հասնել նրան, որ երեխան ընդհանրացնի կատարած աշխատանքը:

● սրանք բոլորը մեծ (փոքր) են, սրանք բոլորը կարմիր են՝ օգտագործելով հատկանիշը բնորոշող անհրաժեշտ ճիշտ բառեր:

Օրինակ՝ խաղացե՛ք «Ո՞րն է այս խմբից, իսկ ո՞րը՝ ոչ» խաղը:


☺ Տեղադրե՛ք սկուտեղի մեջ երկար կամ կարճ, մեծ-փոքր, կարմիր և ոչ կարմիր առարկաներ: Դուք սկսեք խաղը՝ վերցնելով մի առարկա և ասելով՝ սա այս խմբից է, որովհետև (ընտրեք որևէ հատկանիշ, ըստ որի տեսակավորելու եք, օրինակ՝ «կարմիր») նա կարմիր է:

● Հետո ձեր երեխան ընտրում է մի առարկա և որոշում է՝ այն ո՞ր խմբից է: Եթե այն կարմիր է, ուրեմն այդ խմբից է, եթե կարմիր չէ, ուրեմն՝ ոչ: Կարող է երեխան առաջարկի, դուք գուշակեք:

● Շարունակեք հերթով խաղալ, մինչև բոլոր առարկաները խմբավորվեն:

Եթե այս առաջադրանքները դժվար են ձեր երեխայի համար, կրկնեք այն տարբեր առարկաներով, որպեսզի երեխան խմբավորման փորձ ձեռք բերի:

Մենք հուսով ենք, որ դուք հաճույք կստանաք այս վարժությունները միասին կատարելուց:



Սևականջը մտքով դեռ պահմտոցի էր խաղում, երբ հանկարծ հայտնվեց մի գեղեցիկ տան առջև փոված երկրաչափական պատկերների այգում:

Նա զարմանքով նկատեց, որ իրեն ծանոթ երկրաչափական պատկերներից են և՛ տունը, և՛ ծառերը, նույնիսկ օդում ճախրող թիթեռները, թռչուններն ու արևը, մի խոսքով, ամեն-ամեն ինչ:

● Ինչպիսի՞ մեծ ու փոքր երկրաչափական պատկերներ տեսավ Սևականջը:

☞ Նայի՞ր նկարին և պատմի՞ր, թե ինչ երկրաչափական պատկերներից են կառուցված տունը, ծառերը, թիթեռը, զատիկը, մեղուն:

● Փորձիր գունավորել կարմիր գույնով բոլոր շրջանները, կապույտ գույնով՝ քառակուսիները, կանաչով՝ եռանկյունիները, դեղինով՝ ուղղանկյունները, իսկ ձվածիրները գունավորի՞ր նարնջագույնով:

☼ Սևականջը այգում խաղում է: Նրա հետ խաղա և դու:


● Ահա նա քեզ տրամադրում է տարբեր գույնի և մեծության խմորագնդեր և պահանջում պատրաստել երկրաչափական տարբեր պատկերներ և պարզել, թե ինչով են դրանք նման և տարբեր:

☞ Օգտվելով նմուշ-օրինակներից՝ ինքնուրույն նկարի՞ր, կտրի՞ր, ապա անվանի՞ր երկրաչափական պատկերները՝ նշելով հատկանիշները:

● Ափսեի մեջ լցրո՛ւ շաքարավազ այնքան, որ ծածկի հատակը և մատով նկարի ցանկացած երկրաչափական պատկեր (նույնը կարող ես անել ավազի վրա՝ այս անգամ նկարելով փայտիկով):

● Սևականջն առաջարկում է նաև բակում՝ ասֆալտի վրա, նկարել նույն կամ տարբեր մեծության շրջան, քառակուսի, եռանկյուն, ուղղանկյուն և ձվածիր իրար կողքի այնպես, որ հեշտ լինի ցատկել մեկից մյուսը: Ցատկի՞ր երկու ոտքով և բարձրաձայն անվանի՞ր այն պատկերը, որի վրա կանգնած ես:

Սկսեք և ավարտեք յուրաքանչյուր առաջադրանքների շարքը հաջողությամբ կատարած առաջադրանքով: Դժվար առաջադրանքը համատեղեք ավելի հեշտ առաջադրանքի հետ: Սա կօգնի թուլացնել երեխայի լարվածությունը և հնարավորություն կտա մոռանալ անհաջողությունները:



☼ Սևականջիկը շարունակեց ճամփորդությունը ու հանկարծ հայտնվեց տան սենյակներից մեկում:

Այ՛քեզ զարմանք. սենյակում ամեն ինչ, ամեն մի իր հիշեցնում էր իր նոր բարեկամներին՝ երկրաչափական պատկերներին:

- Պատկերացրո՛ւ, որ դու էլ փիսիկի հետ հայտնվել ես այդ նույն սենյակում:

- Նախ փնտրի՛ր, գտի՛ր և անվանի՛ր այն բոլոր առարկաները, որոնք ձվածիք են (քառակուսածև են, եռանկյունածև են, ուղղանկյունածև են, շրջանածև են):

- Ի՞նչ ես տեսնում սենյակի ձախ անկյունում (աջում):

- Ի՞նչ պատկերներից է կազմված զարդասեղանը (բազմոցը, աթոռը, հատակի գորգը, ջահը), ի՞նչ ձև ունի ճաշասեղանը (աթոռի հենափայտը) և սենյակի ո՞ր մասում են դրանք (մեջտեղում, վերևում, աջ, ձախ կողմում...)

- Նկարագրի՛ր սեղանին դրված իրերը: Ասա՛ ինչի՞ ձև ունեն դրանք:

☞ Ուշադիր դիտի՛ր պատից կախված գորգը և ասա՛ գորգի զարդանախշերն ըստ շարքերի, ինչ օրինաչափությամբ, հերթականությամբ և ինչ երկրաչափական պատկերներով են կառուցվել: (Օրինակ՝ առաջին շարքում եռանկյունիներն են, երկրորդում շրջանակներն են, երրորդում՝ քառակուսիներ, չորրորդում՝ եռանկյունիներ, հինգերորդում՝ շրջանակներ և քառակուսիներ):

- Ի՞նքդ թղթի վրա ստացի՛ր նման մի զարդանախշ:

☼ Հագուստի ի՞նչ տեսակներ կարելի է ձևավորել այդ զարդանախշով (գլխարկ, ձեռնոց, գուլպա, շրջագգեստի թևքեր, փեշեր, կիսաշրջագգեստ և այլն):

- Նկարի՛ր գլխարկ և վզնոց՝ այն ձևավորելով երկրաչափական պատկերներով և քո երևակայությամբ զարդանախշ հորինելով. պահպանի՛ր երկրաչափական պատկերների հերթականությունը (երկու կարմիր, մեկ կապույտ): Նախշերը աստիճանաբար բարդացրու (երկու կարմիր + երկու կապույտ) (նախ պետք է համոզվել, որ նախորդ նախշը յուրացված է):







☞ Ի՞նչ կասես պատից կախված նկարի մասին (տես նկար):

- Ի՞նչ երկրաչափական պատկերներ են պետք եկել հատակի գորգի նախշերը ստանալու համար:

- Ի՞նչ պատկերներից է կազմված զարդասեղանը և սենյակի ո՞ր կողմում է այն դրված:

- Ժամացույցն ի՞նչ ձև ունի և որտե՞ղ է կախված:

- Ի՞նչե՞ր ես տեսնում զարդասեղանի առջևում՝ հատակին:



Այսպես Սևականջիկն անցավ ամբողջ մի սենյակից մյուսը և հանդիպեց բազմաթիվ առարկաների, որոնք ևս նման էին երկրաչափական որևէ պատկերի, իսկ ամենազարմանալին այն էր, որ նրանք խոսում էին փիսիկի հետ:

Սենյակներից մեկում Սևականջիկը ծանոթացավ ուրախ ու զվարճախոս ակնոցի, զվարճասեր ճանապարհորդ ճամպրուկի, շատ խոսելուց հոգնած ու քնած հեռուստացույցի, անընդհատ արև ու անձրևի մասին պատմող հովանոցի հետ:

Նայի՛ր այս առարկաներին և ասա՝ դրանցից ո՞րն է շրջանաձև (քառակուսաձև, եռանկյունաձև, ուղղանկյունաձև):

Սենյակներից մեկ ուրիշում հյուք հյուրասիրեցին Սևականջին:

Սևականջն իր թավշյա մորթին ու ցցված բեղերը կարգի բերեց՝ իրեն զննելով ձվաձև հայելու մեջ:

● Գիտի՛ր և ասա՝ է՛լ ինչ կար սենյակում: Ի՞նչ ձև ունեն նկարը, ժամացույցը, ակվարիումը: Իսկ ի՞նչ ձև ունեն բաժակները (հայելին):

● Սևականջն էլ ոգևորված քեզ առաջարկում է խաղասենյակում՝ գորգի վրա, մեծի օգնությամբ դասավորես առարկաներ և յուրաքանչյուր առարկայի կողքին դնես այն երկրաչափական պատկերը, որն իր ձևով նման է առարկային:


● Սևականջիկը ցույց է տալիս շրջան և ձվաձևի ու խնդրում քեզ՝ սեղանի վրա դրված մրգերի ու բանջարեղենների կողքին դնես այն պատկերը, որը ձևով նման է նրան:

● Վերջում անվանի՛ր և նկարի՛ր այնպիսի մրգեր, որոնք լինեն օրինակ՝ դեղին գույնի և ձվաձևի (կիտրոն), շրջանաձև և ծիրանագույն (նարինջ):

☺ Հրավիրի՛ր քո ընկերներին և խաղա՝ որոշակի ձև ունեցող առարկաների «որս» խաղը:

Անցնելով սենյակից սենյակ՝ մեկը թող անվանի որևէ երկրաչափական պատկեր, օրինակ՝ շրջան, իսկ մյուսները թող գտնեն շրջանաձև առարկաներ (ջահ, ժամացույց, հայելի, սեղան...): Հետո մեկ ուրիշն ասում է «քառակուսի» բառը, մյուսները որոնում են և թվարկում քառակուսաձև առարկաներ (բազմոց, գորգ...): Եթե երեխաները դժվարանում են առարկաներ գտնելը, ապա կարելի է հուշող հարցեր տալ, օրինակ՝ «Ափստեն ի՞նչ ձև ունի, իսկ ձմերու՞կը, նկարի շրջանակը ի՞նչ ձև ունի և այլն»:

Երեխայի հետ հաճախակի օգտագործեք «շրջան-շրջանաձև», «քառակուսաձև», «ուղղանկյունաձև» բառերը: Խաղացեք «Ո՞վ է ամենաուշադիրը», «Ո՞վ ավելի շատ կանվանի», «Գտի՛ր նույն ձևի պատկեր», «Գտի՛ր նույն ձևի առարկա» խաղերը:





Հանկարծ սեղանին դրված զարթուցիչը ուժգին զրնգաց, և Սևականջիկը անսպասելիորեն հայտնվեց կրկեսում:

- Պատմի՛ր՝ ինչ տեսավ նա կրկեսային ներկայացման ժամանակ:

- Ի՞նչ է անում ծաղրածուն (փոկը):

- Ի՞նչ պատկերներից կազմված աշտարակի վրա է կանգնած ծաղրածուն:

- Ի՞նչ երկրաչափական պատկերներից են փուչիկները:

- Նկարագրի՛ր՝ երկրաչափական ինչ պատկերներ են տեսնում կրկեսի արեմայի գորգին, ծաղրածուի զգեստին:

- Ներկի՛ր նկարը:

- Իսկ հիմա, դիտելով նկարը, համեմատի՛ր ծաղրածուի ձախ ձեռքի շրջանաձև փուչիկը և փոկի գնդակը: Ինչո՞վ են դրանք նման և ինչո՞վ տարբեր (նման են ձևով՝ գնդաձև են և տարբեր են գույնով՝ գնդակը՝ դեղին, փուչիկը՝ կարմիր), տարբերվում են նաև մեծությամբ (գնդակը մեծ է, փուչիկը՝ փոքր):

Սեղանին դի՛ր հինգ վարդագույն և մեկ դեղին խորանարդ: Ինչո՞վ են նման և ինչո՞վ տարբեր (բոլորն էլ պլաստմասայից են, խորանարդիկներ են): Տարբերվում են գույնով:

- Դրանք դիր տուփերի մեջ՝ խմբավորելով ըստ գույների՝ մեկում՝ հինգ վարդագույնը, մյուսում՝ մեկ դեղինը, ասա՛, որ դրանք նման են ձևով, բայց տարբեր են գույնով:

- Քեզ տալիս են գույնով ու ձևով տարբեր պատկերներ: Դու պետք է առանձնացնես գույնով ու մեծությամբ տարբեր պատկերները. օրինակ՝ ձախ կողմում առանձնացրու միայն բոլոր մեծ շրջանները (....., .....), աջ կողմում՝ փոքր շրջանները (....., .....):















Իսկ հիմա մեծ շրջանների միջից ընտրի՛ր և առանձնացրու՛ միայն կարմիրները, իսկ փոքրերի միջից՝ միայն կապույտները:

- Բացատրի՛ր, որ դրանք նույնն են գույնով ու ձևով: Պարզի՛ր՝ ինչն է ընդհանուր այս պատկերներում:

- Քեզ տալիս են նմանատիպ կտրատված պատկերներ և առաջարկում դրանք բաժանել երկու խմբի՝ անկյուններ ունեցողները դնելով ձախ կողմում, իսկ անկյուններ չունեցողները՝ աջ կողմում:

- Երեխայի հետ համեմատեք երկու խմբերի պատկերները և ասացեք՝ ինչով են տարբեր և ինչով են նման:

Անկյուն ունեցողների խմբի մեջ երեխան պետք է հավաքի քառակուսի, եռանկյունի, ուղղանկյունի և ասի, որ այդ երկրաչափական պատկերներն ունեն ոչ միայն անկյուններ, այլև կողմեր և գագաթներ: Իսկ անկյուն չունեցողների խմբում պետք է հավաքի շրջանը և ձվածիրը և ասի, որ դրանք չունեն ո՛չ անկյուն, ո՛չ կողմ, ո՛չ գագաթ:

Սակայն ամենադժվարը վերջին փորձությունն էր, որում հայտնվեց մեր խելոք ու քաջ փիսիկը:

Վերջիվեջո եկել էր ամրոցից դուրս գալու և տուն վերադառնալու ժամանակը:

Ահա նա խիստ մտահոգ է, որովհետև չգիտի՝ կարող է լուծել այն երկու գլուխկոտրուկը, որի օգնությամբ միայն պիտի բացվեն ամրոցի դարպասները:

⊗ Առաջին գլուխկոտրուկը լուծելու համար առաջարկվում էր բացել երեք փակ ծրարները, որոնց մեջ կան երկրաչափական պատկերներ: Օգնի՛ր նրան՝ որոշելու այդ պատկերների նմանություններն ու տարբերությունները:

Ահա ակնկալվող պատասխանները.

● Առաջին ծրարում երկու պատկերներն էլ կապույտ են, բայց նրանցից մեկը քառակուսի է, իսկ մյուսը՝ շրջան: Պատասխանի՛ր՝ ասելով, որ դրանք ձևով տարբեր են, իսկ գույնով՝ նման:

● Երկրորդ ծրարի մեջ երկու եռանկյունի է: Դրանք նույնն են ձևով, բայց տարբեր են գույնով՝ կապույտ և կարմիր:

● Երրորդ ծրարում ուղղանկյուն և ձվածիր է: Դրանք ընդհանուր են չափերով, բայց տարբեր են գույնով և ձևով՝ ձվածիրը կանաչ է, իսկ ուղղանկյունը՝ ծիրանագույն:

● Հաջորդ գլուխկոտրուկը լուծելու համար պետք է օգնես փիսիկին շարքերում գտնել վերևում նշված օրինաչափությունները, պատմել յուրաքանչյուրի մասին (Օրինակ՝ առաջին օրինաչափությունը կազմված է քառակուսի, քառակուսի, եռանկյուն, շրջան) և նույնությամբ, ըստ օրինակների, լրացնել շարքի ազատ վանդակները:

● Որոշակի ժամանակի ընթացքում լրացրո՛ւ այս աղյուսակը, եթե ոչ՝ փիսիկին չի հաջողվի ամրոցից դուրս գալ, հետևաբար նա երբեք չի արթնանա քնից:

♪ Ապրե՛ս, դու կարողացար քաջությամբ և առանց վախի հաղթահարել նաև այս արգելքը, դարպասները բաց են:

Հետևեք՝ արդյոք ձեր երեխան ունի՞ որոշ հմտություններ, որոնք պետք են դպրոց գնալուց առաջ: Օրինակ՝

● հետևել մեծահասակի տված ցուցումներին.

● կարողանալ արտահայտվել.

● ուշադիր լինել և հանգիստ նստել.

օգտագործում է ինչո՞ւ և ինչպե՞ս հարցերը:



Սենյակի մեծ ժամացույցի զանգերն ազդարարեցին գիշերվա ժամը 12<sup>00</sup>-ը, և Սևականջիկն արթնացավ:

«Այ քեզ հեքիա՛ք», - մռռաց փիսիկը՝ տրորելով աչքերը:

Երբ նա մի քիչ ուշքի եկավ, իր առջև՝ սենյակի կենտրոնում, տեսավ մի մեծ եռանկյունաձև եղևնի՝ ամբողջովին կանաչ հագած: Իսկ ամենազարմանալից այն էր, որ եղևնին զարդարված էր երկրաչափական պատկերների ձևն ունեցող լամպերով:

Սևականջիկը երեք անգամ պտտվեց տոնածառի շուրջը, ապա մռռալով փովեց տաք բուխարու մոտ և նրան թվաց, թե դեռ երազի մեջ է, բայց հանկարծ նկատեց, որ տոնածառը զարդարող պատկերներ-լապտերների օրինաչափությունը խախտված է (առաջին շարքում՝ մեկ, երկրորդում՝ երկու, իսկ երրորդում երեք լամպ է պակասում): Եթե փիսոն գտնի յուրաքանչյուր շարքում պակաս պատկեր-լապտերը ու լրացնի այն, անմիջապես կվառվեն տոնածառի բազմագույն լույսերը:

Դե՛, այստեղ ևս պետք է գալու քո օգնությունը. չէ՞ որ դու ես վառելու տոնածառի լույսերը:

- Քանի՞ շարքով են կախված լույսերը:

- Ասա՛ առաջին շարքի պատկերների օրինաչափությունը (քառակուսի, շրջան, եռանկյունի...):

• Գտի՛ր պակաս պատկերը առաջին շարքում (... քառակուսի):

• Ասա՛ երկրորդ շարքի պատկերների օրինաչափությունը: (ձվածիր-եռանկյունի-եռանկյունի...)


• Գտի՛ր պակաս պատկերները և լրացրո՛ւ երկրորդ շարքը (ձվածիր-եռանկյունի-եռանկյունի...)

• Նույնը կատարի՛ր երրորդ շարքում (Երրորդ շարքում պակասում է ուղղանկյունը, շրջանը, քառանկյունը):

Գունավորի՛ր նախ եղևնին, ապա լույսերն այնպես, որ Սևականջիկի տոնածառը լինի ամենագեղեցիկն ու հիասքանչը:

Երեխայի հետ խաղացե՛ք «Անվանի՛ր նույն ձևի առարկա», «Անվանի՛ր՝ ի՞նչ է թաքնված», «Առանձնացրո՛ւ բոլոր կարմիր շրջանները», «Առանձնացրո՛ւ մեծ քառակուսիները» և այլն:

• Ինչպես տեսնում ես, Սևականջիկը ուշադիր զննում է զնդակը և մտածում. «Շրջանը ինձ միշտ հիշեցնում է մանկությունս, երբ մայրիկս իմ ծննդյան օրվա առթիվ տոբթ էր թխում, և այն միշտ շրջանաձև էր ու շատ համեղ: Սեղանին մեծ մրգամանով դնում էր զնդի ձև ունեցող մրգեր, օրինակ՝ խնձոր, բալ, նարինջ... (Իսկ դու կարո՞ղ ես հիշել այդպիսի մրգեր): Հաճախ նվեր էի ստանում խաղալիքներ, որոնք շրջանի ձև ունեին: (Դու կարո՞ղ ես գուշակել, թե ինչ խաղալիքներ կարող էին լինել դրանք): Իսկ ինչքա՛ն զվարճալի կլիներ, եթե մայրիկիս բարձերը շրջանաձև լինեին, ինչպես ցանկանայի՛ կզլորեի»:



Սենյակի մեծ ժամացույցի զանգերն ազդարարեցին գիշերվա ժամը 12<sup>00</sup>-ը, և Սևականջիկն արթնացավ:

«Այ քեզ հեքիա՛թ», - մոռաց փիսիկը՝ տրորելով աչքերը:

Երբ նա մի քիչ ուշքի եկավ, իր առջև՝ սենյակի կենտրոնում, տեսավ մի մեծ եռանկյունաձև եղևնի՝ ամբողջովին կանաչ հագած: Իսկ ամենագարմանալին այն էր, որ եղևնին զարդարված էր երկրաչափական պատկերների ձևն ունեցող լամպերով:

Սևականջիկը երեք անգամ պտտվեց տոնաձառի շուրջը, ապա մոռալով փռվեց տաք բուխարու մոտ և նրան թվաց, թե դեռ երագի մեջ է, բայց հանկարծ նկատեց, որ տոնաձառը զարդարող պատկերներ-լապտերների օրինաչափությունը խախտված է (առաջին շարքում՝ մեկ, երկրորդում՝ երկու, իսկ երրորդում երեք լամպ է պակասում): Եթե փխտն գտնի յուրաքանչյուր շարքում պակաս պատկեր-լապտերը ու լրացնի այն, անմիջապես կվառվեն տոնաձառի բազմագույն լույսերը:

Դե՛, այստեղ ևս պետք է գալու քո օգնությունը. չէ՞ որ դու ես վառելու տոնաձառի լույսերը:

- Քանի՞ շարքով են կախված լույսերը:

- Ասա՛ առաջին շարքի պատկերների օրինաչափությունը (քառակուսի, շրջան, եռանկյունի...):

• Գտի՛ր պակաս պատկերը առաջին շարքում (... քառակուսի):

• Ասա՛ երկրորդ շարքի պատկերների օրինաչափությունը: (ձվածիր-եռանկյունի-եռանկյունի...)




• Գտի՛ր պակաս պատկերները և լրացրո՛ւ երկրորդ շարքը (ձվածիր-եռանկյունի-եռանկյունի...)

• Նույնը կատարի՛ր երրորդ շարքում (Երրորդ շարքում պակասում է ուղղանկյունը, շրջանը, քառանկյունը):

👉 Գունավորի՛ր նախ եղևնին, ապա լույսերն այնպես, որ Սևականջիկի տոնաձառը լինի ամենագեղեցիկն ու հիասքանչը:

😊 Երեխայի հետ խաղացե՛ք «Անվանի՛ր նույն ձևի առարկա», «Անվանի՛ր՝ ի՞նչ է թաքնված», «Առանձնացրո՛ւ բոլոր կարմիր շրջանները», «Առանձնացրո՛ւ մեծ քառակուսիները» և այլն:

• Ինչպես տեսնում ես, Սևականջիկը ուշադիր զննում է զնդակը և մտածում. «Շրջանը ինձ միշտ հիշեցնում է մանկությունս, երբ մայրիկս իմ ծննդյան օրվա առթիվ տոբ էր թխում, և այն միշտ շրջանաձև էր ու շատ համեղ: Սեղանին մեծ մրգամանով դնում էր զնդի ձև ունեցող մրգեր, օրինակ՝ խնձոր, բալ, նարինջ... (Իսկ դու կարո՞ղ ես հիշել այդպիսի մրգեր): Հաճախ նվեր էի ստանում խաղալիքներ, որոնք շրջանի ձև ունեին: (Դու կարո՞ղ ես գուշակել, թե ինչ խաղալիքներ կարող էին լինել դրանք): Իսկ ինչքա՛ն զվարճալի կլինեք, եթե մայրիկիս բարձերը շրջանաձև լինեին, ինչպես ցանկանայի՛ կզլորեի»:





Սովորեցնել երեխային երկրաչափական պատկերները երկու և չորս հավասար մասերի բաժանելու միջոցով ստանալ նոր երկրաչափական պատկերներ՝ ասելով. «Պատկերացրո՛ւ, որ դու կախարդ ես և կախարդական փայտիկի մի հպումով մեկ երկրաչափական պատկերից կարող ես մեկ այլ երկրաչափական պատկեր ստանալ. օրինակ՝ քառակուսին կարող ես բաժանել անկյունագծերով և ստանալ երկու կամ չորս եռանկյուն, երկու ուղղանկյուն: Փորձի՛ր, քեզ մոտ կստացվի, ապա անվանիր ստացված պատկերները: Իսկ հիմա նորից կախարդիր և, ստացված մասերն իրար միացնելով, ստացիր ամբողջական պատկերն ու անվանի՛ր այն»:

Նույն գործողությունները կատարել ուղղանյան հետ և անվանել պատկերները: Թո՛ւյլ տվեք երեխային, որ սեփական կարծիքը ինքնուրույն արտահայտելու փորձեր կատարի:

☺ Խաղացե՛ք Սևականջիկի հետ «Ծննդյան տոբք» խաղը: Ասացե՛ք, որ Սևականջը ծննդյան օրվա առօրիվ տոբքով ուզում է հյուրասիրել քեզ: Ցույց տվեք երեխային թրթե քառակուսածև «տոբք» և հարցրեք, թե ինչպես պետք է կտրել «տոբքը», որ ստացվի երկու, չորս եռանկյուն, երկու ուղղանկյուն: Դրա համար առաջարկե՛ք, որ նախատեսված թուղթը երեխան սկզբում մատիտով գծիկներով բաժանի մասերի և պատմի կատարած գործողության մասին ու անվանի ստացված մասերը:











Սովորեցրե՛ք երկրաչափական պատկերներից ստանալ սյուժետային պատկերներ:

Իսկ հիմա եկ անվանենք այն կենդանիներին, որոնք հյուր են եկել Սևականջիկին: Ի՞նչ երկրաչափական պատկերներից է կազմված Սևականջիկի եղբայրը: Հաշվի՛ր, քանի եռանկյուն է անհրաժեշտ փիսիկին կառուցելու համար: Հետո նույն քանակի, բայց ավելի մեծ եռանկյունիներից ստացիր մեկ այլ փիսիկ: Համեմատի՛ր նախորդի հետ և ասա՛ տարբերությունը (տարբեր են չափով):

Նմանօրինակ առաջադրանքների օգնությամբ երեխայի հետ ստացեք «բուխ», «գորտի», «աքաղաղի», «նապաստակի», «մկնիկի», «այծիկի» և տիկնիկների պատկերները յուրաքանչյուր անգամ պատմելով ինչու և ինչ մեծության պատկերներից ստացվեց:

✎ Աշխատելու ընթացքում երեխային բերեք այն համոզման, որ հարկ չկա այս կամ այն կողմ շրջել շրջանը: Այն մնում է նույնը: Կարևոր չէ նաև, թե քառակուսին որ կողմից կդնես. չէ՞ որ նրա չորս կողմերն էլ հավասար են: Ուրիշ է ուղղանկյունը. նրա միայն երկու կողմերն են հավասար:

Հիշե՛ք, որ սրանով դուք երեխային պարզում եք ստեղծագործելու բերկրանք:







Մինչ դուք խոհանոցում ձեր գործով եք զբաղվում, երեխային տվեք գլխիկները կտրված լուցկու հատիկներ կամ հաշվիչ փայտիկներ, և երեխան դրանցով ոչ միայն հաշվել կսովորի, այլև կկառուցի երկրաչափական պատկերներ:

☉ Եթե երեխան գիտի բոլոր երկրաչափական պատկերները, առաջարկեք տարբեր քանակի լուցկու հատիկներից ստանալ երկրաչափական պատկերներ: Կարելի է նախապես ասել հանելուկ կամ վերհիշել երկրաչափական պատկերները՝ տալով այսպիսի առաջադրանքներ:

- Այդ պատկերն ունի երեք կողմ, երեք անկյուն, երեք գագաթ:
- Իսկ այս պատկերն ունի չորս կողմ, չորս անկյուն, չորս գագաթ:
- Այդ պատկերն ունի չորս կողմ, որից երկու կողմերն են իրար հավասար:

🎵 Երեխային բերել այն համոզման, որ որքան երկրաչափական պատկերների կողմերը մեծ են (հաշվիչ փայտիկները քանակով շատ են), ապա մեծ է նաև պատկերը և՛ հակառակը: Խնդրեք երեխային, որ մեծից փոքր չորս քառակուսի, եռանկյունի կառուցի (տե՛ս նկարը):

👉 Ապա կատարե՛ք երկրաչափական պատկերների ստեղծման հետևյալ առաջադրանքները.

- Երեք փայտիկից ստացի՛ր եռանկյուն :
- Չորս փայտիկից ստացի՛ր քառակուսի :
- Հինգ փայտիկից՝ երկու եռանկյուն :
- Յոթ փայտիկից՝ երկու քառակուսի :

😊 Խաղացե՛ք երեխայի հետ «Հմուտ ձեռքեր» խաղը:

Առաջարկե՛ք երեխային հաշվիչ փայտիկների օգնությամբ ստանալ նաև ցանկացած բովանդակության պատկեր՝ տուն, եղևնի, հեռուստացույց, նավ և այլն: Խնդրե՛ք, որ երեխան պատմի անկյունների, կողմերի մասին:

Խաղացե՛ք «Փայտիկներից կազմիր քո ցանկացած պատկերը» խաղը:

🎵 Հնարավոր է, որ սկզբում նմանօրինակ խաղերը երեխային չհետաքրքրեն, այդ իսկ պատճառով կարելի է որոշ ժամանակով հետաձգել այս խաղի ներմուծումը:

- Խաղացե՛ք «Կազմիր պատկեր» խաղը:

Խաղի ընթացքում երեխան մտահղացմամբ կտրտված երկրաչափական պատկերներից ստեղծում է սյուժետային պատկերներ՝ տուն, եղևնի, մարդ, ձնեմարդ, կենդանի և այլն:



Պահանջե՛ք նրանից պատմել, թե ինչ է արել, ինչպես է արել, արդյունքում ինչ է ստացել:

Կարելի է յուրաքանչյուր երկրաչափական պատկերի մասին պատմել մի պատմություն, ապա դրանցից ստանալ սյուժետային պատկեր և պատմել այն: Օրինակ՝

☉ «Մի անգամ՝ Նոր տարվա նախօրյակին, երեխաները Ձնեմարդ պատրաստեցին և խնդրեցին նրան, որ գնա Ձմեռ պապի մոտ և խնդրի, որ իրենց համար տոնածառ ուղարկի: Առավոտյան հենց բակում նրանք տեսան փարթամ ու մշտադալար տոնածառը և շատ ուրախացան»:

Այս պատկերը կարելի է ստանալ այսպես. օրինակ՝ երեք տարբեր չափի շրջաններով (մեծից փոքր) ստանալ ձնեմարդ, եռանկյունուց՝ եղևնի և այլն:

Առաջադրանքը կարելի է փոխել՝ հաշվի առնելով երեխայի անհատական զարգացման մակարդակը:



ସମ୍ପାଦନା କର୍ତ୍ତା

## ԽՈՐՀՈՒՐԿ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Սովորեցնել երեխաներին տարբերել տարածական ուղղությունները՝ աջ, ձախ, առաջ, հետ, վերև, ներքև, մեջտեղ, տակ, վրա և խոսքում օգտագործել համապատասխան հասկացությունները:

- Տարածական ուղղություններ տարբերելու համար սկզբնական շրջանում հիմք պետք է համդիստանա սեփական մարմնի մասերի տարբերակումը և իրենով կողմերի որոշումը: Այսպես՝ «առջևից» հասկացությունը երեխաները կապում են իրենց դեմքի հետ, իսկ «հետևից»-ը՝ քիկուների, «վերև»՝ գլխի, «աջ» և «ձախ» անվանումը՝ ձեռքերի հետ կատարվող գործողությունների հետ (Աջով ուտում ենք, նկարում..., դուռն իմ աջ կողմում է, իսկ ձախում՝ պատուհանը):

- Սովորեցնել երեխաներին նշված ուղղությամբ տեղաշարժվելու ունակության զարգացմանը, իսկ ավելի ուշ՝ ուղղությունը որոշում են նաև մեկ այլ առարկայի դիրքից ելնելով:

- Տարածության մեջ կողմնորոշվելու ունակությունը զարգացնելու նպատակով օգտվել առօրյա իրավիճակներից՝ շարժումներ կատարելով նշված ուղղությամբ:

- Փոխել շարժման ուղղությունը քայլելիս և վազելիս:

- Ինչպես առարկայի տեղը որոշելիս, այնպես էլ նկարները դիտելիս, սովորեցնել պատմել առարկաների տարածական դասավորվածությունը:

- Սովորեցնել տարբերել և զգալ առարկաների «հեռու» և «մոտիկ» գտնվելը, կապել դրանք գործողությունների հետ (ափազապարկը ով ավելի հեռու նետեց):

- Զարգացնել քրքի, սեղանի մակերեսի վրա կողմնորոշվելու կարողությունը (Դտմել քրքի կենտրոնը, վերևի (ներքևի) աջ և ձախ անկյունները):

- Սովորեցնել հետիոտնի վարքի կանոնները: Ծանոթացնել երթևեկության նշաններին:



## ԱՋ-ՉԱԽ, ԱՌ-ԱՋ-ՀԵՏԵՎ, ՎԵՐԵՎ-ՆԵՐՔԵՎ

Ձ Անհրաժեշտ է հիշել, որ տարածական ուղղությունների մասին տեղեկությունները երեխաները ստանում են իրենց գործունեության տարբեր ձևերում: Տարածական ուղղությունների մասին տեղեկություններ տալիս ենք միշտ՝ հիմք ունենալով սևփական մարմնի մասերի տարբերակումը և իրենով կողմերի որոշումը: Այսպես «առջևից» բառի իմաստը երեխաները պետք է կապեն դեմքի հետ, «հետևից»՝ քիկունքի, «վերևում»՝ գլխի, իսկ «ներքևում»՝ ոտքերի հետ: Տարածության մեջ կողմնորոշվելու ունակության զարգացման ողջ աշխատանքը պետք է կառուցվի հակադիր գույգ հասկացությունների ընդգծման վրա՝ «աջ-ձախ», «առաջ-հետև», «վերև-ներքև», «տակ-վրա», «հեռու-մոտիկ»:

● Օրվա ընթացքում ստեղծեք այնպիսի իրավիճակներ, որպեսզի երեխան, իր մարմնի դիրքից ելնելով, որոշի շրջապատող առարկաների դիրքը իր նկատմամբ և անվանի դրանք: Օրինակ՝ պահարանը ձախ կողմում է, աջում՝ սեղանը, վերևում լուսամտիկն է, ներքևում՝ գորգը և այլն: Քանի որ երեխաները հատկապես դժվարանում են աջ և ձախ ձեռքերը տարբերելու և անվանելու հարցում, առաջադրանքները պետք է լինեն բազմաբնույթ՝ կապելով դրանք կատարվող գործողությունների հետ:

● Բարձրացրո՛ւ քո «գլխավոր» ձեռքը, որով բռնում ես գդալը, նկարում, բացում գրքի էջը, անվանի՛ր այն:

● Անհրաժեշտ է նախ ամրապնդել աջ և ձախ ձեռքը, ապա նոր դրա հիման վրա որոշել աջ և ձախ ուղղությունները՝ երեխայի ուշադրությունը կենտրոնացնելով այն բանին, թե ինչ է անում և որ ձեռքով է դա անում:

● Խնդրե՛ք երեխային, որ բարձրացնի աջ ձեռքը, իսկ հետո՝ ձախը, ցույց տա աջ և ձախ ոտքերը, ականջները, աչքերը, աջ ձեռքով ցույց տա ձախ ականջը:

● Առաջարկե՛ք, որ երեխան ձախ ձեռքով վերցնի դեղին մատիտը, իսկ աջով՝ կանաչը, իսկ հետո փոխի մատիտների տեղերը: Խնդրե՛ք, որ ասի, թե որ մատիտն է հիմա աջ ձեռքում, որը՝ ձախ:

● Խնդրե՛ք երեխային կոշիկները դասավորել գույգերով՝ միաժամանակ անվանելով աջ և ձախ կոշիկները:

● Երեխայի ձեռքը դնելով թղթի վրա՝ գծանկարեք աջ և ձախ ձեռքերը և առաջարկեք, որ ձախ ձեռքի մատնեմատին նկարի անաչ քարով մատանի, իսկ աջ ձեռքի միջին մատին՝ կարմիր քարով մատանի:

● Վերցրո՛ւ մատիտի տուփը և դասավորի՛ր մատիտներն այնպես, որ դեղին մատիտը լինի կարմիրի աջ կողմում:

- Կարմիր մատիտը լինի դեղինի ձախ կողմում:

- Կարմիրը լինի դեղին մատիտի աջ կողմում և այլն:

Տարածական ուղղությունների ամրապնդմանը նպաստում են նաև թղթի վրա կողմնորոշվելու հետ կապված առաջադրանքները:


● Տե՛ս նկարը:

- Ի՞նչ գիտես անտառի բնակիչների մասին: Որտե՞ղ են գտնվում նրանց բները, փչակները, որջերը:

● Պատմի՛ր՝ ծառի ո՞ր կողմում է քնած արջը, գայլը, սկյուռիկը, ագռավը, նապաստակը. մկնիկը սկյուռիկը, ագռավը, գայլը ծառի ո՞ր մասում են իրենց բները պատրաստել (ծառի տակ, վրա, մեջը, գագաթին, վերևում, ներքևում):

- Ինչո՞ւ են որոշ կենդանիներ բնակվելու համար ծառն ընտրում:

- Ինչո՞ւ արևի շողիկները երկար չեն, ինչո՞ւ են նրանք երկնքից այդքան ցած իջել և փոքրացել: Նայի՛ր նկարին ուշադրությամբ և հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջը:



Handwritten text in Malayalam script, arranged in a decorative border around the central illustration. The text is written in a traditional style, likely from a manuscript or a book. The border is composed of a series of small, repeating decorative motifs that frame the central image.



## ԱՁ-ՉԱԽ, ՎԵՐԵՎ-ՆԵՐՔԵՎ

Առաջարկե՛ք երեխային դիտել նկարը և տալ հետևյալ հարց-առաջադրանք-ները.

- Թղթի ո՞ր մասում է պատկերված թիթեռնիկը:
- Քանի՞ թև ունի թիթեռնիկը:
- Ցո՛ւյց տուր ձախ, ապա աջ թևերը:
- Ո՞ր մասում է գտնվում թիթեռի մարմինը (մեջտեղում):
- Ի՞նչ երկրաչափական պատկերներ են նկարված թիթեռնիկի ձախ թևին:
- Մեծ եռանկյունը գունավորի՛ր կարմիր մատիտով:
- Մեծ քառակուսին գունավորի՛ր կապույտով:
- Փոքր քառակուսիները՝ կանաչ գույնով:
- Չվածիրները գունավորի՛ր նարնջագույն:
- Մեծ և փոքր շրջանները՝ քո ցանկացած գույներով:
- Որտե՞ղ է գտնվում մեծ քառակուսին (երկու փոքր քառակուսիների միջև):
- Չախ թևի ո՞ր մասում են գտնվում մեծ եռանկյունիները (փոքր քառակուսու և փոքր եռանկյան միջև):

- Փոքր շրջանների միջև ի՞նչ է պատկերված (մեծ շրջան):

- Շրջանի ներքևում ի՞նչ է պատկերված (մեծ և փոքր ձվածիր):

● Փորձիր նույն պատկերները նկարել թիթեռի աջ թևի վրա՝ կրկնելով գույները և չափերը:

● Եկ հարցնենք թիթեռին.

Թիթե՛ռ, թիթե՛ռ այլուրտ,

Ի՞նչ ես շրջում դաշտ ու արոտ,

Ի՞նչ ես մենակ վազվզում,



Արդյոք ընկեր չե՞ս ուզում:

● Որպեսզի թիթեռը ընկերներ ունենա, նրա շուրջը նկարի՛ր կամ փակցրո՛ւ այլ միջատներ (գատիկ, մորեխ): Գունավորի՛ր և պատմի՛ր, թե թիթեռի ո՞ր կողմում ինչ նկարեցիր:

⊗ Ընտրեք ձեր երեխային հետաքրքրող որևէ խաղալիք, որը կարելի է դնել սեղանին և խնդրեք, որ նա դասավորի թղթի աջ, ձախ կողմերում, կենտրոնում, վերևի աջ անկյունում և այլն և պատմի:

● Հարցրե՛ք, թե սենյակի ո՞ր կողմում է գտնվում հեռուստացույցը, ժամացույցը, սեղանը, նկարը և այլն:

⊗ Տվե՛ք երեխային բանկայի և վարունգների պատկերները (գունավորել կանաչ գույնով) և ասացե՛ք, որ պատրաստելու եք պահածո: Առաջարկեք բանկայի տարբեր մասերում փակցնել վարունգներ (գունավորել) և պատմել յուրաքանչյուր վարունգի դիրքի մասին: Վերևի աջ և ձախ կողմերում, մեջտեղում, ներքևում: Հարցրե՛ք՝ ի՞նչը կարող է լինել կանաչ գույնի:



Գիտի՛ր նկարները: Մի երեկո, երբ Սևականջիկը, Խոա խոզուկը և Սպիտակածյունիկ նապաստակը ուրախ-ուրախ խաղում էին բակում, հանկարծ մի սարսափելի ձայն լսեցին և բարձրացին:

- Դու ուշադի՞ր դիտեցիր առաջին նկարը: Ասա՝
- Ցանկապատի ո՞ր մասում են բարձրել ընկերները:
- Պատմի՛ր, թե առաջին նկարում ինչպիսի՞ն է կենդանիների դիրքը իրար նկատմամբ:

- Ո՞վ է Խոա խոզուկից դեպի աջ (ձախ):
- Երկորդ նկարում որտե՞ղ է նապաստակը: Ովքե՞ր են նրա աջ և ձախ կողմերում:

Որտե՞ղ են խոզուկները նստած (ցանկապատի առջևում):

Նախապես փոխեք տեղերդ երեխայի հետ միասին առարկաների նկատմամբ և որոշեք, թե ով որտեղ է գտնվում՝ պատուհանի աջ (ձախ) կողմում, առջևում, բազմոցի հետևում, լուսամփոփի տակ և այլն:

● Կանգնեցե՛ք երեխայի առջև և առաջարկե՛ք ցույց տալ նախ իր, ապա ձեր աջ և ձախ ձեռքերը: Կամ ասել. «Ես կանգնած եմ պատուհանների միջև, բազկաթոռի հետևում (աջ, ձախ կողմերում)»:

● Սովորեցրե՛ք երեխային նաև շարժման ընթացքում որոշել ուղղությունները: Խաղացե՛ք «Գտի՛ր խաղալիքը» խաղը:

Ասացե՛ք, որ Սևականջիկը նամակ է գրել, որում ասում է, որ գիշերը, երբ նա քնած է եղել, ինքը եկել և մի քանի խաղալիք է թաքցրել սենյակի տարբեր տեղերում՝ նպատակ ունենալով պարզել՝ արդյոք նա կարող է կողմնորոշվել տարածության մեջ: Նամակում Սևականջիկը մանրամասն նշել է, թե ինչպես կարելի է գտնել դրանք՝ կատարելով հետևյալ առաջադրանքները:


● Մեջքով կանգնի՛ր դռան դիմաց և արա՛ երեք քայլ, շրջվի՛ր ձախ, քայլի՛ր հինգ քայլ և այլն:

⊗ Այսպիսի խաղ խաղացե՛ք նաև զբոսանքի ժամանակ, երբ երեխան ձեր նկարագրածի համաձայն կարող է գտնել թաքցրած որևէ իր: Օրինակ՝ «Գնա՛ 10 քայլ առաջ, թեքվի՛ր աջ, շարունակի՛ր հինգ քայլ, հետո երեք քայլ հետ արի և այլն»: Եթե սկզբնական շրջանում բառային հրահանգը բավարար չէ, ապա անհրաժեշտ է ցույց տալ երեխային, թե ինչպես պետք է դա անել: Ցուցադրումը միշտ էլ շատ արդյունավետ է: Ձեր նպատակը պետք է լինի սովորեցնել երեխային կատարել հրահանգներն այնքան լավ, որ նա հետագայում ձեր օգնության կարիքը չզգա:

● Հաճախակի խաղեր խաղացեք երեխայի հետ:

● Առաջարկելով երեխային ազատ շրջել սենյակում՝ տալ «Փարացի՛ր» ազդանշանը, որը լսելով՝ երեխան քարանում (անշարժանում) է տեղում:

● Խնդրե՛ք, որ նա, առանց տեղից շարժվելու, արագ թվարկի իր աջ ու ձախ կողմում, առջևում և նաև հետևում գտնվող առարկաները: Կամ, շրջվելով, նորից անվանի իր աջ և ձախ կողմերի առարկաները, որի ժամանակ էլ երեխան կհասկանա, որ «աջ» և «ձախ» հասկացությունները հարաբերական են՝ կախված այն բանից, թե որ դիրքից կդիտես առարկան:



Պարզակիր, թե ո՞րմ ձայնը վախեցրեց կենդանիներին: Ասա՝ նրանց և քաջալերիր չե՞ որ փտանգավոր ոչինչ չկա: Նրանք, իհարկե, իմանալով դա, մոռացան վախը և շարունակեցին խաղալ՝ փոխելով իրենց տեղերը:

Երբ հուզմանից այդ խաղից, որոշեցին շրջան կազմել և պարել:

Նայիր այս նկարին. ի՞նչ փոփոխություն ես տեսնում այստեղ, երբ համեմատում ես նախորդ երկու նկարի հետ: Ո՞վ է մեջտեղում, Սևականջիկի աջ և ձախ կողմերում:

Սեղանին դասավորեք սնկի, արևի, ամպի, նապաստակի, թռչնի նկարներ և հարցրեք.

- Ի՞նչ ես կարծում, ինչը կարող է լինել ծառից վերև (պետք է երեխան առանձնացնի արևի, թռչնի, ամպի նկարները):

- Ի՞նչը կարող է լինել ծառի տակ (երեխան առանձնացնում է սնկի, նապաստակի նկարները):

• Ոգնում տեղավորի՞ր ծառի աջ կողմում, իսկ ծառի ձախ կողմում՝ նապաստակին:

• Ծառի ո՞ր կողմում են ոգնին և նապաստակը:

☺ Հիմա ծառի աջ կողմում դի՞ր ավտոմեքենա, ձախ կողմում՝ եղևնի:

Նույնը կարող եք անել «Կատարի՛ր արագ» խաղը խաղալով:

Խաղի ընթացքում առաջարկեք երեխային բռնել աջ ականջը (աջ ձեռքով), ձախ ձախ ականջը (ձախ ձեռքով), ապա ձախ ձեռքով՝ աջ ականջը (ձախ), փակի աջ (ձախ) աչքը:

• Երեխայի հետ խաղացեք «Գտի՛ր խաղալիքը» խաղը:

Դուք կարող եք խաղալիքը բացցնել սենյակի տարբեր տեղերում (նկարի հետևում, գորգի տակ, պահարանի վրա, մեջ և այլն): Խաղից առաջ զգուշացրեք երեխային, որ փնտրելու, գտնելու և անվանելու է խաղալիքը և այն ուղղությունը, որտեղ պետք է փնտրել խաղալիքը (լավ կլինի, որ երեխան կրկնի թե ինչ խաղալիք պետք է գտնի և ինչ ուղղությամբ պետք է փնտրի այն): Ուշադրություն դարձրեք նաև «հեռու», «մոտիկ» բառերի օգտագործմանը.

• Երև երեխան ցանկանում է նկարների շուրջ մի պատմություն հորինել՝ օգնեք նրան:

Այս վարժությունները երեխային կօգնեն հստակ տարբերելու և մտապահելու «աջ-ձախ» և «միջև» բառերը:

☺ Առաջարկեք երեխային «Ճանապարհորդություն քաղաքում» խաղը: Դրա համար անհրաժեշտ կլինի ձեր քաղաքի տեսարժան վայրերին վերաբերող նկարներով կոլոսժ Սկզբում մանրամասն զննում և ծանոթանում են քաղաքի տեսարժան վայրերին, հիշում են՝ արդյոք տեսել են դրանք իրականում և հետո «ճանապարհորդել»՝ ամեն անգամ նշելով օպերայի աջ, ձախ կողմերում, .....

• Խնդրեք երեխային կարգ ու կանոն մտցնել մատիտների տուփերում, դրանք դասավորել երկարից կարճ: Ապա առաջարկեք հետևյալ հարց-առաջադրանքները.


- Ո՞ր մատիտն է ամենակարճը (կարմիր):

- Ո՞ր մատիտն է ամենաերկարը:

- Կապույտ մատիտը ո՞ր մատիտներից է կարճ:

- Կապույտ մատիտը ո՞ր մատիտների մեջտեղում է գտնվում (դեղին և նարնջագույն):

Առաջարկեք մատիտները դասավորել հակառակ ձևով՝ կարճից երկար: Հարցերի միջոցով պարզեք մատիտների նոր դասավորությունը:



എന്നതും 1.50 രൂപ <sup>84</sup> *[Signature]* 2000

## ԱԶ-ՉԱԽ, ԱՌԱՋ-ՀԵՏԵՎ

Չքե երեխան տարածության մեջ հեշտությամբ կողմնորոշվում է՝ իր մարմնի դիրքից ելնելով, պետք է սովորեցնել առարկայի դիրքը որոշել մյուս առարկաների նկատմամբ, ինչպես նաև իր սեփական դիրքը՝ շրջապատի առարկաների նկատմամբ 90° և 180° շրջվելու դեպքում:

Դիտիր նկարը.

Սևականջը կենդանիներին հրավիրել է մուլտֆիլմ դիտելու: Նրանք տեղավորվել են նստարաններին:

- Ո՞ր կենդանիներն են նստած բարձր նստարանին, իսկ որոնք՝ ցածրին:
- Ի՞նչ կենդանիներ են տեղավորվել ձախ կողմի նստարանին:
- Որտե՞ղ է գտնվում հեռուստացույցը:
- Անվանի՞ր առջևի «հանդիսատեսին», հետո՝ ձախ կողմի «հանդիսատեսին»:
- Ինչպիսի՞ նստարանի է նստել ձախ կողմի հանդիսատեսը, ինչպիսի՞ն է աջ կողմի հանդիսատեսի նստարանը:

- Ո՞ր կենդանին է նստած նապաստակից ձախ (աջ) և այլն:

Շրեխային նստեցրեք կամ կանգնեցրեք սենյակի կենտրոնում հատակին, շուրջը դրեք խաղալիքներ: Առաջադրեք հետևյալ հարցերը.

- Ո՞վ է նստած քո առջև (հետև):
- Ո՞վ է նստած քո աջ (ձախ) կողմում:
- Նույնը կարելի է կատարել միայն խաղալիքների օգնությամբ:


Տիկնիկին նստեցնել կենտրոնում և առաջադրել հարցեր, ըստ որի երեխան ինքը պետք է տեղավորվի տիկնիկին այնտեղ, որտեղ կմատնանշեք դուք և անպայման նկարագրի իր գործողությունը:

- Տիկնիկին դիր սեղանի վրա, աթոռի տակ, սեղանի տակ, աջ և ձախ կողմերում:
- Առաջարկե՛ք երեխային դրոշակները գունավորել այնպես, որ մեծ դրոշակը լինի կապույտ և դեղին դրոշակների միջև, իսկ դեղինը լինի կանաչի կողքին:

Շրեխայի հետ խաղացեք «Գտիր խաղալիքը» խաղը:

Դուք կարող եք խաղալիքը թաքցնել սենյակի տարբեր տեղերում (նկարի հետևում, գորգի տակ, պահարանի վրա, մեջ և այլն): Խաղից առաջ զգուշացրեք երեխային, որ փնտրելու, գտնելու և անվանելու է խաղալիքը և այն ուղղությունը, որտեղ պետք է փնտրել խաղալիքը (լավ կլինի, որ երեխան կրկնի թե ինչ խաղալիք պետք է գտնի և ինչ ուղղությամբ պետք է փնտրի այն): Ուշադրություն դարձրեք նաև «հեռու», «մոտիկ» բառերի օգտագործմանը:

- Եթե երեխան ցանկանում է նկարների շուրջ մի պատմություն հորինել, օգնեք նրան:





## ՆԵՐՍ - ԴՈՒՐՍ - ՄԵՋ

Դիտիր նկարը: Այս ուրախ, փոքրիկ գետածին ապրում է կենդանաբանական այգում: Քանի որ նա ջուր շատ է սիրում, ապա ունի նաև փոքրիկ ջրավազան, որտեղ կեսօրվա շոգին լողանում է, խաղում իր սիրած գնդակով:

- Առաջին նկարում որտե՞ղ է գետածին, իսկ որտե՞ղ՝ գնդակը:
- Երկրորդ նկարում որտե՞ղ է գնդակը, իսկ որտե՞ղ՝ գետածին:
- Ի՞նչ ես տեսնում ցանկապատից ներս (իսկ դո՞ւրս):
- Խաղացե՛ք երեխայի հետ «Մուկն ու կատուն» խաղը:

Օղարկիթներից վերցրեք երկուսը (մեծ և փոքր) ու դրանք անվանեք տնակներ: Ասացե՛ք, որ մուկն ու կատուն տնակների ներսում են:

- Ինչո՞ւ է կատուն մեծ տնակի ներսում: (քանի որ նա մեծ է):
- Մուկը գնաց պանիր որոնելու: Հիմա նա տնակից դուրս է: Յո՛ւյց տվեք, թե որտեղ է նա: Կատուն գնաց նրա հետևից: Հիմա որտե՞ղ է կատուն, ցո՛ւյց տվեք: Այս դեպքում մկնիկն ի՞նչ պետք է անի: Թաքցրե՛ք նրան տնակի ներսում:
- Առաջարկե՛ք երեխային հիշել այնպիսի կենդանիների, որոնց մասին խոսելիս կարելի է օգտագործել «գլուխը ներս» կամ «գլուխը դուրս» արտահայտությունը:

Հարցրե՛ք՝

- Այն ո՞ր կենդանիներն են, որոնք վտանգն զգալու դեպքում իրենց գլուխը թաքցնում են պատյանի ներսում, իսկ երբ վտանգն անցնում է, պատյանից դուրս են հանում (կրիա, խխունջ), իսկ ո՞ր կենդանին է, որ փոքրիկ ծագին պահում է «գրպանի» ներսում (կենգուրուն):

Նկարեք մի ծառ, ծառի վրա՝ բույն, բնի մեջ՝ թռչնի 2 ծագ, իսկ երրորդին՝ բնից քիչ հեռու՝ ծառի ճյուղին:

Ասա՛, որ բնում ճնճղուկներ են, ճյուղին նստած է մեկ ճնճղուկ: Նկարե՛ք նրան մոտեցող կատվին և ասացե՛ք՝ կատուն մագլցել է ծառը և գողեգող մոտենում է բնին:

Հարցրե՛ք. «Ո՞ւմ է առաջինը վտանգը սպառնում. այն ճնճղուկին, որը գտնվում է բնից դուրս՝ կատվին մոտ, թե՞ նրանց, որոնք բնի ներսում են և հեռու են կատվից»:

Ինչպե՞ս կօգնեք ճյուղին նստած ճնճղուկին:

Առաջադրել հետևյալ հարց-առաջադրանքները՝

- Ի՞նչ կա սենյակի ներսում, թվարկի՛ր և անվանի՛ր:

Ապա դուրս եկեք բակ և նույնը կատարեք դրսում:

Հետագայում ուշադրություն դարձրեք երեխայի խոսքում «ներս», «դուրս», «մեջ» և այլ բառերի ճիշտ և տեղին օգտագործմանը:

- Նայի՛ր շրջանների և քառակուսիների նկարին և նշված ձևով գիծը տար այնպես, որ բոլոր շրջանները հայտնվեն գծից դուրս, իսկ քառակուսիները՝ գծից ներս:



എന്നതാണ് ഈ ചിത്രം. <sup>88</sup> *[Handwritten signature]*

## Մեջ - ԳՈՒՐՍ

Սեականջիկը շատ էր սիրում խաղալ դասարկ տուփերով: Երբում էր դրանք, մտնում դրանց մեջ:

Տես, նկարում ձախ կողմից կրիան, այ կողմից փխիկը զարմացած նայում են տուփին և մտածում, թե տուփի անցքից ո՞ւմ պոչն է երևում, իսկ տուփի վերևի մասից ո՞ւմ ականջներն են դուրս ցցվել: Դու էլ ուշադիր նայիր և գուշակիր՝ ո՞վ է տուփի մեջ բաքն վաճ:

● Իսկ փոքրիկ և իմաստուն կրիան գլուխը դուրս է հանել պատշաճից ու մտածում է, թե երբ պիտի մեծանա և փխիկի հետ պահմտոցի խաղա ու մտնելով տուփի մեջ՝ այն պես զգույշ բաքնվի, որ ոչ ոք իր տեղը չիմանա:

● Դե փխիկն էլ հենց այդ նույն պահին մտածում է, թե ինքն ինչքան պիտի մեծանա, որ երբ բաքնվի տուփի մեջ, պոչն ու ականջները չերևան, ինչպես Սեականջիկինն է երևում:

● Այա խնդրեք երեխային պատասխանել ձեր հարցերին.

● Որտե՞ղ է բաքնվել Սեականջիկը:

● Ինչպիսի՞ն է նրա համար տուփը:

● Ինչպիսի՞ն է կրիան:

● Որտե՞ղ է գտնվում կրիան, տուփի ո՞ր կողմում:

● Որտե՞ղ է երևում փխիկի ստվերը:

● Երեխայի հետ խաղացե՛ք «Վարդուղներ» խաղը: Խնդրեք նրանից շարժվել պահանջվող ուղղությամբ (առաջ, հետև, աջ, ձախ): Խաղի ընթացքում շարժում մտցնելու համար օգտագործեք խաղալիք դեկ:

Խաղի ընթացքում երեխան կարող է իր ուղղությունը փոխել բանավոր հրահանգների համաձայն:

● Երեխային տվեք խաղալիքներ և մեծ ու փոքր տուփեր:

Առաջարկե՛ք երեխային հետևյալ խաղ-առաջադրանքները:


● Ո՞ր տուփի մեջ կարելի է լցնել շատ խաղալիքներ:

● Ո՞ր տուփում քիչ խաղալիք կտեղավորվի:

☺ Խաղացե՛ք երեխայի հետ «Ի՞նչը փոխվեց» խաղը:

Պահանջե՛ք, որ երեխան փակի աչքերը: Այդ ընթացքում փոխեք առարկաների տեղերը: Երեխան, բացելով աչքերը, պետք է ասի՝ ի՞նչը փոխվեց, որտե՞ղ հայտնվեց կատուն (աքոռի, տնակի երևում, վրան, առջևում, տակը, հեռվում, դրսում):

● Վերցրո՛ւ տիկնիկը և մեքենան: Տիկնիկին նստեցրո՛ւ մեքենայի մեջ, փակիր աչքերդ: Բա՛ց արա. ի՞նչը փոխվեց (տիկնիկը մեքենայից դուրս եկավ, կանգնեց մեքենայից առաջ, մեքենայի ետևում և այլն):



## ՎԵՐԵՎ - ՆԵՐՔԵՎ

Սևականջիկի սիրած զբաղմունքներից մեկն էլ աստիճաններով վեր ու վար անելն է:

☞ Ահա նա. ասա՛, թե դեպի աջ Սևականջիկը ո՞ր աստիճանին է նստած (վերևի), իսկ ձախ կողմում (ներքևի):

Տեսե՛ք՝ ինչ է նա ասում այդ մասին.

- Ես շատ եմ սիրում այս ուրախ «վերովար» խաղը խաղալ:

Մեկ վազում է վերև ու նստում սանդուղքին, բեղերը սրած՝ հպարտ ներքև նայում, մեկ էլ նստում ներքևում ու բեղերը լուռ կախում:

- Նայի՛ր քո շուրջը: Դիտի՛ր այն ամենը, ինչ տեսնում ես քեզնից վերև (ներքև):
- Թվարկի՛ր՝ ի՞նչն է լինում վերևում, ի՞նչը՝ ներքևում:
- Հիմա նորից նայի՛ր նկարին և ասա՛՝
- Ո՞ր սանդուղքն է ամենաերկարը, ո՞րը՝ ամենակարճը:
- Ի՞նչ կասես երեք սանդուղքների երկարության մասին (երբ իջնում ես, կամ էլ՝

բարձրանում):

⊗ Երեխայի հետ կոշիկի երեք տարբեր չափի (մեծ, միջին, փոքր) տուփերը շրջված դրեք իրար վրա ու պատկերացրեք, որ դա շենք է՝ վերևի, մեջտեղի և ներքևի հարկերով:

• Խաղացե՛ք երեխայի հետ և ասացե՛ք, որ շունն ու կատուն չեն ուզում ապրել նույն հարկում: Եկեք նրանց առանձին հարկեր հատկացնենք: Խնդրեք երեխային կատվին դնել վերևի (մեջտեղի) հարկում, իսկ շանը՝ ներքևի: Ամեն անգամ երեխայի հետ որոշեք, թե ո՞վ է վերևում և ո՞վ՝ ներքևում՝ շո՞ւնը, թե՞ կատուն:

Կարելի է նաև «շենքի» առջևում, հետևում, աջ ու ձախ կողմերում տեղադրել ցանկացած առարկա և պատմել կատարածի մասին:

• Երեխային առաջարկեք երեք խաղալիք տեղադրել շարքով՝ վերևից ներքև հերթականությամբ՝ սկսած ամենափոքրից:

• Դրքերը դասավորեք շարքով՝ ներքևից վերև, ըստ հերթականության՝ սկսած ամենահաստից:

• Ափսեները դասավորեք ձախից աջ՝ սկսած ամենամեծից:

Յուրաքանչյուր առաջադրանքի ժամանակ խնդրեք, որ ասի առարկաների չափերը («ավելի լայն է», «ավելի նեղ է»):



## ՎԵՐԵՎ - ՆԵՐՔԵՎ

Սևականջիկն ընկերացավ արջուկի հետ և հրավիրեց նրան ճոճվելու: Նրանք նստեցին ճոճանակի տախտակի երկու ծայրերին: Սևականջիկը թռավ վերև, իսկ արջուկը մնաց ներքևում, և այլևս խաղալ չկարողացան:

☞ Դիտի՛ր նկարը. ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ:

• Երբ զգացին, որ ճոճվել չեն կարողանում, սկսեցին խաղալ «Գուշակի՛ր հանելուկը» խաղը:

Դու էլ խաղա նրանց հետ:

Սևականջիկն ուզում է իմանալ՝ արդյոք դու գիտես՝ ո՞վ է մեծ՝

- Փոքր փի՞ղը, թե՞ մեծ մուկը:
- Փոքր ընձո՞ւղտը, թե՞ մեծ մրջյունը:
- Փոքր իշո՞ւկը, թե՞ մեծ ճագարը:
- Փոքր գետածի՞ն, թե՞ մեծ աղվեսը:
- Գիտե՞ս նշված բառերի հակառակ իմաստը: Օրինակ՝ ներքև, աջ, տակ, առաջ,

հեռու: Անվանի՛ր:

☉ Երեխայի հետ կանգնեք հայելու առջև և ցույց տվեք ոչ բարդ շարժումներ: Երեխայի ուշադրությունը հրավիրեք այն բանի վրա, թե ինչպես է հայելին նույնությամբ վերարտադրում այդ շարժումները: Առաջարկեք երեխային կատարել իր նման: Դանդաղ ցույց տվեք հետևյալ շարժումները.



• Չեռքը պահեք գլխի վերևում, ներքևում, առջևում և ամեն անգամ պատմեք, թե որտեղ են ձեռքերը: Երբ երեխան շարժումները կատարի հաջող, գովաբանեք՝ ասելով. «Ապրեն՛ս, դու իմ հայելին ես»:

Գնահատման ժամանակ ցանկալի է, որ տեսնեք այն ամենալավը, ամենահաջողը, որը կատարել է երեխան:

• Սովորեցրե՛ք երեխային օգտագործել բառեր, որոնք ցույց կտան տարածական ուղղությունը (ձախից, աջից, վերևից, ներքևից, մեջտեղից, մտտիկից, հեռվից):

☺ Երեխայի հետ խաղացեք «Ում մեքենան ավելի հեռու կգնա» խաղը: Վերցրեք երկու նույն մակնիշի, բայց տարբեր գույնի ավտոմեքենաներ և միաժամանակ հրեք նրանց: Երեխան թող պատմի, թե ո՞ւմ ավտոմեքենան որ կողմում է կանգնած (աջ, ձախ, առջևում), ո՞ւմ ավտոմեքենան ավելի հեռու գնաց: Ո՞ւմ ավտոմեքենան ավելի արագ շարժվեց և ինչո՞ւ (Դու երևի շատ ուժեղ ես հրել ավտոմեքենան և անիվները արագ են պտտվել, և նա գնաց հեռո՞ւ-հեռո՞ւ):

Խաղը կրկնելիս առաջարկեք ավտոմեքենան վարել բարձրացրած սփռոցի վրայով: Ասել՝ «Ավտոմեքենան իջնում է բլրից»՝ հրահանգը լսելով, երեխան ավտոմեքենան բաց է թողնում: Թող պատմի, թե որտեղից շարժվեց (վերևից) և ինչո՞ւ այս անգամ ավելի արագ շարժվեց:





## ԱՌԱՋ - ՀԵՏԵՎ

Պայծառ զարնանային առավոտ է՝ երեքշաբթի: Դու գիտես, որ շաբաթվա այդ օրը Սևականջիկը սիրում է խաղալ բակում, որտեղ շատ ընկերներ ունի:

☞ Դիտի՛ր նկարը և ասա՛, թե որտե՞ղ է կանգնած Սևականջիկը:

Նա ուշադիր դիտում է շրջապատը և ցանկանում է հասկանալ, թե ո՞րն է այդ, որը՝ ձախ, ո՞րն է վերև, որը՝ ներքև, որը՝ առաջ, որը՝ հետև: Օգնե՛ք նրան:

● Ցանկապատի ո՞ր մասում են շնիկն ու ճուտիկները: (Ցանկապատի առջևում)



● Ինքը՝ Սևականջիկը, շնիկի և ճուտիկների ո՞ր մասում է (հետևում):

Հետո Սևականջը հորանջեց, նայեց վերև ու տեսավ փայլող արևը:

Որտե՞ղ է գտնվում արևը:

Վերևում էլ ի՞նչ կարող էր տեսնել Սևականջիկը:

☺ Խաղացե՛ք երեխայի հետ «Պահմտոցի» խաղը: Օգտվե՛ք սենյակում եղած իրերից: Օրինակ՝ «Ես հիմա կթաքնվեմ արոռի հետևում, այ՛ն ասպես», - ասում եք և նստում արոռի (գրասեղանի, բազմոցի) հետևում: Դուրս գալով արոռի թիկնակի հետևից՝ ասացե՛ք. «Ահա և ես, հիմա էլ դո՛ւ թաքնվիր»: Երեխան, կրկնելով գործողությունները, միաժամանակ կարող է պատմել, թե որտեղ է թաքնվել: Նմանօրինակ գործողությունների օգնությամբ կարող եք ամրապնդել նաև «վրա-տակ», «աջ-ձախ», «վերև-ներքև» հասկացությունները:



## ՎՐԱ - ՏԱԿ

Սևականջիկը թռավ, կանգնեց մեծ աթոռին ու հանկարծ ճտճտոց լսեց ցածից: Վիզը երկարեց, ներքև նայեց ու տեսավ ճտճտան մկնիկին: Մուկը ներքևում էր, ինքը՝ վերևում, մուկը աթոռի տակ էր, իսկ ինքը՝ աթոռի վրա:

Սակայն մկնիկը շատ չվախեցավ, քանի որ բույնը երկու քայլի վրա էր:

☞ Դիտի՛ր նկարը և ասա՛, թե որտե՞ղ է թաքնվել չարաճճի մկնիկը:

- Որտե՞ղ է նստած Սևականջիկը և ի՞նչ է մտածում:
- Դու էլ հորինի՛ր քո պատմությունը Սևականջիկի ու մկան մասին:
- Փորձի՛ր ասել այս շուտասելուկը.

Կատուն՝ վերև, մուկը՝ ներքև,

Մուկը՝ ներքև, կատուն՝ վերև:

- Առաջարկե՛ք սեղանի վրա դնել որևէ խաղալիք, հետո այն թաքցնել սեղանի տակ:
- Հարցրե՛ք, թե որ բառերն են մեզ հնարավորություն տալիս հասկանալու առաջադրանքը (վրա, տակ):

☺ Երեխայի հետ խաղացեք «Պահմտոցի» խաղը. պայմանավորվե՛ք, որ դուք թաքցնելու եք մի խաղալիք և անընդհատ փոխելու եք նրա տեղը, և երեխան, աչքերը բացելով, պետք է ասի, թե որտեղ է խաղալիքը թաքնվել: Պահե՛ք սեղանի տակ, հարցրե՛ք՝ որտեղ է ուղղաթիռը. «ուղղաթիռը սեղանի տակ է», «պահարանի վրա», «բազմոցի վերևում», «հեռուստացույցի աջ (ձախ) կողմում», «վայրէջք կատարեց բազմոցի առջևում» և այլն:

Առաջարկեք, որ երեխան ցույց տա և անվանի սկզբում այն բանջարեղենը, որն աճում է հողի տակ, ապա այն բանջարեղենը, որն աճում է հողի վրա:

Ինչ խոսք, կարող եք բանջարեղենը փոխարինել տրանսպորտի տեսակներով՝ (բեռնատար, մարդատար) գետնի տակ աշխատող, գետնի վրա, ինչու չէ, նաև օդային կանջրային (վերևում, ներքևում):

Կարող եք առաջարկել նաև հանելուկներ:

☺ Երեխայի հետ խաղացեք «Ճանփորություն» խաղը: Ասացե՛ք, որ երկրաչափական պատկերները սիրում են ճանապարհորդել:

Երեխայի հետ կտրեք երկրաչափական տարբեր պատկերներ և կառուցեք երկհարկանի վագոններով գնացք (2 վագոն):

Դիտարկե՛ք առաջին վագոնը, գունավորե՛ք, ամրացրե՛ք շոգեքարշին, հարցրե՛ք.

- Ո՞ր երկրաչափական պատկերներն են նստած վերևի հարկում, իսկ ներքևում:

Ավելացրեք հաջորդ վագոնը ևս: Առաջարկեք նրա մեջ տեղավորել վերևում դեղին քառակուսին, ներքևում՝ կանաչ շրջանը: Գնացքին միացրեք մեկ վագոն ևս: Ներքևում տեղադրեք ձեր ընտրած երկրաչափական պատկերները և պատմեք, թե որն է վերևում և որը՝ ներքևում:



## ՏԱԿ - ՎՐԱ, ՀԵՌՈՒ - ՄՈՏԻԿ

Գարնանային մի պայծառ օր Սևականջիկն ու Գամփռիկը դեղին ճուտիկի հետ ուրախ զբոսանքի ելան: Բայց կեսօրին հանկարծ անձրև տեղաց: Սևականջիկն իսկույն բացեց մեծ հովանոցը ու նրա տակ պատսպարվեց:

Դիտի՛ր նկարը և ասա՛, թե տարվա ո՞ր եղանակն է: Ինչպե՞ս գուշակեցիր:

- Ցանկապատի ո՞ր մասում էին զբոսնում Գամփռիկը, Սևականջն ու ճուտիկը:
- Օգնե՛ք երեխային նկարագրելու, թե ինչ է կատարվում նկարում՝ շեշտելով «վերև», «ներքև», «միջև», «աջ», «ձախ» բառերը:

● Պատկերացրո՛ւ, որ ճուտիկը ջուր խմելուց հետո տեղավորվեց շնիկի ու փիսիկի մեջտեղում: Ո՞վ կլինի նրանից ձախ (աջ): Նրանից վերև ի՞նչ կա:

- Ո՞վ է հովանոցի տակ, իսկ՝ վրա՞:
- Ո՞ւմ ես տեսնում ջրափոսի մոտ: Տունը որտե՞ղ է, ի՞նչ ես տեսնում նրա շուրջը:

● Նկարի վրա ցո՛ւյց տուր ամենահեռվում գտնվող ծառը:


● Ի՞նչ է գտնվում երկու ծառերի մեջտեղում:

● Հորինի՛ր պատմություն և պատմի՛ր՝ օգտագործելով «ձախ-աջ», «վրա-տակ», «վերև-ներքև», «մեջտեղ» բառերը:

☺ Խաղացե՛ք երեխայի հետ «Գտի՛ր թաքցրածը» խաղը:

Խաղին մասնակցող երեխաներին բաժանեք երկու խմբի: Խնդրե՛ք, որ երեխաների առաջին խումբը երկրորդ խմբից գաղտնի խմբասենյակում թաքցնի ոչ մեծ չափերի խաղալիքներ: Առաջին խմբի երեխաների հետ թղթից կտրեք ուղղանկյունաձև մի ծրար: Այնուհետև ծրարի եզրային մասերը մի փոքր կտրատեք ձեռքով, որպեսզի այն թողնի ծովային ավազակների քարտեզի տպավորություն: Օգնեք երեխային «քարտեզի» վրա նկարել խմբասենյակի (խաղասենյակի) պլան-մոդելը և թվանշաններով նշեք այն տեղերը, որտեղ թաքցրել են խաղալիքները: Քարտեզը ոլորեք և հանձնեք երկրորդ խմբի երեխաներին, որպեսզի գտնեն թաքցրածը և պատմեն, թե պլանի որ մասում են գտնվում (սեղանի տակ, վրա, վերևում, աջ կողմում և այլն): Եթե երեխաներին զվարճացնում կամ հետաքրքրում է խաղը, այն կարելի է կրկնել՝ փոխելով խմբերը:

Երեխան կամաց-կամաց սկսում է ըմբռնել ուղղություն ցույց տվող բառերը:



## ՄՈՏ - ՀԵՌՈՒ

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև «մոտ» և «հեռու» բառերի իմաստը բացատրելու վրա: Ամենաարդյունավետ միջոցը համապատասխան գործողություններ կատարելն է. օրինակ՝ ում ավագահատիկը հեռուն գնաց, ո՞վ ավելի հեռու նետեց ձնագնդիկը և այլն:

☺ Խնդրե՛ք երեխային ավերը միացնել իրար (ձեռքերը կրծքավանդակի առջև): Հանդիպեցին ավերը: Բացվեցին և բաժանվեցին դեպի տարբեր կողմեր՝ իրարից ավելի հեռու և հեռու:

Տեսե՛ք՝ ձեռքերը առաջ են գնում: Ավերը գալիս են միմյանց ընդառաջ՝ ավելի մոտ ու մոտ, ահա նրանք հանդիպեցին:

Երեխային օգնե՛ք նայել, լսել և կենտրոնանալ կատարած գործողությունների վրա:

● Ուրբաթ օրը Սևականջիկը սիրում էր գնալ ծովափ և երկար ժամանակ նստել տաք ավազների վրա:

☞ Դիտի՛ր նկարը. ահա հիմա էլ նա նստած նայում է ծովին:

● Ի՞նչ է տեսնում Սևականջիկը:

● Ի՞նչ չափի առարկաներ են նրա շուրջը՝ ավի վրա, ջրի մեջ, ավիին մոտ, ավից

շատ հեռու:

● Հեռվում գտնվող առարկաները, չնայած մեծ լինելուն, ինչպիսի՞ն են երևում:

● Իսկ մոտ առարկաներն ի՞նչ չափերի են երևում:

● Ի՞նչ է մտածում Սևականջիկը՝ ձկնորսին նայելով:

Խաղասենյակում կամ զբոսանքի ժամանակ կոնկրետ առարկաների օգնությամբ պարզեք յուրաքանչյուրի հեռու և մոտ լինելը:


⊗ Տանը կամ զբոսանքի ժամանակ կազմակերպեք մրցումներ «հեռու-մոտիկ»: Մի պատի տակ դասավորեք երկու խումբ առարկա (գնդակներ, խաղալիքներ...): «Սկսեցինք» հրահանգը լսելիս երեխաները վազում են, յուրաքանչյուրն առարկաներից մեկը վերցնում է և նշում՝ այն հեռո՞ւ էր, թե՞ մոտ:

● Առաջարկե՛ք երեխային ընկերոջ հետ կանգնել մեջք-մեջքի: Հարցրե՛ք՝ մո՞տ եք, թե՞ հեռու:

Հետո երեք քայլով առաջ շարժվել ու շրջվել՝ դեմքով նայելով իրար: Մինչև ընկերոջ մոտ հասնելը դա հեռո՞ւ է, թե՞ մոտ:

Կատարել դեմ դիմաց մեկական քայլ: Մինչև ընկերոջը մոտ հասնելը դա հեռո՞ւ է, թե՞ մոտ: Այժմ դուք միմյանց մո՞տ եք, թե՞ հեռու:

Չեր տանը ո՞ր սենյակին է մոտ խոհանոցը: Խմբասենյակում ո՞ր սեղանն է մոտ դռանը, ո՞րը՝ հեռու պատուհանից (պահարանից):





## ՀԵՌՈՒ - ՄՈՏ

Այս մեծ տանը ապրում է Սևականջը: Նա շատ է սիրում հաճախակի տանից դուրս գալ և զբոսնել շրջակայքում: Այսօր էլ նա որոշել է հյուր գնալ Սպիտակականջին: Նկարի վրա գտի՛ր Սպիտակականջի տունը, որտե՞ղ է գտնվում այն (հեռու բարձունքի վրա):

Տեղ հասնելուն պես Սևականջիկը դժգոհեց, թե շատ հեռու է ապրում Սպիտակականջիկը:

- Սլաքով ցույց տուր և ասա՝ այն հեռո՞ւ է, թե՞ մոտիկ:

Նրանք իրար հետ երկար խաղացին: Բայց արդեն ուշ էր, և Սևականջը պետք է տուն վերադառնար: Այդ պատճառով էլ Սպիտակականջը խոստացավ հաջորդ օրն էլ ինքը հյուր գնալ բարեկամին:

- Սլաքով ցույց տուր. Սպիտակականջի գնացած ճանապարհն է երկար, թե՞ Սևականջինը (հավասար են): Ապացուցել այն չափ-զուլակի օգնությամբ:

● Երեխայի հետ կազմակերպել թղթե փսեսների «մրցույթ»՝ դրանք նետելով որքան կարելի է հեռու: Հարցրե՛ք, թե ինչպես կարելի է չափել յուրաքանչյուրի նետած փսեի ճանապարհը (քայլաչափերով):

Պայմանավորվել, թե ով է չափելու, և թող երեխան ասի՝

իմ նետած փսեսն մոտ է ընկել (ու՛թը քայլ), իսկ քոնը՝ հեռու (տասը քայլ):





Կանգնելով նույն ուղղությամբ՝ երեխայի հետ գնդակով պատին հարվածել և որոշել, թե ով ավելի հեռու նետեց, ով՝ բարձր, իսկ ով՝ ավելի ցածր:

● Երեխային տրամադրել նկարներ.

ծառեր, ծաղիկներ, թռչուններ, կենդանիներ, ամպիկներ, դրանք լինեն իրարից հեռու և մոտ.

լճափ, որտեղ հեռու և մոտ լողում են ձկները և բաղերը, ցատկոտում են գորտերը, միջատները:

● Առաջարկել դիտելուց հետո վերարտադրել թղթի վրա իրեն դուր եկած նկարը:



## ԱՁ - ՁԱԽ, ՎԵՐԵՎ - ՆԵՐՔԵՎ

☛ 'Դիտի'ր վերևի նկարը և ասա՝ քանի գույակ ես տեսնում:

● Դիտելուց հետո տվեք հետևյալ առաջադրանքները.

● Վերևի գույակը գունավորի՛ր կանաչ գույնով, իսկ ներքևինը՝ կարմիրով:

● Կանաչ գույնի գույակի ներքևում եղած շրջանները գունավորի՛ր կապույտ գույնով:

● Կարմիր գույնի գույակի ներքևում գտնվող ուղղանկյունները գունավորի՛ր կա-

պույտ գույնով:

● Կանաչ և կարմիր գույակների մեջտեղում նկարված ձվածիրը ներկի՛ր կարմիր

գույնով:

● Կանաչ գույնի գույակից վերև եղած եռանկյունիները ներկի՛ր կանաչ գույնով:

● Այնուհետև առաջարկե՛ք դիտել երկրորդ նկարը, ապա խնդրեք՝

● Ձախ կողմի գույակը գունավորել կարմիրով, իսկ աջ կողմինը՝ կանաչով:

● Կարմիր գույակի աջ կողմում եղած ձվածիրները ներկել կանաչ գույնով:

● Պատմել, թե կարմիր գույակի ձախ կողմում որ պատկերներն են, որ չես գունավո-

րել:

● Կարմիր գույակի աջ կողմի քառակուսին ներկել դեղին, իսկ ուղղանկյունը՝ կա-

պույտ գույնով:

● Կանաչ գույակից աջ եղած շրջանները ներկել նարնջագույն, իսկ ուղղանկյունը՝

կապույտ գույնով:

Խնդրեք երեխաներին ասել՝

● Կարմիր և կանաչ գույակների միջև ի՞նչ պատկերներ կան:

Պահանջե՛ք, որ այդ պատկերներից

● Եռանկյունները ներկի մանուշակագույն, իսկ ուղղանկյունները՝ կանաչ:

● Ո՞ր պատկերներն են, որ ներկված չեն:



Խաղը կարելի է խաղալ մաս այլ տարբերակներով: Օրինակ՝

● Մեջտեղում տեղադրված երկրաչափական պատկերները գծերով միացնել աջ և ձախ կողմի նույն պատկերների հետ և այլն:

☺ Խաղացե՛ք երեխայի հետ «Գնդիկ Բորոնիկ» խաղը: Ասացե՛ք, որ պատմելու եք Բորոնիկի նոր արկածների մասին և միաժամանակ հանձնարարություն եք տալու:

● Գնդիկ Բորոնիկը երբ փախչում է տատիկից, հանդիպում է մրջյունին և վախից թռչում է կոճղի վրա (իսկ դու թռիք աթոռի վրա): Մրջյունը արագ բարձրանում է ծառի վերևի ճյուղին, սայթալում է և դրոմբ, ընկնում ներքև՝ Գնդիկի գլխին: Գնդիկը շփոթված սկսում է պտտվել եղևնու շուրջ (իսկ դու պտտվիր սեղանի շուրջը): Նրանք դեմ առ դեմ հանդիպում են իրար, մի լավ ծիծաղում, և մրջյունը, լսելով Գնդիկի պատմությունը, խորհուրդ է տալիս նրան՝ ասելով. «Որպեսզի կենդանիները քեզ չուտեն, գլորվի ոչ թե լայն ճանապարհով, այլ նեղ արահետով: Եվ երբ նրանց հանդիպես, քո երգը հակառակ իմաստով երգիր՝ ես քեզ կուտեմ: Նրանք կվախենան և կփախչեն»: Եվ այդպես նրանք բաժանվեցին:

Խնդրեք երեխային, որ շարունակի հեքիաթը և ամեն անգամ պատմի, թե որտեղ է Գնդիկը: Հետևե՛ք, որ օգտագործի «աջ-ձախ», «վրա-տակ», «վերև-ներքև» բառերը:



## ՎԵՐԵՎ - ՆԵՐՔԵՎ, ՏԱԿ - ՎՐԱ

Անտառում կանգնած կանաչ եղևնին մենակ տխրում է, ու լու լուին մտածում. «Ի՞նչ լավ կլիներ, եթե ես մի օր գտնեի մի լավ ընկեր, այդ ժամանակ իմ կյանքը տխուր չէր լինի անտառում»:

Խնդրե՛ք երեխային օգնել կանաչ եղևնուն մենակ չմնալ հսկա անտառում: Դրա համար նրա շուրջը, որտեղ որ պետք է, տեղադրի՛ր ներքևում տրված նկարները: Իսկ եղևնին նրանցից մեկի հետ անպայման կընկերանա:

● Ի՞նչ ես կարծում, ո՞ւմ կընտրի եղևնին որպես ընկեր: Ինչո՞ւ: Պատմի՛ր մի պատմություն դրա շուրջ: Պատմությունդ կազմի՛ր՝ կիրառելով հետևյալ բառերը՝ վրա, վերևում, ներքևում, տակը, առջևում, հետևում, ձախ, աջ կողմերում: Այս հասկացությունները ամրապնդելու և ուշադրությունը զարգացնելու նպատակ են հետապնդում:

☺ Երեխայի հետ խաղացեք «Ուղղե՛ք նկարչի սխալը» խաղը:



Նկարեք մի նկար, որտեղ տան պատուհանի վերևում նկարված է զլխիվայր շրջված ծաղիկներով լի մեկ ծաղկաման, ծառի վրա նկարված են սունկեր, եղևնի, որի արմատները վերևում են, իսկ կատարը՝ հողում, պարիսպների սուր ծայրերը հողի մեջ են, շան բույն՝ մեջը կատու, թռչնի բույն՝ հողի մեջ: Դիտե՛ք այն և հարցրե՛ք. «Նկարում ի՞նչն է ոչ ճիշտ նկարված, ինչպե՞ս ուղղենք»:

Երեխայի պատմելու ժամանակ ուշադրություն դարձրեք տարածական ուղղությունները բնորոշող բառերի ճիշտ արտասանության վրա:

● Երեխայի հետ հաճախակի խաղացե՛ք տարածությունը բնորոշող բառախաղ, որը կնպաստի մտքի ճկունության զարգացմանը: Առաջարկեք երեխային անվանել տվյալ հասկացությանը վերաբերող որքան հնարավոր է շատ բառեր: Խնդրեք նրան, որ թվարկի հետևյալ բառերի հականիշները.

- վրա (ի՞նչը կարող է լինել սեղանի վրա):
- Տակ (ի՞նչը կարող է լինել ծառի տակ):
- Վերևում (ի՞նչը կարող է լինել երկնքում):
- Ներքևում (ի՞նչը կարող է լինել պատուհանի տակ):

☞ Հետևե՛ք, որ երեխան ճիշտ օգտագործի տարածությանը վերաբերող բառերը:



## ԲԱՐՉՐ - ՑԱԾՐ



Չ Հերիաթային մարգագետնում ծաղիկներն ու միջատները քնած էին: Լուսարացին նրանք արթնացան: Ծաղիկները բացեցին իրենց ծաղկաթերթերը, միջատները թափահարեցին թևերը և վեր բռան դեպի երկինք:

- Ո՞ր թիթեռը բռավ ամենաբարձր (ամենահեռու):
- Ո՞ր միջատները մնացին ծաղիկների տակ:
- Ո՞ր միջատն է սահում ամենաբարձր տերևի վրա:
- Ո՞ր ծաղիկն է մորեխի և թիթեռի միջև:
- Ո՞ր ծաղիկն է չքացվածը, ամենալայն ծաղկաթերթերովը:
- Գտի՞ր և մատիտով գծի՞ր ու միացրո՞ւ միևնույն չափի թիթեռները,

⊗ Երբ համոզվեք, որ երեխաներն ազատ կողմնորոշվում են փոքր տարածության մեջ՝ սենյակ, խոհանոց, պետք է սովորեցնել կողմնորոշվել նաև մեծ տարածության մեջ և պատասխանել հետևյալ հարցերին.

- Ո՞ր քաղաքում է ապրում (շրջանում, գյուղում):
- Ասա՛ քո հասցեն:
- Չեր շենքը քանի՞ հարկ ունի, և ո՞ր հարկում ես ապրում:
- Քանի՞ հարկ կա ձեր բնակարանից վերև:
- Ինչպիսի՞ փողոցներ են անցնում ձեր մոտով: Ո՞ր պողոտան է ձեզ մոտ:
- Ինչպիսի՞ խանութներ կան ձեր տան շրջակայքում:

Չ Շրջապատող իրականության մասին տեղեկություն տալու և տարածական հասկացություններն ամրապնդելու նպատակով կարելի է խաղալ «Ճանապարհորդություն քաղաքում»: Դրա համար անհրաժեշտ կլինի ձեր քաղաքի տեսարժան վայրերին վերաբերող նկարների հավաքածու: Սկզբից նայել նկարները, երեխաների հետ հիշել, թե որտեղ են եղել, ինչ կար, ինչ էին վաճառում խաղալիքների, մթերային (հագուստի, կոշիկեղենի) խանութում, որից հետո պարզել, թե ինչպիսի տրանսպորտի տեսակից եք օգտվել: Նկարագրե՛ք ձեր անցած ճանապարհը՝ մինչև մանկապարտեզ, դեղատուն, փոստ, տատիկի տուն հասնելը: Նրանց ուշադրությունը հրավիրեք փողոցային երթևեկության, ճանապարհային նշանների, անցումի (ինչո՞ւ է այն կոչվում «զեբր»), կանգառի, լուսակրի, ինչպես նաև ուղղություն ցույց տվող նշանների (սլաքը վեր, սլաքը աջ, ձախ, ուղիղ) վրա: Ծանոթացրեք տրանսպորտի տեսակներին, աշխատեք հիշել, թե նա մարդատար և բեռնատար ինչպիսի մակնիշի մեքենաներ գիտի: Խնդրեք պատմել նրանց հիմնական նմանությունների և տարբերությունների մասին: Խոսե՛ք յուրաքանչյուր փոխադրամիջոցի արագության և հարմարավետության մասին: Սա հետագայում շատ կօգնի խնդիրներ կազմելիս:



Hand-drawn stylized characters or symbols, possibly representing a name or a decorative element.



## ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Ձ Առօրյա կյանքում ճշտել երեխաների պատկերացումները ժամանակի այնպիսի հատվածների մասին, ինչպիսիք են «կեսօրը», «երեկոն», «գիշերը»: Օրվա մասերի անվանումները կապել ոչ միայն երեխաների կամ նրանց շրջապատող մեծահասակների գործունեության կոնկրետ բովանդակության հետ, այլև նկարների և բնության երևույթների հետ (առավոտյան ծագում է արևը և շուրջը դառնում է ավելի լուսավոր և այլն): Որպես զննական նյութ օգտագործել այնպիսի նկար, որտեղ պատկերված են երեխաների գործունեության տարբեր ձևեր. օրինակ՝ «մեկ օրը» խաղը:





- Ծանոթացնել «երեկ», «այսօր», «վաղը» հասկացություններին, շաբաթվա օրերին հերթականությամբ:

- Ամրապնդել այն պատկերացումները, որ օրերը հաջորդում են մեկը մյուսին և ունեն իրենց անվանումները: Յոթերորդ օրը կազմում է մեկ շաբաթ: Յուրաքանչյուր շաբաթվա օրերի հերթականությունը միշտ նույնն է. «Երկուշաբթի, երեքշաբթի...»

- Ծանոթացնել ընթացիկ ամսվա անվան հետ: Հիշել ամիսների հաջորդականությունը:

- Ժամանակին վերաբերվող պատկերացումները ամրապնդել ոտանավորների, պատմությունների և հանելուկների օգնությամբ:

- Գնահատել երեխաների ինքնուրույն պատասխանները, գովաբանել:



## ԱՌԱՎՈՏ-ԿԵՍՕՐ-ԵՐԵԿՈ-ԳԻՇԵՐ

Ժամանակի հասկացությունը երեխան պետք է յուրացնի և սովորի այն օգտամանակի հասկացությունների միջոցով՝ մինչև հիշողության մեջ ամրապնդելը: Ժամանակի հասկացությունը ամենադժվար հասկացությունն է. այն պետք է ձևավորվի դեռևս նախադպրոցական տարիքում:

Յուրադրե՛ք նկարները և առօրյա կյանքում կազմակերպե՛ք գրույց՝ պարզելու օրվա տարբեր ժամանակահատվածները՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր՝ տալով դրանց անվանումները:

• Դիմե՛ք երեխային՝ ասելով. «Դու երկի նկատել ես, որ առավոտից հետո կեսօրն է, կեսօրից հետո՝ երեկոն, երեկոյից հետո՝ գիշերը»: Դուք կնկատեք, որ երեխաները առաջին հերթին առանձնացնում են օրվա պահերից առավոտը (երբ լույս է) և գիշերը (երբ մութ է):

Պետք է նաև նշել, որ օրվա հատվածները երեխաներն իրարից տարբերում են՝ ելնելով իրենց գործունեության բովանդակության փոփոխությունից, ինչպես նաև իրենց շրջապատում գտնվող մեծերի գործունեությունից ժամանակի այդ հատվածներում: Նկարները պետք է ընտրել այնպիսիք, որ դրանցում պարզորոշ երևա ժամանակի տվյալ հատվածին բնորոշ հատկանիշը: Բացատրեք, թե երբ և ինչ են անում նկարներում պատկերված երեխաները կամ մեծերը: Թող երեխան հաջորդականությամբ անվանի առօրյա մի քանի գործողություններ, թվարկի յուրաքանչյուրի կատարման ժամանակահատվածը: Պահանջե՛ք, որ թվարկեն «ցերեկային» և «գիշերային», ինչպես նաև «առավոտյան» և «երեկոյան» գործողության հնարավորին շատ և տարբեր ձևերը:

Ի՞նչ ես անում դու առավոտյան (մաքրում եմ ատամներս, լվացվում եմ, նախատանում եմ...), երեկոյան (հեռուստացույց դիտում, գնում զբոսանքի, հյուր, խաղում...), գիշերը (լվացվում, հանվում, պառկում քնելու):

• Սևականջիկը ուզում է իմանալ՝ իսկ ինչպես տարբերակել օրվա հատվածները: Մեծերը դիմում են ժամացույցի օգնությանը: Ջրուցե՛ք երեխայի հետ ժամացույցի մասին: Բացատրե՛ք, որ ժամացույցները լինում են տարբեր տեսակի՝ ավազի, մեխանիկական, էլեկտրոնային, արևի: Ժամացույցները կարող են լինել ինչպես գրպանի, սեղանի, պատի, թևի, այնպես էլ՝ գլխավոր, որը ցույց է տալիս ամենաճշգրիտ ժամանակը:

Յուրաքանչյուր մեծ քաղաք ունի գլխավոր ժամացույց:




Որտե՞ղ է գտնվում մեր քաղաքի գլխավոր ժամացույցը:

- Դիտե՛ք և ասացե՛ք, թե տանը ինչ տիպի ժամացույցներ եք օգտագործում:
- Սովորեցրե՛ք երեխային օգտվել ժամացույցից և կարդացե՛ք նրա մասին փոքրիկ

նոտանավորներ:

Թիկ-թակ, թիկ-թակ, ժամացույցն է թիկթակում:  
Երբ նայում ես մեծ սլաքին, բոպեներն ես գուշակում,  
Իսկ փոքրի՞կը... նա միշտ հստակ ժամերն է քեզ ճիշտ ասում:  
Ժամացույցից դու միշտ կարգին թե սովորես օգտվել,  
Չես շփոթի առավոտը կեսօրվա հետ, ոչ էլ գիշեր ու ցերեկ:  
Ժամանակին դու կարթնանաս ու ճիշտ ժամին կքնես,  
Երբեք խաղից ետ չես մնա ու նույն ժամին կճաշես:

• Ժամացույցի մոդելի վրա նշեք ձեր երեխայի սիրած ժամանակահատվածը, հետո երեխայի հետ գտեք մի նկար, որտեղ պատկերված է այն, ինչ երեխան սիրում է անել այդ ժամին:



Աստիճանաբար օրվա մասերի անվանումը կապել ոչ միայն երեխաների և նրանց շրջապատող մեծահասակների գործունեության կոնկրետ բովանդակության հետ, այլև բնության երևույթների հետ:

● Չրույց անցկացրեք և պարզեք օրվա մեջ բնության հետ կատարվող փոփոխությունների մասին: Օրինակ՝ առավոտյան ծագում է արևը, և ամեն ինչ դառնում է լուսավոր: Ծաղիկներն ու բույսերը, միջատներն ու կենդանիները արթնանում են:

☀ Հարցրե՛ք և պարզե՛ք, թե որ բույսն է ամենաբարձր ծայնով կանչում առավոտյան, ո՞ր բույսն է, որ ցերեկը բնում է, գիշերը արթնանում (բու), ո՞ր ծաղիկներն են, որ առավոտյան բացվում են, իսկ երեկոյան՝ բնում (փակվում են խատուտիկը, նունուֆարը, գիշերային մանուշակը...):

Կեսօրին արևը երկնակամարի կենտրոնում է, եթե ամառ է, և դա օրվա ամենաշոգ պահն է: Երեկոյան մեզ հիացնում է մայրամուտը, կարելի է դիտել այն և տեսնել՝ ինչքան տարբեր կարող են լինել մայրամուտները: Տեսանելի դարձնել այն, որ գունային առումով դա օրվա ամենասքանչելի ու ամենահարուստ պահն է: Երեկոյան վառվում են լապտերները, ցուցապաստառները և այլն:

Գիշերն ունի իր հմայքը. երկինքը լինում է աստղալից, անդորր է, խաղաղ, լուսնի կաթնագույն լույսը ողողում է քնած քաղաքը և այլն:

Ապա ամբողջացրեք օրվա պահերի անվերջանալի պտույտը: Այսպես՝ ամեն առավոտ երկնակամարի վրա բարձրանում է արևը, և սկսվում է օրը:

☀ Ինչպե՞ս են անվանում օրվա մասերը: Խաղացեք երեխայի հետ «Շարունակի՛ր բառը» խաղը:

- Ցերեկ է լինում, երբ..., իսկ մութ է լինում, երբ...:
- Լուսինը երևում է, երբ..., իսկ աստղեր են լինում, երբ...:
- Գիշերը երկինքը ..., իսկ ցերեկը...:
- Հնարավո՞ր է արդյոք, որ գիշերը լինի ցերեկվա փոխարեն, արևը գիշերը փայլի, իսկ լուսինը՝ ցերեկը:





● Խնդրե՛ք երեխային նկարել օրվա տարբեր պահերին բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները և միաժամանակ պատմել նշված ժամանակահատվածների մասին:

☺ Խաղացե՛ք «Մեր օրը» խաղը: Այս ամենը կօգնի ճիշտ և արագ գուշակել և բնութագրել նկարները: Օրինակ՝ ասեք նրան մի բառ, որի իմաստը կապված է ժամանակի պատկերացման հետ, թող երեխան ընտրի այնպիսի բառ, որի իմաստը ևս կապված է ժամանակի պատկերացման հետ, սակայն ցույց է տալիս օրվա այլ ժամ՝ հակառակ իմաստով, այսպես՝ առավոտ-գիշեր, երեկ-վաղը և այլն:

🎵 Հիշե՛ք, որ այս ամենի վերջնական եզրակացությունը պետք է լինի այն, որ երեխան պարզ գիտակցի, որ օրը մեկն է և այն բաղկացած է 4 մասից:

Սևականջիկը հրաշալի գիտի օրվա պահերը, ճանաչում է դրանք: Նա շատ է ցանկանում իմանալ՝ դո՞ւ էլ ես հիշում օրվա մասերը: Նա քեզ առաջարկում է խաղալ «Անվանի՛ր հարևաններին» խաղը:

Ասացե՛ք օրվա որևէ մասի անվանումը: Երեխան պետք է անվանի «հարևաններին» և բացատրի, թե երբ է դա լինում՝ «առաջ, թե՞ հետո»: Կարելի է երեխային օրվա տվյալ հատվածը բնութագրող հանելուկներ առաջարկել:



ՇԱՐԱՐՎԱԿԱՆ ՕՐԵՐԸ

Սնիրածնչաւ է երեխային պատկերացում տալ, որ օրերը հաջորդում են միմյանց, իսկ այս դեպքում սնիրածնչաւ է դասնում գտնուող տալ շարաքվա օրերի մասին:

● Բազմաօրեր երեխային, որ շարաքը յոթ օրերի ենթադասարարուն է, և շարաքվա յոթաբանչյաք օրն ունի իր տնունը: Կարևորք նաև այն, որ պատեր տնփոփոխ ենքրա կանոքրամք են հաջորդում միմյանց՝ երկուշաքրի, երեքշաքրի... կիրակի:

● Պահանջեր երեխայից, որ նա հաճախ քվարկի շարաքվա օրերը, ամենօրյա գրույցի բնրագրում անադայծան քոլ նշի՝ շարաքվա որ օրն է (հիշի նաև նախորդ և հաջորդ օրերի անվանումները): Ասագեր «Վանգնի մեկ շարաք, կգա նորք, և կրկին շարաք վա օրերը կգնան հեքրականօրքամք»:

Մատերանչիկը՝ մեր անուշիկ փխիկը, շատ է սիրում յոտանկարվել: Ահա նա տա նր՝ պատին, փակերել է իր յոտանկարները և նշել, քն յոթաբանչյաքը շարաքվա ո՞ր օրն է նկարվել, եքն շարաքն ունի յոթ օր:

- Յուրյ տար նկարները՝ գուշակելով օրվա անունը:
- Այդ օրը ես միշտ սիրում եմ երազել ու գիտեմ, որ այն շարաքվա առաջին օրն է:
- Այդ օրը ես միշտ սիրում եմ խաղալ բակում: Գա էլ շարաքվա երկրորդ օրն է:
- Իսկ այդ օրը միշտ կար գնելու եմ գնում, և դա շարաքվա երրորդ օրն է լինում:
- Այդ օրն էլ միշտ սիրում եմ աստիճաններին նստել և սարսել որևէ հիմար մկնիկի ու նրան ճանկա գգել: Գա շարաքվա չորրորդ օրն է:

● Իսկ այդ օրը միշտ ծովափ եմ ես գնում, ափին նստած նայում յոլացող նավերին: Գա շարաքվա հինգերորդ օրն է:

● Իսկ այդ օրը միշտ լվանում եմ գուլպաներս, մանավանդ, եքր օրն արեռտ է լինում: Գա շարաքվա վեցերորդ օրն է:

● Այդ օրը սիրում եմ նստել տանը և հյուրեր բնդունել: Գա շարաքվա յոթերորդ օրն է:

Գուշակիք շարաքվա բոլոր օրերը:

Իսկ հիմա նկարներին նայելով՝ պատմիք այն, ինչ դու ես անում շարաքվա այդ օրերին:

⊕ Ծանոքացրեք օրացույցին, որի միջոցով կարելի է նշել և հիշել բոլոր հիշարժան օրերը: Օրացույցի վրա այդ օրերը վկայքեր շրջանակի մեջ: Մավորեքրեք օրերը հաշվել ձախից աջ, խնդրեք պատասխանել նմանօրինակ հարցերին՝

- քանի՞ օր է մնացել միջոցառմանը, ո՞ր օրն է այն տեղի ունենալու, շարաքվա ո՞ր օրն է դա:

- Ամեն առավոտ կարող եք գծել, նշել որևէ ձևով տվյալ օրը օրացույցի վրա:

● Կարևորեք նաև գրույցներ այն մասին, քն ինչ է անելու երեխան այսօր, ինչ է արել երեկ, ինչ է պատրաստվում անել վաղը:

● Շարաքվա ո՞ր օրն էր երեկ, շարաքը քանի՞ օր ունի, համենմատիք շարաքն ու յոթ օրը, ո՞րն է շատ:

● Անվանիք շարաքվա առաջին օրը (հինգերորդը, յոթերորդը, երրորդը...):

● Գտեք այն ամիսը, որն ունի 5 կիրակի, 4 կիրակի: Ջանի՞ երկուշաքրի, երեքշաքրի և այն կա մեկ ամսում, ինչո՞ւ:

● Երեխայի հետ պարբերաբար խաղացեք «Շարաքվա օրեր» խաղը:

Սնիրածնչաւ է, որ դուք երեխայի ուշադրությունը հրավիրեք այն քանին, որ բոլոր օրացույցներն էլ գույց են տալիս եղանակները, ամիսները, ամսվա 4 շարաքը (սյունակներով): Ի՞նչ է նշանակում լրիվ շարաք:

⊕ Խնդրեք երեխային պատասխանել այս հարցերին:

- Ինչպես են անվանում շարաքվա առաջին և յոթերորդ օրերը:  
Հետևեք, քն ինչպիսի հաճախականօրքամք է երեխան իր խոսքի մեջ օգտագործում «ժամանակի» անվանումները:





## ԱՄԻՄՆԵՐ

Երեխային ծանոթացրե՛ք տվյալ ամսվա հետ: Պետք է անել այնպես, որ երեխան աստիճանաբար մտապահի ամիսների անվանումները (ամրապնդմանը կնպաստի Մարշալի «12 ամիս» հեքիաթի ընթերցումը):

☺ Խաղացե՛ք տարբեր բառախաղեր. Օրինակ՝

Ամսվա մեջ քանի՞ օր կա:

Ամսվա մեջ քանի՞ շաբաթ կա:

Ո՞րն է շատ՝ շաբաթը, թե՞ 7 օրը:

Ո՞րն է շատ՝ 1 տարի՞ն, թե՞ 12 ամիսը:

• Պահանջե՛ք, որ բանավոր անվանի շաբաթվա օրերը հերթականությամբ (տարվա ամիսները՝ հերթականությամբ):

☼ Հիշեցրե՛ք, որ ամիսը, շաբաթը, օրը նշելու համար մարդիկ հորինել են օրացույց: Ամրապնդե՛ք այն, ինչ նրանք արդեն գիտեն օրացույցի մասին:

Հիմնականում խաղալով նրա հետ՝ ասացեք.

• Գտի՛ր առաջին ամիսը: Մատիտով շրջագծի՛ր օրացույցի վրա. ինչպե՞ս են անվանում այն:

• Ի՞նչ տոներ են լինում հունվարին:

• Ո՞ւմ ծննդյան օրն է հունվարին:

• Հունվարը քանի՞ օր ունի:

Ինչո՞ւ են թվերից մի քանիսը օրացույցի վրա կարմիր գույնով նշված:

• Հաշվի՛ր՝ քանի տոնական օր կա հունվարին, քանի՞ հանգստյան օր:

• Օրացույցով ստուգե՛ք՝ որ ամիսը քիչ օրեր ունի:

• Հաշվի՛ր հունվար ամսվա մեջ եղած շաբաթների քանակը:

☺ Օգտագործելով նկարը՝ խաղացե՛ք «Եթե կարող ես» խաղը:

Խաղը կարող եք խաղալ և՛ գույգերով, և՛ խմբով (4-5 երեխա):



Նկարը դրեք սեղանի կենտրոնում: Խաղացողներից յուրաքանչյուրին տվե՛ք մի խաղաքար (որևէ փոքր իր):

Խաղացողներից մեկը աչքերը փակ, օդում պտտեցնելով, խաղաքարը դնում է նկարի որևէ մասում: Այա բացում է աչքերը և, որոշելով խաղաքարի տեղը (օրինակ՝ փետրվար կամ ամառ)՝ պատմում այն, ինչ գիտի տարվա տվյալ ամսվա կամ եղանակի մասին (ոտանավոր, շուտասելուկ, սուտասելուկ, հանելուկ) կամ էլ նկարագրի այն: Խաղից դուրս է մնում նա, ով չի կարողանում թեկուզ նկարագրելով պատմել տարվա տվյալ եղանակի, ամսվա կամ շաբաթվա մասին:

☺ Խաղ. «Որ երեք ամիսն է»:

Դուք ասում եք տարվա եղանակներից որևէ մեկի անունը՝ երեխայից պահանջելով թվել այն ամիսները, որոնք պատկանում են այդ եղանակին և՛ հակառակը (ասվում են ամիսները, երեխան պետք է ասի եղանակի անունը):

Զետևե՛ք, թե ինչպիսի հաճախականությամբ է երեխան իր խոսքի մեջ օգտագործում «Ժամանակի» անվանումները:



ԳԱՐՈՒՆ, ԱՄԱՌ, ԱՇՈՒՆ, ՉՄԵՌ

Սովորեցրե՛ք երեխաներին հասկանալ և հերթականությամբ անվանել տարվա եղանակները՝ սկսած ձմեռվանից: Սովորեցրե՛ք տարվա տվյալ եղանակի ամիսները՝ ճշտելով նաև այն, որ յուրաքանչյուր եղանակ ունի երեք ամիս: Թող երեխաները պատմեն, թե ինչպես են փոխվում եղանակները:

Դեկտեմբեր, հունվար, փետրվար - ձմեռ:

- Մարտ, ապրիլ, մայիս - գարուն:
- Հունիս, հուլիս, օգոստոս - ամառ:
- Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր - աշուն:

Կարևոր է նաև այն, որ տվյալ եղանակի իրար հերթագայող ամիսները չեն կրկնում մեկը մյուսին և յուրօրինակ են իրենց տեսակի մեջ: Օրինակ՝ վաղ աշուն (սեպտեմբեր), բուն աշուն (հոկտեմբեր), խորը աշուն (նոյեմբեր):

Սևականջիկը հայտնվել է տարվա տարբեր եղանակներում:

● Խնդրեք երեխային ասել, թե տարվա ո՞ր եղանակն է պատմության սկզբում, վերջում: (Գարուն, ամառ, ձմեռ, աշուն) Առաջարկե՛ք թվարկել ճիշտ հերթականությամբ: Երեխայի պատմելու ընթացքում երբեմն ընդհատե՛ք նրան և խնդրեք լրացուցիչ մանրամասներ ավելացնել: Ի՞նչ տեսք ունի ծառը (փխսիկը) յուրաքանչյուր նկարում: Դա կօգնի ձեր երեխային պատմությանը ավելացնել նոր տեղեկություններ:

Առաջարկե՛ք հանելուկներ եղանակների մասին խառը դասավորությամբ:

Արեգակը ձեռքով ամպին հրում,  
Ու ժպտում է կարծես, ուրախ աչքով անում,  
Ու ժպիտից այդ ջերմ ու տաք  
Չյունն է հալչում ու կաթկթում:  
Ասա՛ տեսնեմ, ե՞րբ է լինում:

Երբ է լինում, որ ամպիկը  
Խիստ զայրանում, արտասվում է,  
Ծառը դանդաղ մերկանում է,  
Սևականջն էլ խիստ տխրում է:

(Աշուն)

(Գարուն)

Տեսե՛ք, տեսե՛ք բնրուչ ու հեզ  
Փաթիլներն են ցած թափվում,  
Չնեմարդն էլ՝ դույլը գլխին,  
Սևականջիկին է ժպտում:  
Ասա՛ տեսնեմ, երբ է լինում:

(Չմեռ)

(Ամառ)

Ասա՛ տեսնեմ՝ երբ է լինում  
Կիզիչ, այրող արևի տակ  
Միրգն է հասնում, հյութով լցվում:


Պարզե՛ք, թե ինչպես հասկացավ, որ դա աշուն է (գարուն է, ամառ կամ ձմեռ է): Թող երեխան նշի դրանցից յուրաքանչյուրին յուրահատուկ հատկանիշներ:

Խաղացե՛ք «Ի՞նչ է ավելորդ» խաղը, որոշե՛ք, թե ասված բառերը ո՞ր եղանակին են վերաբերվում և գտնել դրանց մեջ ո՞ր բառն է ավելորդ.

- Փաթիլ, ձեռնոց, տոնաժառի խաղալիք, ելակ:
- Ծառի ճյուղ, գետակ, ձնծաղիկ, մուշտակ:
- Արև, երիցուկ, հատապտուղ, փաթիլ:
- Մունկ, կարմրավուն տերև, անձրևի կաթիլներ, լողազգեստ:

Երբ բոլոր առաջադրանքները կատարվում են, հանձնարարել երեխային ինքնուրույն մտածել նմանօրինակ խնդիրներ:

Հանախակի խաղացե՛ք «Ի՞նչով է գալիս գարունը» (ամառը, աշունը, ձմեռը): Թող երեխան ասի տվյալ եղանակին բնորոշ բոլոր հատկանիշները:



Handwritten text in a vertical column on the right side of the page, likely bleed-through from the reverse side.

● Սևականջիկը համոզված է, որ դու արդեն գիտես, որ ցերեկը նախորդում է երեկոյին, իսկ երեկոն՝ գիշերվան: Գիտես նաև, որ ձմեռվանից հետո գալիս է գարունը, ապա՝ ամառը, հետո՝ աշունը:

☞ Առաջարկե՛ք նկարել տարվա սիրած եղանակը, գունավորել այն և փոքրիկ պատմություն հորինել ու պատճառաբանել, թե ինչո՞ւ է սիրում այն: Այդ եղանակի ո՞ր հատկանիշներն են առավել ցանկալի և հաճելի իրեն:

● Հենց այդ ամենից ելնելով հարցրեք երեխային, արդյոք կցանկանա՞ր, որ կլոր տարին թագավորներ միայն իր սիրած եղանակը, թե՞ խիստ անհրաժեշտ է տարվա եղանակների հերթափոխությունը: Ինչի՞ համար է այն օգտակար:

☉ Հաճախակի գրուցեք տարվա եղանակների մասին և տվեք հետևյալ հարցերը.

● Քանի՞ եղանակ ունի տարին:

● Ե՞րբ է ավարտվում հին տարին (ո՞ր ամսին): Ո՞րն է տարվա վերջին օրը:

● Ո՞ր ամսից է սկսվում նոր տարին:

● Ընդամենը քանի՞սն են ամիս-եղբայրները: Ինչո՞ւ են ասում՝ տարին կլոր է:

● Համեմատիր տարվա եղանակներին մարդու հետ և ասա՛, հետո նկարի՛ր համապատասխան դեմք:

● Տարվա ո՞ր եղանակն է ժպտերես մանկան նման:

● Ո՞ր եղանակն է ալեգարդ ծերունու նման (աշուն):

● Այն ո՞ր եղանակն է պատանու նման գվարթ ու աշխույժ:

● Տարվա այն ո՞ր եղանակն է, որ աշխատավոր, հասուն մարդու պես բերք ու բարիք է բաժանում իր ծոցից:

● Ո՞ր գույները կօգտագործես ամառը նկարելիս:

Ինչպե՞ս կանվանես այդ գույները. (դեղին, կարմիր, կապույտ... (տաք)): Իսկ ձմեռը նկարելի՞ս (մոխրագույն, սպիտակ... այսինքն՝ սառը):

● Կանաչ գույնը տարվա ո՞ր եղանակը նկարելիս կգերիշխի (գարունը):

● Կդժվարանա՞ս արդյոք աշնանային գույներ ընդգրկելիս, չե՞ որ դրանք շատ բազմերանգ են ու հեքիաթային (երեխային ցույց տվեք, թե ինչպիսի գեղեցիկ գուներանգ է ստացվում կարմիրի և դեղինի, կապույտի, կանաչի և մանուշակագույնի խառնուրդներից):

● Դու նկատե՞լ ես, որ ծիածանի գույները, ինչպես տարվա եղանակները, միշտ իրար են հաջորդում նույն հերթականությամբ կամ, ինչպես ասում են, ունեն իրենց մշտական նախը (կարմիր, ծիրանագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն): Առիթը բաց մի՛ թողեք և անձրևից անմիջապես հետո, երբ ծիածանն է երևում, ասֆալտը չորանալուց հետո նկարեք ծիածանը՝ պահպանելով գույների հաջորդականությունը: Այս ամենը տեղի է ունենում այն պատճառով, որ բնության մեջ ամեն ինչ օրինաչափ է:

☞ Սևականջիկը, երեխաներին ցույց տալով իր նկարած նկարը, պարծեցավ, ասելով. «Տեսե՛ք, թե ինչքա՞ն գեղեցիկ եմ նկարել ձմեռը»:

Երեխաներն ուշադիր դիտեցին և ժպտալով ասացին.

- Մենք տեսանք, որ դու թղթին ձմռան օր ես նկարել,

Բայց նկարում բազմաթիվ սխալներ ես դու արել,

Մենք քեզ կօգնենք, որ դու գտնես և էլ երբեք չսխալվես:

Ուշադիր դիտի՛ր նկարը և ասա՛ նկարում թույլ տված սխալները:



புல்லு

## ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Ճ Երեխային սովորեցնել միատեսակ առարկաներից կազմել խմբեր և այն բաժանել առանձին առարկաների:

- Սովորեցնել խմբավորել առարկաներն ըստ գույնի, ձևի, մեծության (առանձնացրեք բոլոր կանաչ, մեծ եռանկյունիները):

- Շրջապատում գտնել մեկ և շատ առարկաներ:

- Սովորեցնել տարբերել «շատ», «մեկ», «մեկական» և «ոչ մեկը» բառերի իմաստը: Պատասխանելիս օգտվել «մեկ», «շատ», «մեկական» և «որ մեկը» բառերից:

- Սովորեցնել համեմատել երկու հավասար և անհավասար խմբերի քանակական հարաբերությունը, առարկաներն իրար վրա դնելու և իրար մոտեցնելու ճանապարհով:

- Սովորեցնել տարբերել առարկաների խմբի ընդհանուր հատկանիշը (բոլոր գնդակները կլոր են, սրանք բոլորը կարմիր են, իսկ սրանք՝ մեծ և այլն):

- Սովորեցնել համեմատել խումբը կազմող մասերը, որոշել նրանց հավասարությունն ու անհավասարությունը գույգեր կազմելու ճանապարհով (ծաղկամանի մեջ ծաղիկները շատ են, նրանցից մի մասը կարմիր են, մյուսները՝ սպիտակ):

- Սովորեցնել տարբեր գգայարանների միջոցով ընկալել առարկաների խմբերի քանակը (ծափ տալ, ցատկոտել այնքան անգամ, որքան հարված կլսեն):

Մի՛ մոռացեք, որ երեխայի  
առաջին և ամենակարևոր ուսուցիչը Դուք եք:  
Եղևք համբերատար:





## ՇԱՏ-ՄԵԿ, ՇԱՏ-ՔԻՉ, ՈՉ ՄԵԿԸ

Չ Հաշվի ուսուցման առաջին փուլում սովորեցրեք երեխային միևնույն գույնի (ձևի և մեծության) առարկաներից, խաղալիքներից կազմել խմբեր: «Մեկ» և «շատ» հասկացությանը ծանոթացնելիս օգտվեք հիմնականում կենցաղային իրավիճակներից:

Երեխային տվեք հնարավորություն բազմատեսակ առանձին առարկաներից կազմել խմբեր և այն նորից բաժանել առանձին առարկաների: Օգտվեք «մեկ», «շատ», «ոչ մեկը» արտահայտություններից:

Երբ երեխան հասկանում է «որքա՞ն է» հարցի իմաստը, սովորեցրե՛ք նրան ստեղծել խմբեր ինչ-որ մեկ հատկանիշի համաձայն: Օրինակ՝

⊗ Առաջարկե՛ք բերել դեղին գույնի մեկ մատիտ, էլի մեկը, հետո էլի մեկը: Հարցրեք, թե ինչ է բերել, ինչ գույնի է, որքան են դրանք (շատ): Նույնը կատարեք կանաչ մատիտների օգնությամբ:

Ապա պահանջե՛ք, որ երեխան ասի. մատիտները շատ են, բայց դրանք տարբեր գույների են (դեղին և կանաչ):

☞ Հրավիրեք երեխայի ուշադրությունը մեղուների նկարի վրա, առաջարկե՛ք հետևյալ հարց-առաջադրանքները.

● Աշխատասեր ու տգտզան մեղուները մեկ-մեկ հավաքվեցին փեթակ-տնակի առջև և դույլերն առած՝ ո՞ր են շտապում և ինչո՞ւ: (Ծաղիկներից նեկտար վերցնելու)

● Որքա՞ն մեղու էր դաշտ դուրս եկել (շատ), իսկ դույլերը որքա՞ն էին (շատ):

● Տուն դառնալու ճանապարհին քանի՞ մեղու էր հետ մնացել (մեկ):

● Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ (դույլը ծանր էր, իսկ ճամփան երկար):

● Դեղին գույնով փորձիր գունավորել այն մեղուների թևերը, որոնք շատ են, իսկ նարնջագույնով՝ այն մեղվի թևերը, որը մեկն է և առանձնացել է մյուսներից:

● Ասա՛. «Դեղնագույն մեղուները շատ են, իսկ նարնջագույնը մեկ հատ է»:

● Եթե ուժեղ քամի փչի, դրսում քանի՞ մեղու կմնա (ոչ մեկը):

⊗ Առաջարկեք երեխային. «Ե՛կ խորանարդիկներից գնացք կառուցենք և շրջենք զբոսայգում: Ահա մեկ խորանարդ, էլի մեկ խորանարդ, ևս մեկը: Որքա՞ն են խորանարդիկները» (շատ): Ապա շարունակեք. «Մենք խաղացինք, այժմ եկ մեկ-մեկ հավաքենք խորանարդիկները և դնենք տուփի մեջ: Որքա՞ն խորանարդիկ հավաքեցինք տուփի մեջ (շատ): Իսկ որքա՞նը մնաց քեզ մոտ (ոչ մեկը)»:

☞ Երեխային օգնեք գունավոր թղթից կտրատել նույն չափի շատ փուչիկներ:


● Քանի՞սն են փուչիկները (շատ):

● Առաջարկեք վերցնել փուչիկներից մեկը և ստանձել թղթին:

● Քանի՞սը ստանձեցիր (մեկը):

● Նման խաղեր կարելի է անցկացնել՝ սյուժեներ կազմելով ճուտիկների, մեղուների, ծաղիկների և այլ կտրատված նկարներով:

Երեխայի ձեռքի մկանները զարգացնելու համար հետևեք, որ առարկաները բռնի բութ մատի և ցուցամատի օգնությամբ:



## ՇԱՏ ԵՎ ՍԵԿ

Դիտե՛ք նկարը և պատմե՛ք մի գվարճալի պատմություն:

Հավ մայրիկը ձվերի վրա նստած սպասում էր իր դեղնակտուց ճուտիկների դուրս գալուն և այ՛քեզ զարմանք, տե՛ս, թե ինչ պատահեց:

- Եկ պարզենք, թե քանի՞ ձու էր ածել հավ մայրիկը (շատ):

- Քանի՞ ձվից է ճուտ դուրս եկել (մեկ): Կրկնե՛ք «շատ» և «մեկ» բառերը շեշտված:

- Ինչո՞ւ զարմացավ հավ մայրիկը (ճուտը շատ մեծ էր):

- Ինչպիսի՞ն էր նորածին ճուտը: Նա նման չէր հավի ճուտի, նա ձվից դուրս էր ցցել աղ-վամազոտ մեծ գլուխն ու կարմիր անճոռնի տոտիկները:

● Դիտե՛ք հաջորդ նկարը և հարցրե՛ք.

- Սևականջիկի ո՞ր կողմում է ծաղիկը:

- Ի՞նչ ծաղիկ է, քանի՞ հատ է, իսկ տերևները որքա՞ն են (շատ):

Գունավորի՛ր այն:

- Սևականջիկը ինչո՞ւ է այդպես զարմացած նայում, ո՞ր են երիցուկի թերթիկները:

Ընդամենը քանի՞ թերթիկ է մնացել:

- Ի՞նչ ես կարծում, ինչի՞ց կարող էին թափվել թերթիկները:

⊗ Երեխայի ինքնուրույն գործունեության համար կարող եք օգտվել տարբեր գույ-նի և մեծության խորանարդիկներից: Խնդրե՛ք, որ շատ խորանարդիկներից վերցնի մի-այն մեկ մեծ խորանարդիկ, նորից վերցնի մեկը... Ի՞նչ եղան մեծ խորանարդիկները (քչացան): Շարունակե՛ք մեկական վերցնել և տեղադրել սեղանի աջ կողմում մինչև մնա մեկ խորանարդիկ:

Պարզել մեծ խորանարդիկների քանակը (շատ են), իսկ քանի՞ խորանարդիկ մնաց տուփի մեջ (ոչ մեկը):

Նույն գործողությունը կատարել փոքր խորանարդիկների հետ և ասել՝ ինչպես մեծ խորանարդիկները, այնպես էլ փոքրերը շատ են: Իսկ նրանցից մեկը վարդագույն է:

👉 Տվե՛ք նրան տարբեր մանր նյութերով առաջադրանքներ: Օրինակ՝

● Խմորից փոքր կտորներ պոկի՛ր և միայն մատների շարժումով դրանցից գնդիկներ պատրաստի՛ր, պտտեցրո՛ւ սեղանի վրայով (աջ, ձախ, վերև, ներքև և ասա քանի գնդիկ ունեցար):

⊗ Խաղացե՛ք երեխայի հետ կոճակներով: Ասացե՛ք նրան. «Ես վերցնում եմ մեկ կո-ճակ, դու էլ վերցրու մեկ կոճակ»: Հարցրե՛ք. «Ինձ մոտ կա մեկ կոճակ, իսկ քեզ մոտ որ-քա՞ն կա»: Այսպես՝ շարունակաբար, մինչև բոլոր կոճակները կտեղափոխեք մեկ այլ տուփի մեջ: Հետո հարցրե՛ք, թե ինչ տուփում որքա՞ն են կոճակները (շատ), իսկ իրենց մո՞տ (ոչ մեկը): Հաճախակի կոճկել տվե՛ք կոճակները:

Յուրաքանչյուր առաջադրանքից հետո երեխաների ուշադրությունը հրավիրե՛ք առարկաների քանակի վրա (շատ են, մեկ հատ է):



☞ Երեխայի համար պատմեր մի պատմություն:

- Չմեռային մի գեղեցիկ օր երեխաները դուրս են եկել գրոսանքի և, տեսնելով փափուկ ու փայփուլուն ձյունը, նրանցից մեկը ընկավ ձյան մեջ և սկսեց գլորվել, հետո նրան միացավ Դավիթը, հետո՝ Տիգրանը, հետո՝ Արմանը, նրանից հետո՝ Գայանեն: Իսկ Շուշանիկը հեռվից նայում էր նրանց ու ծիծաղում:

- Քանի՞ երեխա էր թավալվում ձյան մեջ (շատ):

- Քանի՞ երեխա էր դիտում նրանց խաղը (մեկ):

⊗ Առաջադրեք երեխային մեկ աթոռի վրա նստեցնել 1, մյուսի վրա շատ տիկնիկներ (մեկ և շատ ավտոմեքենաներ և այլն): Կամ ձախ ձեռքով վերցնել մեկ կոճակ, (քար, կաղին, մատիտ...), իսկ աջ ձեռքով՝ շատ կոճակներ (քարեր, կաղիներ, մատիտներ...):

Խնդրե՛ք ափով ծածկել սկզբում մեկը, ապա՝ շատը, որից անպատճառ կեզրակացնեն, որ շատը (մատիտներ, կոճակներ, կաղիներ) ափի մեջ չի տեղավորվում:

● Երեխան կհասկանա նաև, որ նույն խաղալիքները կարող են լինել մեկ և շատ:

● Չբոսանքի գնալիս երեխայի հետ դիտարկեք ծառի վրայի շատ տերևները, պտուղները, փողոցի տները, պատուհանները, մարդկանց, ավտոմեքենաները:

☺ Խաղացե՛ք «Քամին և տերևները» խաղը:

Վերցրո՛ւ տերևներով մի ճյուղ: Պատմի՛ր, որ մի ճյուղի վրա շատ տերևներ կան:

● Փորձի՛ր քամի դառնալ, փչի՛ր տերևների վրա, մեկ-մեկ պոկի՛ր ճյուղից և ասա՝ «ճյուղի վրա ո՛չ մի տերև չմնաց»:

● Քամին որոշեց պոկել տերևները. փչեց ճյուղի վրա, մեկ տերև պոկվեց, մեկ անգամ էլ ուժեղ փչեց ևս մեկն ընկավ, հետո՝ նորից մեկը... ծառի վրա տերև չմնաց:

● Չբոսայգում երեխայի համար գնեք շատ փուչիկներից մեկը: Հնարավորություն սովեք, որ տեղում դրանք համեմատի՛, հարցրեք՝ «Ո՞ւմ ձեռի փուչիկներն են շատ (քիչ)՝ վաճառողի՞, թե՞ իրենը»:


● Բաց թողեք փուչիկը և պարզեք՝ ձեռքում քանի՞ փուչիկ մնաց (ոչ մի):

● Մի պաղպաղակ գնեք երեխայի համար: Համեմատե՛ք այն ուտելուց առաջ և հետո. քանի՞ պաղպաղակ ունի (ուտելուց առաջ մեկը, իսկ ուտելուց հետո՝ ոչ մի):

● Նկարի՛ր մեկ ծառ, իսկ շուրջը ծաղկաշատ մարգագետին: Հարցրե՛ք.

● Քանի՞ ծառ կա (մեկ), ծաղիկները որքա՞ն են (շատ):

● Էլ ինչի՞ մասին կարելի է ասել, որ շատ է (անձրև, ձյուն, ավազ, խոտ, ամպեր):



## ՇԱՏ - ՔԻՉ

☞ Տե՛ս նկարը և լսիր մի պատմություն:

Հավի ճուտիկները երբ մեկ-մեկ դուրս եկան ձվերի միջից, դուրս վազեցին հավ-մայրիկի թևի տակից և գլոր-մլոր գնացին կեր փնտրելու: Հավ-մայրիկը անհանգիստ նայում էր նրանց և մտածում.

- կարո՞ղ ես ասել, ինչո՞ւ է այդպես անհանգիստ հավ-մայրիկը: (Ինչպե՞ս կարող եմ թևիս տակ հավաքել նրանց, չէ որ ես մեկն եմ, իսկ նրանք...):

- Հավ-մայրիկն ու ճուտիկը չափերով ինչպիսի՞ն են:

- Էլ ինչպիսի՞ կենդանիներ գիտես, որ ձագերը շատ են, մայրիկը՝ մեկ:

☺ Խաղացե՛ք «Չվիկները» խաղը (աշխատանքային խմբի համար):

• Առաջարկե՛ք երեխաներից յուրաքանչյուրին վերցնել մեկ ձվիկ: Հարցրե՛ք.

«բոլորին բավարարեցի՞ն ձվիկները»:

- Քանի՞ ձվիկ ունի ձեզանից յուրաքանչյուրը (մեկական):

- Չվիկներն են շա՞տ, թե՞ դուք (Հավասար են: Չվիկներն այնքան են, որքան երեխաները):

• Ասացե՛ք, որ ձվիկների մեջ անակնկալ կա: Բացե՛ք ձվիկները և ասացեք, թե ում մոտ ինչ խաղալիք կա:

- Չվիկներն են շա՞տ, թե՞ խաղալիքները:

- Ինչպե՞ս իմանանք (դասավորենք իրար դիմաց): Չվիկները շատ են, խաղալիքները՝

քիչ, որովհետև ձվիկներից մեկի մեջ խաղալիք չկա:

☞ Չեռփի ափի մեջ սեղմեք փոքր առարկաներ (կոճակներ, քարեր, լոբիներ, ուլունքներ, և այլն): Առաջարկե՛ք գուշակել, որքան է թաքնված (մեկ հատ, շատ, ոչ մի հատ):

☺ Խաղացե՛ք «Գտի՛ր և նկարագրի՛ր» խաղը: Թող երեխան դիտի իր շուրջը և ասի, թե ինչն է մեկ, ինչը՝ շատ:

- Քանի՞ գիրք կա պահարանի վրա:

- Քանի՞ բաժակ կա սեղանին:


- Մրգամանի մեջ մրգերը քանի՞սն են:

☼ Սեղանին դրեք մեկ նարինջ, խնձոր կամ դեղձ և ասացե՛ք.

- Նարինջը մեկն է, իսկ մենք շատ, արի՛ր բաժանենք այն մեր տան անդամների միջև. մի մասը տանք տատիկին, մեկ մասը՝ պապիկին, մեկ մասը՝ մայրիկին, մեկ մասը՝ բույրիկին և վերջինը՝ հայրիկին:

Հարցրեք.

- Ի՞նչ ես կարծում, մասերն են շատ, թե տան անդամները (նարնջի մասերն այնքան էին, որքան տան անդամները):





ԵՐԿՈՒ ԽՄԲԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՄԵՍԱՏՈՒՄ  
ՇԱՏ-ՔԻՉ

Փոքր տարիքի երեխաները կարող են համեմատել 5-6 առարկա՝ սկզբում իրար մեմատվում են 5-10 առարկա բազմազան եղանակներով՝ գույգեր կազմելով, միացնելով գծիկների կամ թելիկների միջոցով, ավելացնելով կամ պակասեցնելով դրանց քանակը:

Առաջարկե՛ք երեխային դիտել նկարը և պատմել այն:

● Լճակում՝ ջրաշուշանների տերևների վրա, նստել էին գորտերն ու գրուցում էին քաղցր-մեղր:

● Ուշադիր դիտի՛ր և ասա՞ գորտերն են շա՞տ, թե՞ տերևները (գորտերը քիչ են, իսկ տերևները՝ շատ):

● Ինչո՞ւ են այդպես մտածում, պատմի՛ր:

● Ինչպե՞ս կարելի է ջրաշուշանների և գորտերի թիվը հավասարեցնել (մեկ գորտ ավելացնել, կամ էլ ջրաշուշաններից մեկը՝ ազատը, հանել, պակասեցնել):

● Ուրեմն կարելի է ասել՝

● Գորտերը քիչ են տերևներից, տերևները շատ են գորտերից:

● Որքանո՞վ են պակաս (ավել):

● Նույն գործողությունները կատարել մրջյունների խմբերի հետ: Որոշե՛ք նրանց շատ-քիչ լինելը և հորինե՛ք մրջյունների մասին մի պատմություն՝ օգտագործելով «շատ», «քիչ» բառերը:

☺ Առաջարկե՛ք երեխային խաղալ «Ուլունքներ կատուների համար» խաղը:

Սևականջիկն ու Սպիտակականջիկը երկու գույնի՝ կարմիր և կանաչ (մեծ և փոքր) ուլունքներով մի տուփ են գտել և ուզում են դրանք բաժանել երկու խմբի ու շարել թելին: Օգնե՛ք կատուներին հավասար բաժանել դրանք:

Կարմիրը տանք Սևականջին, իսկ կանաչը՝ Սպիտակականջին: Ասե՛ք. «Կարմիր ուլունքները շատ են, կանաչ ուլունքները ևս շատ են»:

Առաջարկե՛ք երեխային գույգեր կազմելու օգնությամբ համեմատել կարմիր և կանաչ ուլունքները՝ որոշելով նրանց «շատ», «քիչ» կամ «հավասար» լինելը, ապա շարեք թելի վրա:

Ուլունքները մեծ ու փոքր լինելու դեպքում տվե՛ք հետևյալ առաջադրանքները.

● Դասավորի՛ր և շարի՛ր թելի վրա մեկ մեծ ուլունք, մեկ փոքր ուլունք հերթականությամբ կամ հակառակը (մեկ փոքր, մեկ մեծ, մեկ փոքր, մեկ մեծ):

● Մի շարքում շարե՛ք միայն փոքրերը, իսկ մյուսում՝ մեծերը:

● Համեմատե՛ք ուլունքները, որոշե՛ք նրանց քանակը յուրաքանչյուր շարքում:

● Սեղանին՝ մի կույտի մեջ, լցրե՛ք երկու գույնի կափարիչներ (նախապես գունավորված լուցկու հատիկներ) և առաջարկե՛ք առանձնացնել դրանք ցանկացած եղանակով: Ի՞նչ ստացվեց. կանաչ խցանները (կափարիչները, լուցկիները) դեռ մնացել են, իսկ դեղինները վերջացել են:

☼ Հաշվի՛ր և համեմատի՛ր այդ խմբերում եղած կափարիչները (խցանները, լուցկիները):




● Ասա՞ ո՞րն է շատ, որն է քիչ: Ինչպե՞ս իմացար, պատմի՛ր:

☺ Խաղացե՛ք «Ո՞րն է շատ» խաղը:

Խաղն անցկացրե՛ք զրոսայգում: Որպես խաղավար՝ նետե՛ք գնդակը և առաջարկե՛ք այսպիսի հարցեր՝

● Այգում ինչե՞րն են շատ՝ ծառե՞րը, թե՞ թփերը, տղանե՞րը, թե՞ աղջիկները, գնդակները, թե՞ պարանները:

Հաղթում է նա, ով արագ և ճիշտ կորոշի առարկաների շատ և քիչ լինելը և կասի համեմատման ձևերը:



✎ Երեխայի հետ այգուց կոն ու կաղին հավաքեք: Տարեք տուն, լցրեք սեղանին և համեմատելով՝ ասացեք. «Մեր բերած կաղիննե՞րն են շատ, թե՞ կոները»:  
 Կաղին ու շարքերով դասավորել իրար դիմաց: Ասել՝ կոները շատ են, քան կաղինները, քանի որ ավելացել են երկու կոն, իսկ կաղինները երկուսով պակաս են: Երկու կոնը գույգ չեն կազմել:

Առաջադրանքների այսպիսի կատարումը կօգնի հետագայում պարզ խնդիրներ լուծել. «որքանով է ավելի, որքանով է պակաս, ավելի է այսքան, պակաս է այսքան»:

✿ Որպեսզի ամրապնդեք երկու խմբերի առարկաների համեմատման հմտությունները գույգ կազմելու օգնությամբ, երեխաներին առաջարկեք «Ո՞վ է ճիշտ» պարզագույն խաղը, որի համար պահանջվում է երկու տուփ հաշվիչ փայտիկների հավաքածու կամ լուցկիներ, որոնք տարբերվում են գույնով (կարելի է նախօրոք գունավորել լուցկու հատիկները):

Երկու հավաքածուների փայտիկները (լուցկիները) դատարկում եք սեղանին առանձին կույտերով: Չեզանից մեկը վերցնում է որևէ գույնի շատ փայտիկներ (լուցկիներ), իսկ մյուսը նույնն անում է՝ մյուս կույտից վերցնելով աչքաչափով նույնքան:

Եղեք վստահ՝ երեխան ինքը կկամենա ստուգել իր և ձեր աչքաչափը և կհամեմատի փայտիկների քանակը՝ գույգեր կազմելու օգնությամբ:

✎ Հանձնարարեք երեխային մատիտները տուփերի մեջ դասավորել ըստ գույների: Համեմատեք և հետևեք, որ ամեն անգամ երեխան անվանի «մեկ», «շատ», «քիչ» բառերը:



😊 Խաղացեք նաև «Շատն է, մեկն է» խաղը:  
 Երեխան մեջքի հետևում պահում է ձեռքերը: Լսելով «մեկ» կամ «շատ» բառերը՝ ցույց է տալիս համապատասխան քանակի մատիկներ: Կամ «Ով ավելի քիչ (շատ) մատիկներ կբացի» հրահանգով մրցում են:

Խաղացեք այս գվարճալի խաղը, քանի դեռ այն ուրախացնում է երեխաներին:  
 ✎ Աշնանային հերթական զբոսանքի ժամանակ երեխաների ուշադրությունը հրավիրեք ծառից թափվող տերևներին: Ասացեք. «Տես, տերևները մեկիկ-մեկիկ, քնքշորեն ու նազանքով օրորվելով, թափվում են ներքև: Որքա՞ն են գետնին ընկած տերևները և ի՞նչ գույնի են»:

• Մեկնի՛ր ձեռքդ և հավաքի՛ր մեկ բուռ տերև: Ասա՝ ծառի վրա մնացած տերևնե՞րն են շատ, թե՞ ափիդ մեջ եղածները: Ինչպե՞ս կարող ենք համոզվել, համեմատման ի՞նչ ձևերից կարող ենք օգտվել (աչքաչափով):

• Նման խաղեր կարելի է անցկացնել նապաստակների և գազանների, ավտոմեքենաների և ավտոտնակների, մահճակալների և տիկնիկների օգտագործմամբ՝ տալով երեխային դրանց խաղալիքները կամ պատկերները:

• Ամեն անգամ խնդրե՛ք, որ երեխան պատմի խմբերի «շատ» կամ «մեկ» լինելու մասին՝ մատնացույց անելով այն:



Կատուները, տեսնելով Սևականջին, մոտ վազեցին, և նա նրանց բաժանեց նրբերշիկներ:

☞ Դիտի՛ր նկարը և ասա՛ արդյոք բավարարեցի՞նք նրբերշիկները:

- Նրբերշիկներն են շա՞տ, թե՞ կատուները, ինչպե՞ս իմացար, որ կատուները շատ են (համեմատելի՛ 1 կատու -1 նրբերշիկ գույգով, վերջին կատուն նրբերշիկ չունի, ուրեմն կատուները շատ են, նրբերշիկները՝ քիչ):

- Իսկ ինչպե՞ս կարելի է իմանալ կատուների շատ և նրբերշիկների քիչ լինելու մասին (գծիկներով միացնելով կատուներին նրբերշիկներին):

- Քանի՞ նրբերշիկ պետք է նկարես, որ նրբերշիկներն էլ լինեն այնքան, որքան կատուներն են (մեկ):

- Իսկ հիմա ինչքա՞ն է դրանց քանակը (հավասար են): Կատուներն այնքան են, որքան նրբերշիկները: Յուրաքանչյուր կատու ունի մեկական նրբերշիկ:

- Էլ ինչպե՞ս կարելի է դրանց քանակը հավասարեցնել (մեկ կատուն նեղացավ, տխրեց ու գնաց):

☞ Նույն հարցերն առաջադրեք փխիկների արծակած օճառապղպաղակների քանակի մասին.

- Սպիտակ պղպաղակներն են շա՞տ, թե՞ մուգ գույնի պղպաղակները: Ինչպե՞ս կարելի է դա որոշել (գծերով իրար միացնելով):

☞ Աշնանային մի արևոտ օր Սևականջիկը և Սպիտակականջիկը զբոսնում էին ծովափին: Նրանցից յուրաքանչյուրն իր համար քարեր հավաքեց և կույտ կազմեց: Հետո սկսեցին վիճել, թե ում քարերն են շատ:

Դիմելով երեխային՝ ասացե՛ք «Եկ օգնենք նրանց և ցույց տանք քարերի շատ (քիչ) կամ հավասար լինելը»:

Քարերը՝ մինչև վերջինը, մեկական դնելով ափսեների մեջ, երեխան պարզում է, որ Սևականջիկի քարերից մեկը մնաց, ուրեմն Սևականջիկի քարերը շատ են, Սպիտակականջիկինը՝ քիչ:

• Երեխային հարցրե՛ք, թե համեմատման էլ ինչ ձև գիտի (քարերը դասավորել իրար դիմաց): Եթե քարերից մեկը գույգ չունի, ուրեմն շատ է:


• Նույն գործողությունը երեխայի հետ կատարեք երկու գույնի շրջանիկների օգնությամբ:

☞ Առաջարկե՛ք շրջապատում, նկարներում, գրքերում գտնել առարկաների, խաղալիքների, կենդանիների, հատապտուղների, մրգերի, ծաղիկների, ձկների, միջատների խմբեր:

Անվանե՛ք նման խմբերը. պարզե՛ք՝ ինչ ընդհանուր բան կա դրանց միջև, ինչո՞վ են նման, տարբեր (այնքան են, որքան, նույնքան են, հավասար են, հավասար չեն): Հարցնել, թե ապացուցման ինչ ձևից կօգտվի երեխան (նախ պատահական դասավորությամբ տեղադրեք խաղալիքը և համեմատեք, որ խմբերն են շատ, քիչ):

Օրինակ՝ ցույց տվեք տարբեր գույնի և մեծության մրգեր՝ կողքին՝ մեկ պոմիդոր.

- խաղալիքներ և 1 ծաղիկ.
- հագուստի տեսակ և կաթսա.
- բանջարեղենի տեսակ և ծիրան և այլն:



☞ Դիտարկեք նկարը և ասացե՛ք.

- Արդյոք բոլոր ավտոմեքենաներն ունեն վարորդներ:
- Ավտոմեքենաներն են շա՞տ, թե՞ կենդանիները: Ասա՛՜ ավտոմեքենաները շատ են, վարորդները՝ քիչ, որքանո՞վ են շատ (քիչ). մեկով:
- Ինչո՞ւ ես այդպես մտածում, պատմի՛ր:
- Կարո՞ղ ենք ավտոմեքենաների և վարորդների քանակը հավասարեցնել (մեկ վարորդ նկարեք կամ մեկ ավտոմեքենա, ափով ծածկենք):
- Խնդրե՛ք, որ վերջին ավտոմեքենայի մեջ նկարի ցանկացած կենդանի և ասի. ավտոմեքենաներն ու վարորդները քանակով հավասար են:

● Առաջարկեք, որ երեխան ասի նաև, թե գորտիկի մեքենան ո՞ր մասում է գտնվում (առջևում):

- Սևականջիկի առջևում ո՞ւմ ավտոմեքենան է (Սկյուռիկի), իսկ նա ո՞ր մեքենաների մեջտեղում է, իսկ ո՞ւմ հետևում...

☼ Առաջարկեք երեխային երկու շարքով դասավորել նախ մեծ շրջանները, ապա՛ փոքրերը: Գունավորեք երկու գույնով, ապա պարզեք մեծ և փոքր շրջանների գրաված տեղը և ասացե՛ք. «Մեծ շրջանների շարքը երկար է, իսկ փոքր շրջանների շարքը՝ կարճ: Կարելի՞ է արդյոք ասել, որ մեծ շրջանները շատ են, փոքրերը՝ քիչ»:

Համեմատեք դրանք տարբեր ձևերով՝ աչքաչափով, իրար վրա դնելով, գծիկով իրար միացնելով: Ասացե՛ք՝ շրջանները շատ են, բայց մի մասը նարնջագույն են, մյուսները՝ կարմիր: Նարնջագույն շրջանները չնայած փոքր են, բայց շատ են, քան կարմիրները, որովհետև վերջին երկու նարնջագույն շրջանների վրա չկան կարմիր շրջաններ:

● Կարկանդակ թխելիս դրանք դրեք սեղանին երկու խմբով և հարցրեք.

- մտվ կարկանդակներն են շա՞տ, թե՞ կարտոֆիլով կարկանդակները:

Առաջարկեք համեմատել և պատմել կատարածի մասին:

☼ Ասացե՛ք՝ նկարչության դաս է: Տիկնիկներին նստեցրու սեղանի շուրջ և մեկանան թղթեր բաժանիր նրանց, ապա յուրաքանչյուր թղթի վրա դիր մեկ մատիտ:



- Թղթերն են շա՞տ, թե՞ տիկնիկները (թղթերն այնքան են, որքան տիկնիկները):

Առաջարկեք թղթերի վրա դասավորել մեկական մատիտ: Որոշե՛ք մատիտների և թղթերի քանակը (մատիտների և թղթերի հավասարությունը), ապա ասել.

● Մատիտներից մեկի ծայրը կտորվեց, և մայրիկը տարավ սրելու: Այժմ թղթերն են շա՞տ, թե՞ մատիտները, որքանո՞վ (մեկ թուղթ ավել է, մեկ մատիտ պակաս է):

☼ Տեսակավորի՛ր բանջարեղենը: Առանձնացրու դրանք տարբեր թասերի մեջ. վառունգը դիր կարմիրի, լոլիկը՝ կապույտի մեջ: Որոշիր դրանց շատ, քիչ կամ հավասար լինելը:

☺ Երեխայի հետ խաղացեք «Ով շատ մատիկ ցույց կտա» խաղը: Ասացե՛ք, երբ կլսես «շատ» ազդանշանը, ձեռքերդ թափահարիր առջևում: Նորից թաքցրու ձեռքերդ. այս անգամ «շատ» ազդանշանը լսելիս՝ բացված մատիկներդ ցույց տուր: Որպեսզի իմանանք՝ քո ցույց տված մատիկներն են շա՞տ, թե՞ ի՞նչ, եկ դրանք իրար վրա դնենք և համեմատենք: Նույն վարժությունը կատարել մեկի վերաբերյալ:





Դիտեք նկարը և ասացե՛ք, բոլոր հավիկները մեկական ձու են ածել:  
- Հավիկներն են շա՞տ, թե՞ ձվիկները (հավասար են, հավիկները այնքան են, որքան ձվիկները): Ինչպե՞ս իմացար, պատմիր:

• Նկարի այնքան անձրևաորդ, որքան հավիկ կա:  
☺ Խաղացե՛ք «Հրաշալի պարկ» խաղը: Երեխայի հետ միաժամանակ պարկի միջից մեկական խաղալիք հանեք և դասավորեք սեղանին: Դուք սեղանի աջ կողմում, երեսուն՝ ձախ: Հարցրե՛ք:  
- Պարկում որքա՞ն խաղալիք մնաց (ոչ մեկը):  
- Ո՞ւմ հանած խաղալիքներն են շատ (քիչ) կամ մի գուցե քանակով իրար հավասա՞ր են:

- Դու ի՞նչ կանեիր, որ պարզեիր, թե ո՞վ է պարկից ավելի շատ կամ քիչ խաղալիք հանել: (Չույգեր կկազմեի)  
☺ Սեղանին դրեք շատ ափսեներ, յուրաքանչյուրի մեջ՝ մեկական դեղձ: Հարցրե՛ք:  
- Ափսեներն են շա՞տ, թե՞ դեղձերը (քանակով հավասար են):

- Մեկ դեղձ կեր, ի՞նչ ստացվեց, հիմա ափսեներն են շա՞տ, թե՞ դեղձերը, որքանո՞վ են շատ (մեկով):  
• Ի՞նչ անենք, որ նորից ափսեներն ու դեղձերը քանակով հավասարվեն:


• Նույն ձևով համեմատեք դանակներն ու պատառաքաղները, պլաստմասե գավաթներն ու գդալները:  
- Ինչպե՞ս իմանանք, գդալներն են շա՞տ, թե՞ գավաթները: Հարցրե՛ք. օրինակ՝ մեկ ափսե, մեկ գդալ, և ի մեկ ափսե, մեկ գդալ... Արդյոք բոլոր գավաթների մեջ կա՞ գդալ:

- Ափսեները որքանո՞վ են շատ: Ուրեմն գդալներն այնքան են, որքան ափսեները:  
• Առաջարկեք երեխային խոհանոցից բերել շատ կաթսաներ, ապա՝ նրանց կափարիչները, հարցրե՛ք:  
- Բոլոր կաթսաներն արդյոք կափարիչներ ունե՞ն: Ասա կաթսաներն այնքան են, որքան կափարիչները, քանակով հավասար են, կարելի է ասել նաև նույնքան են:

- Ավելացրու ևս մի կաթսա և ասա. արդյո՞ք բոլոր կաթսաներն ունեն կափարիչներ, ո՞րն է շատ՝ կաթսանե՞րը, թե՞ կափարիչները, ինչպե՞ս իմացար, պատմիր:  
• Նկարը դիտելուց հետո տվեք երեխային գատիկի նկարներ և ասացե՛ք, որ յուրաքանչյուր սունկի վրա նստեցնի մեկ գատիկ և պատմի գատիկների ու սնկերի քանակի մասին (կան շատ սունկեր և շատ գատիկներ): Աշխատե՛ք, որ երեխան օգտվի «սունկերը այնքան են, որքան գատիկները» արտահայտությունից:

• Մի քանի շրջան նկարի՛ր՝ Յուրաքանչյուր շրջանի վրա մի կոճակ դիր: Որքա՞ն շրջան ունես և որքա՞ն կոճակ (հավասար են՝ այնքան կոճակ կա, որքան շրջան):  
• Վերցրու երկու գույնի խցաններ: Դասավորիր տարբեր ձևերով՝ խառը, դնելով իրար վրա, իրար դիմաց, մի շարքով և ասա՝ որն է շատ, որն է քիչ, ինչո՞ւ:

• Կանգնեք երկու շարքերով իրար դիմաց: (խմբական)  
Ո՞ր շարքի երեխաներն են շատ՝ առաջի՞ն, թե՞ երկրորդ, ինչո՞ւ (առաջինում նույնքան են, որքան երկրորդում, որովհետև յուրաքանչյուրը գույգ ունի՝ բռնել է իր հարևանի ձեռքը): Թողե՛ք ձեռքերը: Սկզբում առաջին, ապա երկրորդ շարքի երեխաները բողկանգնեն շրջանաձև: Ո՞ր շրջանի երեխաներն են շատ, քիչ: Երեխաների թիվը չի փոխվել, նույնքան են: Նորից ստուգենք մեր պատասխանը՝ ձեռքերը մեկնենք միմյանց և նորից գույգեր կազմենք: Չույգերով որևէ պար կատարենք, առանձնաձև մեկական, պտտվենք մեր շուրջը և նորից գտնենք մեր գույգը:



Արջուկները օդապարիկով գրոսնում էին երկնքում՝ ամպերի մեջ:

☞ Տե՛ս նկարը:

Փուչիկներն են շատ, թե՛ արջուկները: Ապացուցի՛ր (նրարցից յուրաքանչյուրը ամրացված է իր փուչիկին, ուրեմն քանակով հավասար են, արջուկներու այնքան են, որքան փուչիկները):

Համեմատի՛ր:

- Ո՞ր փուչիկն է մեծ (փոքր, միջին):
- Ո՞ր փուչիկի թելն է երկար (կարճ):
- Ո՞ր ծաղիկով փուչիկն է ամենաբարձրը (ցածրը):
- Ո՞ր կողմում է գտնվում ամենակարճ թելով կապված արջուկը:
- Ի՞նչ ձև ունի ձախ կողմի փուչիկը:
- Ո՞ր կողմում է գտնվում արևը:
- Ո՞ր կողմում է փոքրիկ ամպիկը:

☼ Առաջարկե՛ք երեխային անցնել սենյակներով (խաղասենյակ, ննջասենյակ, խոհանոց և այլն) և պարզե՛ր ի՞նչն է շատ (կահույք, սպասք, խաղալիքներ, միքզ, կոշիկեղեն...) և ի՞նչը՝ մեկ հատ (հեռուստացույց, գրասեղան, դաշնամուր...):

Ցույց տվե՛ք մեկ առարկա և խնդրե՛ք, որ երեխան բերի շատ առարկաներ և կապակցված ձևով պատմի առարկաների խաղալիքների քանակների մասին:

☺ Երեխայի հետ խաղացե՛ք «Ուրտե՞ղ է թաքնված խաղալիքը» խաղը: Խաղից առաջ լուցկու երեք տուփերը սոսնձե՛ք իրար: Տրամադրե՛ք փոքր խաղալիքներ (զնդիկներ, զինվորիկներ, կոճակներ...): Երեխայի հետ տարբեր դարակներում թաքցրե՛ք շատ և մեկ խաղալիքներ, հետո տուփերը կարճ ժամանակով երեխայի տեսադաշտից հեռացրե՛ք: Հետո նորից բերե՛ք և հարցրե՛ք.

- ո՞ր դարակում է թաքնված մեկ և ո՞ր դարակում՝ շատ խաղալիքներ: Հետևե՛ք, որ երեխան օգտագործի «շատ», «մեկ», «մեջ», «տուրս» բառերը:

☼ Առառարկե՛ք անվանել նույն հատկանիշն ունեցող որքան հնարավոր է շատ առարկաներ: Օրինակ՝


- ի՞նչն է լինում երկար (թելը, ժապավենը, պարանը, էլեկտրալարը, գոտին, վարագույրները, պոչը, զգեստը, մագերը...):

- Ի՞նչն է լինում շրջանաձև (քառակուսաձև, եռանկյունաձև):

- Ի՞նչն է լինում բարձր, ցածր:

- Ի՞նչն է լինում կարմիր (կանաչ, կապույտ, սպիտակ...):

• Երեխայի հետ հիշե՛ք և անվանե՛ք բանջարեղենի այնպիսի տեսակներ, որոնք աճում են հողի տակ, հողի վրա: Կարող եք անվանել տրանսպորտի տեսակներ՝ գետնի տակ աշխատող, գետնի վրա, օդային, ջրային: Հասնել նրան, որ երեխաները հասկանան, որ դրանք բոլորն էլ շատ են:



## ԱՌԱՐԿԱՆՆԵՐԻ ԽՈՒՍԱՎՈՐՈՒՄ

Դիտե՛ք նկարը և առաջարկեք գտնել առարկաների խմբեր, որոնք միացված են մի ընդհանուր հատկանիշով՝ ամանեղեն, կահույք, խաղաղիքներ, հագուստեղեն թվարկե՛ք ամանեղենի նմուշներ.

Թեյի սպասք - գույնի թեյնիկ, շաքարաման, գալիար, ափսե, թեյի գրպա

Սուրճի սպասք - սրճեփ, սուրճի բաժակ, ափսե, կաթնաման, գրպա

Ճաշի սպասք - խորր ափսե, գդալ, դսնակ, սլառատաքաղ, աղաման

Խոհանոցի ամանեղեն - կարսա, թեյնիկ, բուխա, քամի:

Կահույքի նմուշներ - պահարաններ (գրքերի, ամանեղենի), բազմոց, բազկարտներ, սեղան, արոտ, մահճակալ, խոհանոցային...

- Հագուստի նմուշներ.

● ձմեռային - մուշտակ, վերարկու, երկարաճիտ կոշիկներ, դուրյունկա և այլն:

● Ամառային - վերնաշապիկ, շրջագգեստ, բաճկոն:

● Աշնանային - անձրևանոց, կոմբինեզոն, կուրտկա և այլն:

● Տնային - սպորտային համազգեստ, գիշերանոց, խալաթ և այլն:

- Առաջարկեք երեխային գտնել առարկաներ, որոնք պատկերված են նկարի վերևի ծախ անկյունում, ներքևի աջ անկյունում և սլառման:

Ասացեք, կարելի է անվանել նաև «միրգ» և անվանել մրգի բոլոր տեսակները. «բանջարեղեն» - բանջարեղենի տեսակները:

☺ Երեխայի հետ խաղացեք «Որը որտեղ է գտնվում» խաղը: Դուք անվանեք, իսկ երեխան լրացնի մեկ բառով: Օրինակ՝ ամանեղեն - խոհանոցում, հագուստ - պահարանում, միրգ - մրգամանում և այլն:

☺ Խաղացեք «Ավելորդը» խաղը: Շարքով դասավորեք կաղամբ, սոխ, կարտոֆիլ, տանձ և պոմիդոր: Խնդրեք, որ հերթականությամբ անվանի և գտնի ավելորդը: Տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ է ավելորդը շարքում, ինչո՞ւ ես գտնում, որ այն ավելորդ է:

- Տանձն է ավելորդ, քանի որ նա միրգ է և ոչ թե բանջարեղեն, ինչպես մյուսները:

Երեխայի հետ հիշեք և անվանեք բանջարեղենի այնպիսի տեսակներ, որոնք աճում են հողի տակ, հողի վրա: Կարող եք անվանել տրանսպորտի տեսակներ: Գետնի տակ աշխատող, գետնի վրա, օդային, ջրային: Երեխայի հետ խաղացեք «Հագուստի խանութ», «Խաղաղիքի խանութ», «Կահույքի խանութ» խաղերը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	3
 <b>ՄԵԾՈՒԹՅՈՒՆ</b>	
ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ .....	7
ՄԵԾ - ՓՈՔԸ .....	9
ՄԵԾ-ՓՈՔԸ-ՄԻՋԻՆ .....	15
ՄԵԾՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՍԱՐ .....	17
ԵՐԿԱՐ-ԿԱՐՃ .....	19
ԲԱՐՉՐ-ՑԱԾՐ .....	23
ԲԱՐՉՐ-ՑԱԾՐ-ՀԱՎԱՍԱՐ .....	25
ԼԱՅՆ-ՆԵՂ .....	29
ԼԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՍԱՐ .....	37
ՀԱՍՏ-ԲԱՐԱԿ .....	39
ՀԱՍՏՈՒԹՅԱՄԲ ՀԱՎԱՍԱՐ .....	41
 <b>Չ Ե Վ</b>	
ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ .....	43
ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ .....	47
 <b>ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b>	
ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ .....	75
ԱԶ-ՉԱԽ-ԱՌԱԶ-ՀԵՏԵՎ-ՎԵՐԵՎ-ՆԵՐՔԵՎ .....	77
ԱԶ-ՉԱԽ-ՎԵՐԵՎ-ՆԵՐՔԵՎՄԵՋՏԵՂ .....	79
ԱԶ-ՉԱԽ-ԱՌԱԶ-ՀԵՏԵՎ .....	85
ՆԵՐՍ-ԴՈՒՐՍ-ՄԵՋ .....	87
ՄԵՋ-ԴՈՒՐՍ .....	89
ՎԵՐԵՎ-ՆԵՐՔԵՎ .....	91
ԱՌԱԶ-ՀԵՏԵՎ .....	95
ՎՐԱ-ՏԱԿ .....	97
 ՏԱԿ-ՎՐԱ, ՀԵՌՈՒ-ՄՈՏԻԿ .....	 99
ՄՈՏ-ՀԵՌՈՒ .....	101
ԱՌ-ՉԱԽ, ՎԵՐԵՎ-ՆԵՐՔԵՎ .....	105
ՎԵՐԵՎ-ՆԵՐՔԵՎ, ՏԱԿ-ՎՐԱ .....	107

ԲԱՐՉՐ-ՑԱԾՐ .....	109
ԺԱՄԱՆԱԿ	
ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ .....	111
ԱՌԱՎՈՏ-ԿԵՍՕՐ, ԵՐԵԿՈ-ԳԻՇԵՐ .....	113
ՇԱՐԱԹՎԱ ՕՐԵՐԸ .....	117
ԱՄԻՆԵՐԸ .....	119
ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ, ԱՇՈՒՆ-ՉՄԵՌ .....	121

ՋԱՆԱԿ	
ԽՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՆԵՐԻՆ .....	125
ՇԱՏ-ՄԵԿ, ՇԱՏ-ՔԻՉ, ՈՉ ՄԵԿԸ .....	127
ՇԱՏ ԵՎ ՄԵԿ .....	129
ՇԱՏ-ՔԻՉ .....	133
ԵՐԿՈՒ ԽՄԻԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒՄ .....	135
ՇԱՏ-ՔԻՉ .....	137
ԱՅՆՔԱՆ-ՈՐՋԱՆ .....	143
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄ .....	147

ՀՈՒՓՍԻՄԵ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
ՍՅՈՒՋԻ ԱԶԱՏԻ ՉԻՐՈՒՆՉՅԱՆ

ՆԿԱՐԻՉ՝ ԱՐԱՐԱՏ ԱՐԱՐԱՏԻ ՄԻՆԱՍՅԱՆ

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԻՄ ԱՅԲՈՒԲԵՆԸ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՉԵՌՆԱՐԿ

I ՄԱՍ

ԳՐԱՆՈՒՄՆԵՐ՝ Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ա.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ  
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՍՐԱԳԻՐ՝ Մ.ՔԻՇՈՅԱՆ  
ՀԱՄԼԿԱՐԳՉԱՅԻՆ ՇԱՐԿԱԾԵՐ՝ Վ.ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆԻ  
ՀԱՄԼԿԱՐԳՉԱՅԻՆ ՉՆՎԱԿՈՐՈՒՄԸ՝ Ն. ՄԱՄՎԵԼՅԱՆԻ



Թուրքի՝ օխտեր: Տպագրութիւնի՝ օխտեր: Ծափար՝ 60 x 84 Վա:  
Ծափար՝ 19 տպ. մանուկ:

---

Տպագրութիւնի է «ԱՆՎԱ» ՍՊԸ տպարանում:

